ՎԱՐԴԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ
ՆՈՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՕԴԱԲԱՇՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԳԱՆԳԱՏ

(գիտագործնական ձեռնարկ)



Luys Լույս®

Վարդան Պողոսյան
Նորա Սարգսյան
Հովհաննես Օդաբաշյան

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԳԱՆԳԱՏ

(գիտագործնական ձեռնարկ)

Երևան

Luys Լույս

2023

ՀՏԴ 342(07)
ԳՄԴ 67.400գ7
Պ 797

Ընդհանուր խմբագրությամբ՝ **Դավիթ Հարությունյանի**, «Լույս» հիմնադրամի գործադիր տնօրեն

Հեղինակներ՝ **Վարդան Պողոսյան,** սահմանադրագետ
Նորա Սարգսյան, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Հովհաննես Օդաբաշյան, «Լույս» հիմնադրամի իրավաբան-փորձագետ, փաստաբան

Պողոսյան Վ., Սարգսյան Ն., Օդաբաշյան Հ.
Պ 797 ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԳԱՆԳԱՏ (գիտագործնական ձեռնարկ) / Վ. Պողոսյան, Ն. Սարգսյան, Հ. Օդաբաշյան.-Եր.: «Պրոֆիլ մեդիա» ՍՊԸ, 2023.– 172 էջ:

«Սահմանադրական գանգատ» գիտագործնական ձեռնարկը ներկայացնում է Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով անհատական դիմումին ներկայացվող պահանջները, ինչպես նաև պարզաբանում է անհատական դիմումի կառուցակարգի պատշաճ իրացման հետ կապված՝ Սահմանադրական դատարանի պրակտիկայում ձևավորված մոտեցումները: Ձեռնարկում տեղ են գտել նաև սահմանադրական արդարադատության միջոցով մարդու հիմնական իրավունքների պաշտպանության առանցքային կառուցակարգի կատարելագործմանը միտված առաջարկներ՝ հիմք ընդունելով ինչպես օրենսդրական կարգավորումները, այնպես էլ Սահմանադրական դատարանի պրակտիկայի խնդրահարույց ասպեկտները: Ձեռնարկը նախատեսված է փաստաբանների, ինչպես նաև Սահմանադրական դատարանում որպես ներկայացուցիչ հանդես գալու լիազորություն ունեցող այլ անձանց համար: Այն կարող է օգտակար լինել նաև հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությամբ հետաքրքրվող անձանց, իրավաբան-ուսանողների և հետազոտողների համար:

ՀՏԴ 342(07)
ԳՄԴ 67.400գ7

ISBN 978-9939-1-1609-9

© «Պրոֆիլ մեդիա» ՍՊԸ, 2023
© «Լույս» հիմնադրամ, 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 6
ԱՌԱՋԱԲԱՆ 7

I. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԳԱՆԳԱՏԻ (ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄ) ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 11
1. Սահմանադրական գանգատի էությունը 11
2. Սահմանադրական գանգատի տեսակները 12
3. Սահմանադրական գանգատի իրավական ամրագրումը Հայաստանում 14
3.1. Սահմանադրական գանգատի ինստիտուտը 1995 և 2005 թվականների խմբագրությամբ Սահմանադրությամբ 14
3.2. Սահմանադրական գանգատը 2015 թվականի խմբագրությամբ Սահմանադրությամբ 17
3.3. Ինչո՞ւ է Հայաստանում նախատեսվել նորմատիվ սահմանադրական գանգատ 19
4. Դատարանների առաջնային դերը հիմնական իրավունքների պաշտպանության խնդրում 22
5. Իրավակիրառ պրակտիկայում նորմի մեկնաբանման Սահմանադրությանը համապատասխանության ստուգումը 24
6. Նորմի մեկնաբանման և նորմի կիրառության տարանջատման գործնական բարդությունները 26

II. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ 29
7. Անհատական դիմում ներկայացնելու իրավասություն 31
7.1. Ֆիզիկական անձինք 32
7.2. Իրավաբանական անձինք 34
8. Դատավարական գործունակություն 37
9. Դիմումի առարկան 38
9.1. «Նորմատիվ իրավական ակտ» հասկացությունը 39

9.2. «Իրավակիրառ պրակտիկայում նորմատիվ իրավական ակտին տրված մեկնաբանություն» հասկացությունը 41
9.3. Անձի նկատմամբ «կիրառված նորմատիվ իրավական ակտի» հասկացությունը 44
10. Հիմնական իրավունքի խախտման հիմնավորումը 45
11. Դատական պաշտպանության բոլոր միջոցների սպառում 50
11.1. «Կոնկրետ գործ» հասկացությունը 51
11.2. «Վերջնական դատական ակտ» հասկացությունը. 51
12. Դիմումում առաջադրված հարցերի վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշման բացակայությունը 56
13. Դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանում գործի դատաքննության բացակայությունը 60
14. Ժամկետի պահպանում 61
15. Պատշաճ դիմումը 63

III. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ 67
16. Անհատական դիմումի ներկայացումը 67
17. Անհատական դիմումի գրանցումը 70
18. Դիմումի նախնական ուսումնասիրությունը և վարույթ ընդունելը 73
19. Անհատական դիմումի քննությունը մերժելը 77
20. Վիճարկվող իրավական ակտի կամ դրույթի գործողության կասեցումը Սահմանադրական դատարանի որոշմամբ 79

IV. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ 81
21. Գործի քննության ժամկետները 81
22. Դատաքննության կարգը 82
23. Դատավարության մասնակիցները 86
24. Դիմումը հետ վերցնելը 88

25. Գործի վարույթը կասեցնելը 89
26. Գործի վարույթը կարճելը 90
27. Գործի քննության սահմանները 91

V. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ 94
28. Սահմանադրական դատարանի ըստ էության որոշումների բովանդակությունը և եզրափակիչ մասի ձևակերպումները 94
29. Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին որոշումների ուժի մեջ մտնելու պահը (ՍԴՕ 68-րդ հոդվածի 9-րդ մասի 3-րդ կետ) 100
30. Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին որոշումների իրավական հետևանքները (ՍԴՕ 68-րդ հոդվածի 9-րդ մասի 3-րդ կետ) 102
30.1. Իրավական հետևանքները այլ նորմատիվ իրավական ակտերի համար 103
30.2. Իրավական հետևանքները դատական և վարչական ակտերի համար 104
31. Ակտը Սահմանադրական դատարանի մեկնաբանությամբ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին որոշումների իրավական հետևանքները (ՍԴՕ 68-րդ հոդվածի 9-րդ մասի 2-րդ կետ) 109
32. Ակտը Սահմանադրությանը հակասող ճանաչելու ԵՎ դրա իրավական ուժը կորցնելու ավելի ուշ ժամկետ սահմանելու մասին որոշումների իրավական հետևանքները (ՍԴՕ 68-րդ հոդվածի 9-րդ մասի 4-րդ կետ) 111
33. Սահմանադրական դատարանի որոշումների իրավական հետևանքները դիմողի և այլ անձանց համար 114

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 121

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՍԴՕ	«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենք, ընդունվել է 2018թ. հունվարի 17-ին, ՀՕ-42-Ն, ՀՀՊՏ 2018. 01. 31/7 (1365), հոդ. 74
ՍԴԱ	«Սահմանադրական դատարանի աշխատակարգի մասին» Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշում, 9 հուլիսի 2018թ., ՍԴԱՈ-1-Ն, ՀՀՊՏ 2018.08.24/64(1422), հոդ. 903
ՍԴ	Սահմանադրական դատարան
ՍԴՈ	Սահմանադրական դատարանի որոշում
ՍԴԱՈ	Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշում
ՍԴԴԿՈ	Սահմանադրական դատարանի դատական կազմի որոշում

ԱՌԱՋԱԲԱՆ

2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ ներդրվեց անհատական դիմումի ինստիտուտը՝ հնարավորություն տալով ֆիզիկական և իրավաբանական անձանց Սահմանադրական դատարանում վիճարկել իրենց նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը:

2015թ. սահմանադրական փոփոխություններն ընդլայնեցին անհատական դիմումի շրջանակներում Սահմանադրական դատարան դիմելու հնարավորությունը՝ նախատեսելով ոչ միայն օրենքի, այլև ցանկացած նորմատիվ իրավական ակտի սահմանադրականությունը վիճարկելու հնարավորություն: Սահմանադրական ամրագրում ստացավ նաև նորմի կիրառման արդյունքում ձևավորված իրավակիրառ պրակտիկայի սահմանադրականությունը գնահատելու Սահմանադրական դատարանի իրավասությունը:

Անհատական դիմումը ֆիզիկական և իրավաբանական անձանց հիմնական իրավունքների և ազատությունների անմիջական գործողությունն ապահովելու և պաշտպանելու կարևորագույն կառուցակարգ և երաշխիք է: Այս կառուցա-

կարգից արդյունավետ օգտվելու և Սահմանադրական դատարանում հաջողության հասնելու համար, սակայն, անհատական դիմումը պետք է բավարարի թույլատրելիության և հիմնավորվածության օրենսդրական պահանջներին և ընթացակարգերին:

Սույն գիտագործնական ձեռնարկի նպատակն է ներկայացնել Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով անհատական դիմումին ներկայացվող պահանջները, ինչպես նաև պարզաբանել անհատական դիմումի կառուցակարգի պատշաճ իրացման հետ կապված՝ Սահմանադրական դատարանի պրակտիկայում ձևավորված մոտեցումները: Ձեռնարկում տեղ են գտել նաև սահմանադրական արդարադատության միջոցով մարդու հիմնական իրավունքների պաշտպանության առանցքային կառուցակարգի կատարելագործմանը միտված առաջարկներ՝ հիմք ընդունելով ինչպես օրենսդրական կարգավորումները, այնպես էլ Սահմանադրական դատարանի պրակտիկայի խնդրահարույց ասպեկտները:

Ձեռնարկի առաջնային շահառուն փաստաբաններն են, ինչպես նաև Սահմանադրական դատարանում որպես ներկայացուցիչ հանդես գալու լիազորություն ունեցող այլ անձինք: Ձեռնարկը կարող է օգտակար լինել նաև հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությամբ հետաքրքրվող այլ անձանց, իրավաբան-ուսանողներին և հետազոտողներին:

Ձեռնարկը բաղկացած է *վեց մասից: Առաջին մասում* ներկայացվում են անհատական դիմումի ինստիտուտի զարգացումը Հայաստանի Հանրապետությունում, դրա էությունը և գործառույթները, միջազգային պրակտիկայում առկա մոտեցումները: *Երկրորդ մասը* նվիրված է անհատական դիմումի թույլատրելիության և հիմնավորվածության պա-

հանջներին և դրանց գնահատման վերաբերյալ Սահմանադրական դատարանի ձևավորած պրակտիկային: *Երրորդ մասում* պարզաբանվում են անհատական դիմում ներկայացնելու գործական կարգին վերաբերող հարցերը, ժամկետները, ինչպես նաև դիմումի ներկայացմանը հաջորդող գործընթացները Սահմանադրական դատարանում: *Չորրորդ մասում* ներկայացվում են անհատական դիմումի քննության ժամկետները, կարգը և պարզաբանվում են Սահմանադրական դատարանում գործի քննության ընթացակարգային հարցերը: *Հինգերորդ մասում* անդրադարձ է կատարվում անհատական դիմումի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից կայացվող որոշումներին և դրանց իրավական հետևանքներին՝ ինչպես վարույթի մասնակիցների, այնպես էլ երրորդ անձանց համար: *Վեցերորդ մասում* հավելվածների տեսքով կցված են անհատական դիմումի տիպային ձև, անհատական դիմումի ներկայացման, քննության կարգի և ժամկետների վերաբերյալ գծապատկերներ, վիճակագրական տվյալներ և անհատական դիմումին վերաբերելի իրավական ակտերից քաղվածքներ:

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող այս ձեռնարկը պատրաստվել է «Լույս» հիմնադրամի աջակցությամբ, որի տեսլականն է՝ սովորել, գործել, համաստեղծել՝ ի շահ Հայաստանի Հանրապետության զարգացման:

Դավիթ Հարությունյան
«Լույս» հիմնադրամի գործադիր տնօրեն

I

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԳԱՆԳԱՏԻ (ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄ) ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԳԱՆԳԱՏԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Ի՞նչ դեր ունի սահմանադրական գանգատը։

Սահմանադրական արդարադատության առաջնային գործառույթը Սահմանադրության օբյեկտիվ պաշտպանությունն է, այսինքն՝ երկրի իրավական համակարգում բոլոր ենթասահմանադրական նորմերի համապատասխանության ապահովումը Սահմանադրությանը, քանի որ վերջինս ունի բարձրագույն իրավաբանական ուժ։ Այս գործառույթը, առաջին հերթին, իրականացվում է նորմերի սահմանադրական վերահսկո-

ղության միջոցով՝ ինչպես վերացական[1], այնպես էլ կոնկրետ[2]:

Ժամանակակից կոնստիտուցիոնալիզմը, նորմերի սահմանադրական վերահսկողության վարույթներից զատ, կարևոր նշանակություն է տալիս նաև սահմանադրական գանգատի ինստիտուտին, որի միջոցով անհատը հնարավորություն է ստանում ուղղակիորեն ստուգել հանրային իշխանության կողմից իր հիմնական իրավունքի հնարավոր խախտումը: Ի տարբերություն նորմերի վերացական և կոնկրետ վերահսկողության՝ սահմանադրական գանգատը հիմնական իրավունքների պաշտպանության այնպիսի միջոց է, որի պարագայում Սահմանադրական դատարանում խախտումը վիճարկում է հենց այն շահագրգիռ անձը, ում հիմնական իրավունքը ենթադրաբար խախտվել է:

2. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԳԱՆԳԱՏԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ի՞նչ են լրիվ և սահմանափակ գանգատները:

Հիմնական իրավունքի հասցեատերը հանրային իշխանությունն է և համապատասխանաբար՝ հիմնական իրավունքը կա-

[1] 2015թ. փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համաձայն՝ նորմերի վերացական վերահսկողության հարցով դիմող սուբյեկտներն են՝ Ազգային ժողովի պատգամավորների 1/5-ը, Կառավարությունը, Հանրապետության նախագահը և Մարդու իրավունքների պաշտպանը (168-րդ հոդվածի 1-ին մաս, 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 4-րդ, 5-րդ և 10-րդ կետեր):

[2] 2015թ. փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համաձայն՝ նորմերի կոնկրետ վերահսկողության հարցով դիմող սուբյեկտներն են՝ դատարանները և գլխավոր դատախազը (169-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետ և 4-րդ մաս):
Հարկ է նկատել նաև, որ վերացական և կոնկրետ վերահսկողության վարույթներից զատ, Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեն նաև տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց սահմանադրական իրավունքները խախտող նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով (169-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ):

րող է խախտվել միայն հանրային իշխանության կողմից: Պետական ակտը, որը կարող է անմիջականորեն առաջացնել հիմնական իրավունքների խախտում, որպես կանոն, անհատական ակտ է (օրինակ՝ դատարանի որոշում, վարչական ակտ, ռեալ ակտ[3]) և միայն առանձին դեպքերում՝ իրավական նորմ:

Այն դեպքում, երբ անձը սահմանադրական գանգատի միջոցով կարող է անմիջականորեն վիճարկել դատական ակտը, ապա գրականության մեջ խոսքը *լրիվ սահմանադրական գանգատի* մասին է: Գանգատի այս տեսակը անմիջականորեն ծառայում է անհատի պաշտպանությանը[4]:

Հնարավոր է նաև այն դեպքը, երբ չնայած անհատական ակտը իրավունքի ճիշտ կիրառման արդյունք է, սակայն, դրա հիմքում ընկած իրավական նորմը հակասում է հիմնական իրավունքին: Եթե անձը սահմանադրական գանգատի միջոցով կարող է վիճարկել միայն այդ նորմը, ապա այդ դեպքում գործ ունենք հիմնական իրավունքների *ոչ լրիվ կամ նորմատիվ սահմանադրական գանգատի*[5] հետ: Նման գանգատի պարագայում անհատի պաշտպա-

---

[3] Ռեալ ակտ է վարչական մարմինների դրսևորած արտաքին ներգործություն ունեցող այն վարքագիծը՝ գործողությունն ու անգործությունը, որն ուղղված չէ իրավական հետևանքների առաջացմանը, սակայն փաստական հետևանքներ է առաջացնում դրա հասցեատիրոջ համար: Ռեալ ակտ են, մասնավորապես, վարչական մարմինների կողմից տրված տարաբնույթ տեղեկանքները, նախազգուշացումները և այլն: Առավել մանրամասն տես Օտտո Լուխտերհանդտ, Ռյուդիգեր Ռուբել, Վոլֆգանգ Ռայմերս, Վարդան Պողոսյան, Գրիգոր Մուրադյան, Հրայր Թովմասյան, ՀՀ ընդհանուր վարչական իրավունք, Երևան, 2011, էջ 281-284:

[4] Venice Commission, Revised Report on Individual Access to Constitutional Justice, CDL-AD(2021)001, 22 February 2021, (մատչելի է https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2021)001-e հղումով), կետ 30-37:

[5] Գերմանական իրավունքում կիրառվում է «ոչ իսկական» գանգատ եզրույթը ("unechte Grundrechtsbeschwerde"), որը Վենետիկի հանձնաժողովի փաստաթղթերում թարգմանվում է որպես նորմատիվ սահմանադրական գանգատ: Venice Commission, CDL-AD(2021)001, նույն տեղում, կետ 30, հղում 27:

նությունից զատ առաջնային պլան է մղվում նաև Սահմանադրության օբյեկտիվ պաշտպանությունը, քանի որ հիմնական իրավունքները խախտող նորմը, կորցնելով իրավական ուժը, դուրս է բերվում իրավական համակարգից, ինչի արդյունքում վերականգնվում է Սահմանադրության գերակայությունը:

Բոլոր դեպքերում, սահմանադրական գանգատը, անկախ իր տարատեսակներից, ծառայում է ինչպես Սահմանադրության օբյեկտիվ, այնպես էլ անհատական իրավունքների սուբյեկտիվ պաշտպանությանը:

3. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԳԱՆԳԱՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

3.1. Սահմանադրական գանգատի ինստիտուտը 1995 և 2005 թվականների խմբագրությամբ Սահմանադրությամբ

Ե՞րբ Հայաստանում թույլատրվեց սահմանադրական գանգատը:

Հայաստանի 1995թ. խմբագրությամբ Սահմանադրությունը[6] սահմանադրական գանգատի ինստիտուտ չէր նախատեսում[7]:

Սահմանադրական գանգատն առաջին անգամ սահմանադրական ամրագրում ստացավ 2005թ. սահմանադրական փոփոխությունների[8] արդյունքում[9]:

---

6 Ընդունվել է 1995 թ. հուլիսի 5-ին՝ համաժողովրդական հանրաքվեով:

7 Այդուհանդերձ, սահմանադրական գանգատի ինստիտուտ ներդնելու բազմաթիվ առաջարկներ են արվել:

8 Սահմանադրության փոփոխությունները կատարվել են 2005 թ. նոյեմբերի 27-ի ՀՀ հանրաքվեով, ՀՀՊՏ 2005.12.05/ հատուկ թողարկում, հոդ. 1426:

9 Վ. Պողոսյան, Հ. Թովմասյան, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագիծը. համառոտ պարզաբա-

2005թ. խմբագրությամբ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով սահմանվեց, որ Սահմանադրական դատարան կարող է դիմել «*յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը*»:

Վերոհիշյալ սահմանադրական նորմից ակնհայտ է, որ ***Հայաստանի Հանրապետությունում ներդրվել է ոչ թե ամբողջական, այլ ոչ լրիվ կամ նորմատիվ սահմանադրական գանգատի ինստիտուտը,*** քանի որ սահմանադրական կարգավորման համաձայն վիճարկվում է «*կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը*»: Դա, մասնավորապես, նշանակում է, որ թեև սահմանադրական գանգատը կապված է կոնկրետ գործի հետ, սակայն այն կարող է վերաբերել միայն դատական ակտի հիմքում ընկած նորմատիվ իրավական ակտի կամ դրա որևէ դրույթի և ոչ թե դատական ակտի սահմանադրականությանը:

«Սահմանադրական դատարանի մասին» 2006թ. օրենքը[10] սահմանադրական գանգատի վարույթը կարգավորեց 69-րդ հոդվածում՝ տալով դրան «*անհատական դիմում*» անվանումը[11]:

«Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն «իրավական ակտի սահմա-

---

նումներ, Երևան, 2005, էջ 101-102:

[10] Ընդունվել է Ազգային ժողովի կողմից 2006թ. հունիսի 1-ին, ՀՕ-58-Ն,ՀՀՊՏ 2006.06.21/32(487), հոդ. 645, ուժը կորցրել է 2018թ. ապրիլի 9-ին:

[11] Միջազգային պրակտիկայում կիրառվում են սահմանադրական գանգատ (constitutional complaint) և անհատական սահմանադրական գանգատ (individual constitutional complaint) հասկացությունները: ՀՀ Սահմանադրական դատարանը ևս, «անհատական դիմում» եզրույթից բացի, իր որոշումներում օգտագործում է նաև «անհատական սահմանադրական դիմում (գանգատ)» հասկացությունը: Սույն ձեռնարկում փոխարինաբար օգտագործվում են ինչպես «անհատական դիմում», այնպես էլ «սահմանադրական գանգատ» հասկացությունները:

նադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանը գնահատում էր ինչպես այդ ակտը, այնպես էլ ձևավորված իրավակիրառական պրակտիկան»[12], ինչը նշանակում էր, որ Սահմանադրական դատարանը սահմանադրական գանգատների վարույթում, ըստ էության, անդրադառնում էր նաև դատարանների կողմից տվյալ նորմին տրված մեկնաբանության սահմանադրականությանը:

«Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասում 2011թ. կատարվեց լրացում[13], որով Սահմանադրական դատարանին իրավունք վերապահվեց օրենքի դրույթը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու դեպքում միաժամանակ որոշել, որ օրենքի դրույթը դիմողի նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ: Դա հնարավորություն էր տալիս դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի հիմքով վերանայելու համար: Օրենսդիրը, այսպիսով, «օրենքի դրույթի սահմանադրականություն» եզրույթին տվեց լայն մեկնաբանություն՝ դրա տակ ներառելով ոչ միայն նորմի ինքնին սահմանադրականությունը, այլ նաև նորմի սահմանադրաիրավական բովանդակությանը հակասող մեկնաբանությունը:

---

12 Նման դրույթ առկա էր նաև «Սահմանադրական դատարանի մասին» առաջին օրենքի (ընդունվել է 20.11.1995., ՀՕ-19 ՀՀԱԺՏ 1995/9) 67-րդ հոդվածի 1-ին մասում:

13 Ընդունվել է 2011թ. հոկտեմբերի 26-ին, ՀՕ-268-Ն, ՀՀՊՏ 2011.11.11/61(864), հոդ. 1547:

3.2. Սահմանադրական գանգատը 2015 թվականի խմբագրությամբ Սահմանադրությամբ

Ի՞նչ փոփոխություն կրեց սահմանադրական գանգատը 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ:

2015թ. փոփոխություններով Սահմանադրությունը[14] պահպանել է դեռևս 2005թ. փոփոխություններով նախատեսված ոչ լրիվ կամ նորմատիվ սահմանադրական գանգատի ինստիտուտը:

Անհատական դիմումի սահմանադրաիրավական հիմքը Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետն է.

<u>Սահմանադրական դատարան կարող է դիմել.</u>

- ✓ *յուրաքանչյուր ոք,*
- ✓ *կոնկրետ գործով,*
- ✓ *երբ՝*
  - *առկա է դատարանի վերջնական ակտը,*
  - *սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և*
  - *վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը,*
- ✓ *ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:*

[14] Ընդունվել է հանրաքվեով 2015թ. դեկտեմբերի 6-ին, ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկթողարկում, հոդ. 1118:

2015թ. փոփոխություններով Սահմանադրությունը ընդլայնել է անհատական դիմումի (սահմանադրական գանգատ) շրջանակներում Սահմանադրական դատարան դիմելու հնարավորությունը՝ նախատեսելով այն ոչ միայն օրենքի, այլև ցանկացած նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցով, եթե դրանով խախտվել են մարդու հիմնական իրավունքները և ազատությունները (հոդված 169, մաս 1, կետ 8)15:

2015թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում 2006թ. «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի այդ դրույթը, որը Սահմանադրական դատարանին իրավասություն էր վերապահում գնահատել նաև նորմի կիրառման արդյունքում ձևավորված իրավակիրառական պրակտիկան, սահմանադրական ամրագրում ձեռք բերեց: Դրանով վերջակետ դրվեց նաև օրենքի այդ նորմի սահմանադրականության վերաբերյալ բանավեճերին[16]:

2015թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում 2018թ. հունվարի 17-ին ընդունվեց «Սահմանադրական դատարանի մասին» օրենքը[17] (այսուհետ՝ ՍԴՕ), որին վերապահված է սահմանադրական օրենքի կարգավիճակ[18]: ՍԴՕ 69-րդ հոդվածը սահմանում է անհատական դիմումի վարույթի քննության և լուծման առանձնահատկությունները:

---

15 Վ. Պողոսյան, Ն. Սարգսյան, Հայաստանի Հանրապետության 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը. համառոտ պարզաբանումներ, Երևան, 2016, էջ 140:

16 Այս մասին առավել մանրամասն տես բաժին I, մաս 5:

17 ՀՕ-42-Ն, ՀՀՊՏ 2018.01.31/7(1365), հոդ. 74:

18 Սահմանադրություն, հոդված 103, մաս 2:

3.3. Ինչո՞ւ է Հայաստանում նախատեսվել նորմատիվ սահմանադրական գանգատ

Արդյո՞ք Սահմանադրական դատարանը 4-րդ՝ վերանայող ատյան է:

2015թ. սահմանադրական փոփոխությունների ընթացքում սահմանադրական հանձնաժողովը որոշեց պահպանել նորմատիվ սահմանադրական գանգատը և չգնալ «լրիվ» սահմանադրական գանգատի ճանապարհով: Նման որոշման համար վճռորոշ նշանակություն ունեցավ այն հանգամանքը, որ շատ դժվար է հստակ սահման դնել սովորական իրավունքի և սահմանադրական իրավունքի խախտման միջև, ինչի հետևանքով գրեթե անխուսափելի են իրավական բախումները Սահմանադրական դատարանի և Վճռաբեկ դատարանի միջև: Փոխարենը, ինչպես արդեն վերը նշվեց, Սահմանադրության տեքստը 2015թ. հարստացվեց մի նոր դրույթով, որով նորմատիվ իրավական ակտի սահմանադրականությունը գնահատելիս Սահմանադրական դատարանը պետք է հաշվի առնի նաև այն, թե ինչպես է նորմը մեկնաբանվել իրավակիրառ պրակտիկայում՝ կոնկրետ գործով:

Այլ կերպ ասած՝ սահմանադրական հանձնաժողովը սահմանադրական գանգատը դիտարկել է որպես ընդհանուր-վերացական ակտերի, այլ ոչ թե կոնկրետ-անհատական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանեցնելու միջոց: Սահմանադրական հանձնաժողովը ցանկություն չի ունեցել ստեղծել դատական ակտերը վերանայող մի նոր՝ 4-րդ սուպերռևիզիոն ատյան, որը իրավունք կունենար վերացնելու Վճռաբեկ դատարանի այն որոշումները,

որոնք ենթասահմանադրական[19] իրավունքի խախտման արդյունք են: Սահմանադրական գանգատի ելակետն այն է, որ Սահմանադրական դատարանը պետք է ապահովի նորմատիվ իրավական ակտերի համակարգում Սահմանադրության գերակայությունը, իսկ Սահմանադրությանը համապատասխանող օրենքների սխալ կիրառության դեպքում այդ սխալների ուղղման առաքելությունը պետք է իրականացնեն ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանները:

Սահմանադրական գանգատը ոչ թե նպատակ է հետապնդում յուրաքանչյուր առանձին դեպքում երաշխավորելու հիմնական իրավունքների համապարփակ պաշտպանությունը, այլ վերացնելու այն հակասահմանադրական նորմերը, որոնք դատարանները կիրառել են ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ, կամ վեր հանելու սահմանադրական նորմերի՝ Սահմանադրությանը չհամապատասխանող մեկնաբանությունը: Հայաստանի սահմանադրական գանգատը անհատական պաշտպանության և Սահմանադրության օբյեկտիվ պաշտպանության կոմբինացիա է:

Սահմանադրական գանգատի՝ նման հայեցակարգը սահմանադրական դատարանին հատկապես ազատում է սուպերռևիզիոն դատարանի մեղադրանքից[20]: Քանի որ Հայաստանի սահմանադրական գանգատը, ըստ էության, հանգեցնում է նորմերի վերահսկողության վարույթի, որտեղ որոշվում է կիրառված նորմի կամ դրա մեկնաբանության սահմանադրականության խնդիրը, նորմի սահմանադրականության պարզման առումով Սահմանադրական

[19] Այն է՝ բացի Սահմանադրությունից՝ մյուս նորմատիվ իրավական ակտերը:

[20] Նման մեղադրանք հաճախ ուղղվում է, մասնավորապես, Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարանի հասցեին, որը լրիվ սահմանադրական գանգատի դասական օրինակ է:

դատարանի և Վճռաբեկ դատարանի միջև գործառույթների սահմանազատումը հստակ է. Վճռաբեկ դատարանը պարտավոր է ստուգել վիճարկվող դատական ակտով կիրառված նորմի համապատասխանությունը հիմնական իրավունքներին, իսկ Սահմանադրական դատարանը այդ հարցով կայացնում է վերջնական որոշում՝ վեճի առարկա նորմը ճանաչելով սահմանադրական կամ հակասահմանադրական[21]:

Այսպիսով, հիմնական իրավունքները խախտող նորմատիվ ակտերի վերացման իրավասությունը Սահմանադրությունը վերապահում է բացառապես Սահմանադրական դատարանին՝ միևնույն ժամանակ մնացած բոլոր դատարանների վրա դնելով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտերի ստուգման պարտականություն[22]: Այդուհանդերձ, Սահմանադրական դատարանի և Վճռաբեկ դատարանի միջև գործնական բարդություններ կարող են առաջանալ այն դեպքերում, երբ Սահմանադրական դատարանը սահմանադրական գանգատի միջոցով իրեն ստուգման ներկայացված իրավական նորմը համարի «ինքնին» Սահմանադրությանը համապատասխան, սակայն հակասահմանադրական ճանաչի դրա մեկնաբանումն ու կիրառումը Վճռաբեկ դատարանի կողմից[23]: Նման իրավիճակներ, սակայն, հնարավոր են սահմանադրական գանգատի ցանկացած տարատեսակի պարագայում:

Սահմանադրական գանգատի միջոցով դատական ակտերը կարող են վիճարկվել միայն անուղղակիորեն՝ հետևյալ երկու դեպքում.

---

21 Այս մասին տես ստորև, մաս 5՝ Իրավակիրառ պրակտիկայում նորմի մեկնաբանման Սահմանադրությանը համապատասխանության ստուգումը:

22 Այս մասին տես ստորև, մաս 4՝ Դատարանների առաջնային դերը հիմնական իրավունքների պաշտպանության խնդրում:

23 Այս մասին տես ստորև, մաս 6՝ Նորմի մեկնաբանման և նորմի կիրառության տարանջատման գործնական բարդությունները:

- կիրառված նորմը ինքնին հակասահմանադրական է,
- կիրառված նորմը ինքնին սահմանադրական է, սակայն կիրառվել է Սահմանադրությանը հակասող մեկնաբանությամբ:

Այսպիսով, սահմանադրական գանգատը հիմնական իրավունքների պաշտպանության սուբսիդիար միջոց է և լրացնում է դատական պաշտպանության Սահմանադրության 61-րդ հոդվածով ամրագրված հիմնական իրավունքը[24]:

4. ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԴԵՐԸ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴՐՈՒՄ

Ի՞նչ դեր ունեն դատարանները հիմնական իրավունքների պաշտպանության հարցում:

Այն հանգամանքը, որ երկրի իրավական համակարգը չի նախատեսում դատական ակտերի դեմ սահմանադրական գանգատի հնարավորություն, դեռ չի նշանակում, որ այդ երկրի իրավական համակարգում դատական ակտերի սահմանադրականության ստուգման առումով առկա է բաց: Հայաստանի Սահմանադրության համաձայն՝ բոլոր դատարանները[25] (Վճռաբեկ դատարանը, վերաքննիչ դատարանները, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները, մասնագիտացված դատարանները) պարտավոր են իրավունքի նորմերը կիրառել Սահմանադրությանը և դրան համապատասխանող

[24] Այս մասին տես նաև բաժին IV, մաս 27՝ Գործի քննության սահմանները:

[25] Սույն ձեռնարկում «դատարան» եզրույթը կիրառվում է Վճռաբեկ դատարանի, վերաքննիչ դատարանների, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների և մասնագիտացված դատարանների պարագայում:

օրենքներին խստիվ համապատասխան, իսկ վերադաս ատյանները (Վճռաբեկ դատարանը և վերաքննիչ դատարանները) կարող են և պարտավոր են վերացնել այն դատական ակտերը, որոնք կիրառվել են՝ խախտելով Սահմանադրությունը և օրենքները:

Եթե հիմնական իրավունքները խախտվում են օրենքների ոտնահարման արդյունքում, ապա դատարանները օժտված են բոլոր լիազորություններով՝ վերացնելու օրենքներին հակասող դատական ակտերը[26]: Սահմանադրական դատարանը նման դեպքերում որևէ իրավասություն չունի: Բայց, եթե դատական ակտի հիմքում ընկած է հակասահմանադրական նորմը, ապա միայն Սահմանադրական դատարանին է վերապահված նման նորմերի՝ իրավական համակարգից դուրս բերելու իրավասությունը:

Հակասահմանադրական նորմատիվ իրավական ակտերի վերացման Սահմանադրական դատարանի մենաշնորհը չի նշանակում, որ դատարանները չունեն նորմերի սահմանադրականության ստուգման լիազորություն: Սահմանադրության մեկնաբանումը բոլոր պետական մարմինների պարտականությունն է՝ օրենսդրի, գործադրի և բնականաբար՝ դատարանների[27], ինչն ուղղակիորեն ամրագրված է Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասում:

Դատարանները պարտավոր են որևէ ենթասահմանադրական նորմ կիրառելիս ստուգել այդ նորմի սահմա-

---

26 «Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի ուժով մարդու հատկապես հիմնական իրավունքները և ազատություններն են անմիջականորեն ենթակա դատական պաշտպանության, հետևապես՝ ոչ միայն Վճռաբեկ, այլև *բոլոր դատարաններն են պարտավոր առաջին հերթին պաշտպանելու* մարդու հենց հիմնական իրավունքները և ազատությունները, իսկ դա *հնարավոր չէ առանց այդ իրավունքները և ազատություններն ամրագրող Սահմանադրության դրույթների մեկնաբանության և կիրառման» (ընդգծումները Սահմանադրական դատարանինն են)*, 2019թ. հունվարի 25-ի ՍԴԱՈ-7, կետ 4.7:

27 Նույն տեղում, կետ 4.8:

նադրականությունը, այսինքն՝ նրանք պարտավոր են հաշվի առնել սահմանադրական իրավունքի ներգործությունը սովորական իրավունքի վրա:

Սահմանադրական գանգատի ճանապարհով հիմնական իրավունքների պաշտպանության նախապայմանը մյուս բոլոր դատարանների գոյությունն է, որոնք հարգում և պաշտպանում են հիմնական իրավունքները, և որոնք պարտավոր են հոգ տանել, որ հիմնական իրավունքների խախտումները վերացվեն առանց Սահմանադրական դատարան դիմելու: Այսինքն՝ հիմնական իրավունքների պահպանումը և իրագործումը, առաջին հերթին, սովորական դատարանների պարտականությունն է: Հիմնական իրավունքների առաջնային պաշտպանության այդ գործառույթը պաշտպանելու համար է նաև սահմանված, որ սահմանադրական գանգատով Սահմանադրական դատարան դիմելու նախապայմանը դատական պաշտպանության բոլոր միջոցների սպառումն է[28]:

5. ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ ՆՈՐՄԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ

Սահմանադրական դատարանի կողմից օրենքի նորմի սահմանադրականության բացահայտումը կարող է դեռևս բավարար երաշխիք չլինել հիմնական իրավունքի պաշտպանության համար, եթե իրա-

Ի՞նչ պաշտպանության միջոց է առկա, երբ նորմի գործնականում կիրառումն է հակասահմանադրական:

[28] Այս մասին տես բաժին II, մաս 11՝ Դատական պաշտպանության բոլոր միջոցների սպառում:

վակիրառ պրակտիկայում այդ նորմը ստանում է Սահմանադրությանը հակասող մեկնաբանություն: Ուստի, հիմնական իրավունքի պաշտպանության լիարժեքության տեսանկյունից անհրաժեշտ է նաև, որպեսզի Սահմանադրական դատարանը իրավասու լինի ստուգելու նաև նորմի մեկնաբանման համապատասխանությունը Սահմանադրությանը:

Արդյունքում, սահմանադրական գանգատի միջոցով ապահովված է ինչպես օրենքի նորմի, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության սահմանադրականությունը: Մինչդեռ, այն, որ Հայաստանում բացակայում է դատական վճիռների դեմ սահմանադրական գանգատը, նշանակում է միայն, որ Վճռաբեկ դատարանից բացի չկա մեկ այլ դատական ատյան, որը ստուգում է իրավունքի կիրառության այն սխալները, որոնք կապված չեն սահմանադրականության հետ: Այլ կերպ ասած, եթե նորմը ինքնին սահմանադրական է, ապա Վճռաբեկ դատարանը իրավասու է ինքը ուղղելու մյուս դատարանների թույլ տված իրավունքի կիրառման սխալները: Եթե նորմի և նորմի մեկնաբանման հակասահմանադրականությունը վերացնելուց զատ Սահմանադրական դատարանն ունենա նաև իրավունքի կիրառության ցանկացած այլ սխալների ուղղման իրավունք, ապա նման դեպքերում այն կդառնա պարզապես դատական չորրորդ, սուպերռևիզիոն ատյան[29]:

[29] Այս մասին առավել մանրամասն տես բաժին I, մաս 3.3՝ Ի՞նչու է Հայաստանում նախատեսվել նորմատիվ սահմանադրական գանգատ:

6. ՆՈՐՄԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ԵՎ ՆՈՐՄԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՆՋԱՏՄԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ի՞նչ գործնական խնդիրներ կարող է առաջացնել սահմանադրական գանգատի հայկական մոդելը:

Հաշվի առնելով, որ Հայաստանում սահմանադրական գանգատն ուղղված է նորմի կամ նորմի մեկնաբանման սահմանադրականությունը պարզելուն, թվում է, թե ի տարբերություն «լրիվ» սահմանադրական գանգատի, հայկական սահմանադրական գանգատի պարագայում գործնական բարդություններ չեն կարող առաջանալ: Բայց խնդիրն այդքան էլ պարզ չէ. շատ դեպքերում բավականին բարդ է հստակ տարանջատել, թե որտե՞ղ է ավարտվում նորմի մեկնաբանությունը և սկսվում դրա կիրառությունը և արդյո՞ք նորմի ցանկացած սխալ կիրառություն պետք է դիտվի որպես նորմի սխալ մեկնաբանություն: Բացի այդ, յուրաքանչյուր պարագայում Սահմանադրական դատարանը պետք է պարզի, թե ո՞ր դեպքում է նորմի սխալ մեկնաբանումը հանգեցրել հիմնական իրավունքի, այսինքն՝ Սահմանադրության, խախտմանը, իսկ որ դեպքում՝ միայն օրենքի խախտման[30]:

Տեսականորեն և գործնականում հնարավոր է, որ չափազանց ակտիվ Սահմանադրական դատարանը ընդլայնի գործի քննության շրջանակները՝ ըստ էության հասնելով դատական ակտերի դեմ բերվող սահմանադրական գանգատի ծավալներին: Նման ճանապարհը, սակայն, չի կարող արդյունավետ լինել: Բացի այն, որ դա ուղղակիորեն կհակասի սահմանադրի նպատակներին, այն Սահմա-

[30] Այս մասին առավել մանրամասն տես նաև բաժին IV, մաս 27՝ Գործի քննության սահմանները:

նադրական դատարանին կարող է վերածել սուպերռևիզիոն դատարանի:

Հայտնի է, որ անգամ Գերմանիայում դատարանների վճիռների դեմ սահմանադրական գանգատների պարագայում Դաշնային Սահմանադրական դատարանը չի գնում 4-րդ ռևիզիոն ատյանի ճանապարհով, այլ ելնում է այն բանից, որ Սահմանադրական դատարանը պետք է քննության առնի միայն այնպիսի գանգատները, որոնք անմիջականորեն վերաբերում են Սահմանադրությանը, այսպես կոչված՝ «սպեցիֆիկ սահմանադրական իրավունքին»: Գերմանիայի պարագայում խոսքը սահմանադրական գանգատի քննության ծավալների սահմանափակման մասին է, հատկապես, այսպես կոչված Հեքի[31] և Ծումանի[32] ֆորմուլանե-

[31] Դաշնային սահմանադրական դատարանի դատավոր Կառլ Հեքի այդ բանաձևը ձևակերպվել է Դաշնային սահմանադրական դատարանի 1964թ. հունիսի 10-ի որոշման մեջ. «Վարույթի ձևավորումը, փաստերի որոշումն ու գնահատումը, սովորական իրավունքի մեկնաբանումը և դրա կիրառումը առանձին գործի նկատմամբ բացառապես ընդհանուր իրավասություն ունեցող դատարանների գործն են և ենթակա չեն Դաշնային սահմանադրական դատարանի վերանայմանը: Դաշնային սահմանադրական դատարանը՝ ի պատասխան սահմանադրական գանգատի, կարող է միջամտել միայն դատարանների կողմից սպեցիֆիկ սահմանադրական իրավունքի խախտման դեպքում» (BVerfG, Beschluss vom 10. Juni 1964-1 BvR 37/63=BVerfGE 18, 85, 92): Թե ո՞րն է սպեցիֆիկ սահմանադրական իրավունքը, և ինչպե՞ս այն տարբերակել սովորական սահմանադրական իրավունքից, բնականաբար, հստակ չէ, և գերմանական գրականությունում մինչև այժմ շարունակվում են տարակերպ մեկնաբանությունները և քննարկումներն առ այն, թե ինչքանով է այն օգտակար:

[32] Պրոֆ. Էկեհարդ Ծումանը 1963թ. առաջարկել է մի բանաձև այն դեպքերի համար, երբ վիճարկման առարկա դատական ակտը չի հիմնվում հակասահմանադրական օրենքի վրա և զուտ այդ պատճառով հակասահմանադրական չէ: Նման դեպքերում խոսքը վերաբերում է նորմի սխալ, այն է՝ հակասահմանադրական մեկնաբանությանը: Ըստ նրա բանաձևի՝ «մեկնաբանության վերաբերյալ սահմանադրական գանգատը կպսակվի հաջողությամբ, եթե վիճարկվող որոշման մեջ ներկայացված իրավական դիրքորոշումը վերածենք օրենքի [կամ պատկերացնենք որպես օրենք], այն կհակասի Հիմնական օրենքին» (Ekkehard Schumann, Verfassungs- und Menschenrechtsbeschwerde gegen richterliche Entscheidungen, 1963, 334):

րի միջոցով: Նորմի սահմանադրականությունը քննելիս Սահմանադրական դատարանը միշտ առնչվում է առնվազն երկու սկզբունքային խնդիրների հետ: Առաջին՝ տվյալ գործով դատարանի կողմից օրենքի սխալ կիրառությունը պարզապես դատական սխալի՞, թե՞ նաև այդ օրենքի սխալ մեկնաբանման արդյունք է: Երկրորդ՝ արդյո՞ք օրենքի սխալ մեկնաբանությունը հակասում է միայն օրենքին, թե՞ նաև Սահմանադրությանը: Այս հարցերը չունեն միանշանակ, մեկընդմիշտ սահմանված լուծումներ բոլոր դեպքերի համար: Մեթոդապես ճիշտ մոտեցումը թերևս այն է, որ որպես սխալ մեկնաբանություն դիտարկվեն միայն այն դեպքերը, որոնք հնարավոր են ընդհանրացնել և ձևակերպել որպես ընդհանուր վերացական ակտ[33]: Վերջին մոտեցումը, որը համապատասխանում է Ծումանի բանաձևին, շատ ավելի համահունչ կլինի Հայաստանի սահմանադրական գանգատի բնույթին:

[33] Այս մասին առավել մանրամասն տես նաև բաժին IV, մաս 27՝ Գործի քննության սահմանները:

II

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ի՞նչ պահանջների պետք է բավարարի անհատական դիմումը:

Սահմանադրական գանգատը բավարարվում է, եթե այն թույլատրելի է և հիմնավորված: Ուստի անհատական դիմումի քննությունը Սահմանադրական դատարանում բաժանվում է երկու հիմնական փուլի: Առաջին փուլի ընթացքում Սահմանադրական դատարանը պետք է ստուգի դիմումի ***թույլատրելիության*** նախապայմանների առկայությունը, իսկ երկրորդ փուլի ընթացքում՝ դիմումի ***հիմնավորվածությունը***:

Թույլատրելիության նախապայմանները Սահմանադրությամբ և ՍԴՕ-ով սահմանված այն պայմաններն են, որոնք պետք է առկա լինեն, որպեսզի հնարավոր լինի որոշում կայացնել անհատական դիմումը ընդունելու վերաբերյալ: Սահմանադրական դատարանը գործը պետք է ընդունի քննության և անցնի դիմումի բովանդակային մասի՝ հիմնա-

վորվածության ստուգմանը միայն այն դեպքում, երբ առկա են դիմումի թույլատրելիության բոլոր նախապայմանները: Այդ նախապայմաններից անգամ մեկի բացակայության դեպքում Սահմանադրական դատարանը պետք է կայացնի գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում (ՍԴՕ 29-րդ հոդված)[34]: Սահմանադրական դատարանը, այդուհանդերձ, իր որոշումներում հստակ տարանջատում չի դնում թույլատրելիության և հիմնավորվածության միջև: Արդյունքում, Սահմանադրական դատարանը գործնականում՝ գործը քննության ընդունելուց հետո հաճախ կարճում է դատաքննությունը այնպիսի հիմքերով, որոնք պետք է նախօրոք պարզված լինեին դիմումի թույլատրելիության գնահատման շրջանակում[35]:

Հիմք ընդունելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, ՍԴՕ 69-րդ հոդվածը սահմանում է անհատական դիմումի թույլատրելիության հիմնական նախապայմանները: Բացի այդ, անհատական դիմումի թույլատրելիության ընդհանուր նախապայմաններ են սահմանված Սահմանադրական դատարան դիմելու կարգին նվիրված ՍԴՕ 4-րդ գլխում:

Անհատական դիմումի թույլատրելիության համար պետք է բավարարված լինեն հետևյալ նախապայմանները՝

- դիմում ներկայացնելու իրավասություն (բաժին II, մաս 7),
- դատավարական գործունակություն (բաժին II, մաս 8),
- դիմումի առարկա (բաժին II, մաս 9),

[34] Այս մասին տես բաժին III, մաս 18՝ Դիմումի նախնական ուսումնասիրությունը և վարույթ ընդունելը և մաս 19՝ Անհատական դիմումի քննությունը մերժելը:

[35] Այս մասին տես նաև բաժին IV, մաս 26՝ Գործի վարույթը կարճելը:

- հիմնական իրավունքի խախտման հիմնավորում (բաժին II, մաս 10),
- դատական պաշտպանության միջոցների սպառում (բաժին II, մաս 11),
- դիմումում առաջադրված հարցերի վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշման բացակայություն (բաժին II, մաս 12),
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանում գործի դատաքննության բացակայություն (բաժին II, մաս 13),
- ժամկետի պահպանում (բաժին II, մաս 14),
- պատշաճ դիմում (բաժին II, մաս 15):

7. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ

Ո՞վ կարող է անհատական դիմում ներկայացնել:

Անհատական դիմում ներկայացնելու իրավունքը Սահմանադրությունը փոխկապակցում է հիմնական իրավունքներ և ազատություններ ունենալու (հիմնական իրավունքների կրող լինելու) հանգամանքի հետ: Նման մոտեցումը տրամաբանական է, քանի որ անհատական դիմումի առաջնային նպատակը անձի՝ իր խախտված հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանություն ապահովելն է:

Քանի որ Սահմանադրությամբ նախատեսված հիմնական իրավունքները և ազատությունները որոշակի բացառություններով տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա (Սահմանադրություն, հոդված 74), ՍԴՕ օրենքի

23-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Սահմանադրական դատարան կարող են դիմել նաև իրավաբանական անձինք՝ Սահմանադրության 74-րդ հոդվածին համապատասխան: ՍԴՕ 69-րդ հոդվածի 1-ին մասը, իր հերթին, ուղղակիորեն ամրագրում է անհատական դիմում ներկայացնելու իրավաբանական անձանց իրավունքը:

7.1. Ֆիզիկական անձինք

Որպեսզի ֆիզիկական անձը ունենա անհատական դիմում ներկայացնելու իրավասություն (*դատավարական իրավունակություն*), նա պետք է լինի այն հիմնական իրավունքի կրողը, որի ենթադրյալ խախտումը վկայակոչում է անհատական դիմումում:

Սահմանադրության 2-րդ գլխով ամրագրված հիմնական իրավունքները, ըստ սուբյեկտային կազմի, բաժանվում են 2 հիմնական խմբի: Առաջին՝ մարդու իրավունքներ, որոնց սուբյեկտ (կրող) կարող են լինել բոլորը՝ ՀՀ քաղաքացիները, այլ երկրների քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք: Երկրորդ՝ քաղաքացու իրավունքներ, որոնց սուբյեկտ (կրող) են հանդիսանում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

Տարբերակելու համար՝ արդյո՞ք հիմնական իրավունքի կրող են «բոլորը», թե՞ միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացին, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հիմնական իրավունքը սահմանող նորմի տեքստին: Այն դեպքում, երբ հիմնական իրավունքի կրող են հանդիսանում «բոլորը», Սահմանադրության նորմի տեքստում օգտագործվում է *«յուրաքանչյուր ոք»*, *«ոչ ոք»* կամ *«բոլորը»* եզրույթը:

Օրինակ՝

- ***Յուրաքանչյուր ոք*** *ունի կյանքի իրավունք (Սահմանադրություն, հոդված 24, մաս 1):*
- ***Ոչ ոք*** *չի կարող կամայականորեն զրկվել կյանքից (Սահմանադրություն, հոդված 24, մաս 1):*
- ***Բոլորը*** *հավասար են օրենքի առջև (Սահմանադրություն, հոդված 8):*

Հիմնական իրավունքը սահմանող նորմում դրա սուբյեկտի (կրողի) վերաբերյալ նշված չլինելը ևս վկայում է այն մասին, որ դա բոլորի իրավունքն է:

Օրինակ՝

Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է (Սահմանադրություն, հոդված 29):

Ի տարբերություն «բոլորի» իրավունքի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար սահմանված հիմնական իրավունքների համար սահմանադիրն օգտագործել է *«յուրաքանչյուր քաղաքացի» կամ «Հայաստանի Հանրապետության քաղաքացի»* ձևակերպումները:

Օրինակ՝

- ***Յուրաքանչյուր քաղաքացի*** *ունի այլ քաղաքացիների հետ կուսակցություն ստեղծելու և որևէ կուսակցության անդամագրվելու իրավունք (հոդված 46, մաս 1):*
- *Ազգային ժողովի ընտրության կամ հանրաքվեի օրը տասնութ տարին լրացած* ***Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն*** *ունեն ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունք (հոդված 48, մաս 1):*

Կան նաև առանձին հիմնական իրավունքներ, որոնք ի սկզբանե չեն վերաբերում յուրաքանչյուր մարդու և այդ պարագայում՝ հնարավոր իրավազորների շրջանակը տարբերակվում է լրացուցիչ հատկանիշների միջոցով: Օրինակ՝ Սահմանադրության 36-րդ հոդվածով սահմանված ծնողների իրավունքները և պարտականությունները ի սկզբանե պատկանում են ոչ թե բոլորին, այլ միայն այն անձանց, որոնք ձեռք են բերել լրացուցիչ հատկանիշ՝ դարձել են ծնող:

Հիմնական իրավունքներ ունենալու ունակությունը, որպես կանոն, սկսվում է անձի ծննդյան պահից և ավարտվում նրա մահվամբ:

7.2. Իրավաբանական անձինք

Սահմանադրությունը ֆիզիկական անձանց համար սահմանված հիմնական իրավունքները և ազատությունները տարածում է նաև իրավաբանական անձանց վրա՝ այնքանով, որքանով այդ իրա-

Իրավաբանական անձինք կարո՞ղ են անհատական դիմում ներկայացնել:

վունքները և ազատություններն իրենց էությամբ կիրառելի են նրանց նկատմամբ (հոդված 74):

Հետևաբար, այն հիմնական իրավունքների շրջանակում, որոնց կրող են հանդիսանում իրավաբանական անձինք, նրանք ևս ունեն անհատական դիմում ներկայացնելու իրավասությունը: Սահմանադրության 74-րդ հոդվածի իմաստով «իրավաբանական անձ» հասկացությունը և դրա տեսակները սահմանված են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով (հոդված 50 և 51)[36]:

Հասկանալու համար՝ արդյո՞ք տվյալ հիմնական իրավունքի կրող կարող է լինել իրավաբանական անձը, թե՞ ոչ, պետք է դիմել նորմի մեկնաբանության գործիքներին: Այս առումով, սակայն, պետք է ուշադրություն դարձնել, որ հիմնական իրավունքի միայն տառացի մեկնաբանությունը բավարար չէ, քանի որ, օրինակ, հիմնական իրավունքի դրույթում «մարդ» ձևակերպման օգտագործումը դեռևս չի բացառում դրա տարածումը նաև իրավաբանական անձանց վրա: Օրինակ՝ Սահմանադրության 39-րդ հոդվածի համաձայն. *«Մարդն ազատ է անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանը և օրենքներին: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:»*: Այս նորմի միայն տառացի մեկնաբանման դեպքում կարող ենք գալ սխալ եզրահանգման, որ այն վերաբերում է միայն ֆիզիկական անձանց, քանի որ օգտագործվում է «մարդ» եզրույթը: Մինչդեռ, իրականում այս իրավունքի կրողներ են ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձինք:

Որպեսզի որևէ հիմնական իրավունք վերաբերելի լինի նաև իրավաբանական անձանց, անհրաժեշտ է, որ այդ իրավունքն իր էությամբ կիրառելի լինի վերջինիս նկատմամբ:

[36] Ընդունվել է 1998թ. մայիսի 5-ին, ՀՕ-239, ՀՀՊՏ 1998.08.10/17(50):

Այն դեպքում, երբ հիմնական իրավունքով պաշտպանվող շահը իր բնույթով կարող է վերաբերել միայն ֆիզիկական անձին, հիմնական իրավունքի կիրառությունը իրավաբանական անձանց նկատմամբ բացառվում է: Ասվածը վերաբերում է հատկապես այն հիմնական իրավունքներին, որոնք վերաբերում են մարդու ֆիզիկական կամ հոգևոր գոյությանը: Այս առումով, իրավաբանական անձինք, օրինակ, չեն կարող վկայակոչել կյանքի (հոդված 23) կամ ֆիզիկական և հոգևոր անձեռնմխելիության (հոդված 24) հիմնական իրավունքը: Համանման տրամաբանություն է գործում նաև այն հիմնական իրավունքների դեպքում, որոնց նախապայմանը ֆիզիկական անձինք են՝ որպես վերագրման սուբյեկտ, օրինակ՝ ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունքի պարագայում (հոդված 35):

Ինչ վերաբերում է իրավաբանական անձի հիմնական իրավունքներ կրելու ունակության ծագմանը և դադարմանը, ապա այս հարցում ևս կիրառելի են Քաղաքացիական օրենսգրքի դրույթները: Ըստ այդմ, իրավաբանական անձանց համար հիմնական իրավունքները ծագում են նրանց ստեղծման պահից: Իրավաբանական անձը ստեղծված է համարվում նրա պետական գրանցման պահից (Քաղաքացիական օրենսգիրք, հոդված 56, կետ 3): Իրավաբանական անձի դատավարական գործունակությունը դադարում է լուծարման ավարտի պահից: Իրավաբանական անձը համարվում է լուծարված, իսկ նրա գոյությունը՝ դադարած՝ պետական գրանցման պահից (Քաղաքացիական օրենսգիրք, հոդված 69, կետ 7):

8. ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Ո՞վ կարող է ունենալ դատավարական իրավունքներ և կրել պարտականություններ:

Դատավարական գործունակությունը իրավասու դիմումատուի կողմից իր գործողություններով իրավունքներ իրականացնելու և պարտականություններ ստանձնելու ունակությունն է: Դատավարական գործունակության նախադրյալը իրավասու դիմումատու լինելն է: Լրիվ գործունակ անձինք միշտ ունեն դատավարական գործունակություն:

ՍԴՕ-ն թեև չի անդրադառնում դատավարական գործունակության հարցերին, այդուհանդերձ, ընդհանուր դատավարական կանոնները սկզբունքորեն կիրառելի են նաև այս պարագայում:

Դատավարական գործունակության գործնական խնդիրներ առաջանում են անչափահասների, սահմանափակ գործունակ և անգործունակ անձանց պարագայում:

Անչափահասները, որպես կանոն, չունեն դատավարական գործունակություն, սակայն իրենց հասունության մակարդակին համապատասխան՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է ճանաչվի նրանց դատավարական գործունակությունը[37]: Միաժամանակ, համաձայն Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի[38]՝ երեխաների

[37] Նման մոտեցումը համահունչ է Սահմանադրության 37-րդ հոդվածին: Այս հարցը Սահմանադրական դատարանում գործնական կիրառություն չի ստացել, սակայն ուշագրավ է, որ ՀՀ դատավարական օրենսգրքերը որդեգրել են առավել խիստ մոտեցում՝ դատավարական գործունակությունը պայմանավորելով բացառապես Քաղաքացիական օրենսգրքով սահմանված գործունակության կանոններով:

[38] Ընդունվել 2004թ. նոյեմբերի 9-ին, ՀՕ-123-Ն, ՀՀՊՏ 2005.01.19/4(376), հոդ. 60:

իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը դրվում է նրանց ծնողների վրա: Ծնողները համարվում են իրենց երեխաների օրինական ներկայացուցիչները և նրանց իրավունքների ու շահերի պաշտպանությամբ առանց լիազորագրի հանդես են գալիս նաև դատարանում (հոդված 52): Հետևաբար, անչափահասներին Սահմանադրական դատարանում կարող են ներկայացնել նաև նրանց օրինական ներկայացուցիչները՝ ծնողը (որդեգրողը), խնամակալը, հոգաբարձուն կամ օրենքով նման իրավունք ունեցող այլ անձինք[39]:

Անգործունակ և սահմանափակ գործունակ անձինք Սահմանադրական դատարանում կարող են հանդես գալ միայն իրենց խնամակալների և հոգաբարձուների միջոցով, բացառությամբ այն դեպքերի, երբ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձը իրավունք ունի անմիջականորեն դիմելու դատարան[40]:

9. ԴԻՄՈՒՄԻ ԱՌԱՐԿԱՆ

Դիմումի առարկան դիմումատուի նկատմամբ կիրառված և նրա հիմնական իրավունքը խախտող նորմատիվ իրավական ակտի դրույթն է, ներառյալ՝ դրան իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

[39] Օրինակ՝ երեխայի իրավունքների և շահերի խախտման դեպքում երեխայի իրավունքների պաշտպանությամբ թերևս կարող է հանդես գալ նաև խնամակալության և հոգաբարձության մարմինը (հոդված 43):

[40] Օրինակ՝ Քաղաքացիական դատավարության օրենսգիրք, հոդված 255՝ անգործունակ ճանաչված քաղաքացուն գործունակ ճանաչելը և քաղաքացու գործունակության սահմանափակումը վերացնելը:

9.1. «Նորմատիվ իրավական ակտ» հասկացությունը

Ինչպիսի՞ ակտերի սահմանադրականությունը կարող է վիճարկվել:

Սահմանադրական նորմից ուղղակիորեն բխում է, որ **անհատական դիմումի առարկա կարող է լինել միայն նորմատիվ իրավական ակտը կամ դրա որևէ դրույթը**:

Նորմատիվ իրավական ակտը միայն արտաքին ներգործություն ունեցող *ընդհանուր*՝ անձանց անորոշ շրջանակի վրա տարածվող և *վերացական*՝ անորոշ դեպքերի վրա տարածվող նորմեր պարունակող իրավական ակտն է[41]:

Նորմատիվ իրավական ակտեր ընդունելու իրավասություն ունեն Ազգային ժողովը՝ սահմանադրական օրենքների և օրենքների տեսքով[42] և Սահմանադրությամբ նախատեսված մարմինները՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի տեսքով[43]: Օրենքները կարող են ընդունվել նաև քաղաքացիական նախաձեռնության կարգով[44]՝ հանրաքվեի միջոցով:

Վերոնշյալից բխում է, որ անհատական դիմումի առարկայի շրջանակից դուրս են մնում *անհատական իրավա-*

---

41 «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի (ընդունվել է 2018թ. մարտի 21-ին, ՀՕ-180-Ն, ՀՀՊՏ 2018.03.28/23(1381), հոդ. 373) համաձայն՝ նորմատիվ իրավական ակտը իրենից ներկայացնում է «Հայաստանի Հանրապետության ժողովրդի, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից ընդունած գրավոր իրավական ակտ, որը պարունակում է վարքագծի պարտադիր կանոններ անորոշ թվով անձանց համար» (հոդված 2, մաս 1, կետ 1):

42 Սահմանադրություն, հոդված 88, մաս 2:

43 Այդ մարմիններն են՝ Կառավարությունը, Կառավարության անդամները, օրենքով ստեղծվող ինքնավար մարմինները, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը, Կենտրոնական բանկը և համայնքի ավագանին:

44 Սահմանադրություն, հոդված 204:

կան ակտերը[45]: Այսպես, Սահմանադրական դատարանը, անհատական դիմումի ընդունելության շրջանակներում անդրադառնալով անձի կողմից գլխավոր դատախազի հրամանի սահմանադրականության վիճարկման հարցին, մերժել էր այդ գործի քննությունը: Մերժումը դատարանը պատճառաբանել է նրանով, որ *«Գլխավոր դատախազի քննության առարկա հրամանը ունի ժամանակավոր բնույթ, նախատեսված է մեկանգամյա կիրառման համար, իրավական նորմ չի պարունակում և վերաբերում է միայն դրանում անհատապես նշված անձանց, հետևաբար, այն ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ չէ և ենթակա չէ քննության Սահմանադրական դատարանում»*[46]:

Հարկ է նկատել, որ դիմողը կարող է վիճարկել ոչ միայն նորմատիվ իրավական ակտի կամ դրա դրույթի գործող տեքստը, այլ տեքստն այն խմբագրությամբ, որն առկա է եղել իր նկատմամբ կիրառվելու պահին[47]:

Անհատական դիմումի շրջանակներում Սահմանադրական դատարանը քննում է նաև *օրենսդրական բացի սահմանադրականությունը*[48]: Այս առումով, Սահմանադրական դատարանը իր պրակտիկայում ձևավորել է մի շարք մոտեցումներ, մասնավորապես.

- «օրենսդրական բացը Սահմանադրական դատարանի քննության առարկա կարող է դառնալ այն ժամանակ, երբ այն իրավակարգավորման թերությունն

---

45 «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի համաձայն՝ անհատական իրավական ակտը իրենից ներկայացնում է «նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան ընդունված գրավոր իրավական ակտ, որը սահմանում է վարքագծի կանոն կամ առաջացնում է փաստական հետևանքներ և վերաբերում է միայն դրանում անհատապես նշված անձի կամ անձանց» (հոդված 2, մաս 1, կետ 5):

46 7 փետրվարի 2020թ. ՍԴԴԿՈ-5:

47 21 հուլիսի 2009թ. ՍԴՈ–817, կետ 6:

48 Օրենսդրական բացի հարցերի վերաբերյալ, տես, օրինակ, ՍԴՈ-914, ՍԴՈ-922, ՍԴՈ-1020, ՍԴՈ-1056, ՍԴՈ-1143, ՍԴՈ-1476:

է, այլ ոչ թե իրավաստեղծ մարմնի, տվյալ դեպքում՝ օրենսդրի կամքը՝ ձեռնպահ մնալու որպես օրենսդրական բաց ընկալվող իրավական կարգավորումից,

- ցանկացած թերի օրենսդրական կարգավորում չէ, որը որպես օրենսդրական բաց կարող է Սահմանադրական դատարանի քննության առարկա դառնալ, այլ միայն այնպիսի օրենսդրական բացը, որը հնարավոր չէ հաղթահարել այլ վերաբերելի իրավակարգավորումները մեկնաբանելու և կիրառելու միջոցով,
- օրենսդրական բացը պետք է հանգեցրած լինի հակասական իրավակիրառ պրակտիկայի, որը հնարավոր չէ հաղթահարել կամ որը փաստացի չի հաղթահարվել սովորական դատարանների կողմից,
- օրենսդրական բաց առկա է այն պարագայում, երբ իրավակարգավորման լիարժեքություն ապահովող տարրի բացակայության կամ այդ տարրի թերի կանոնակարգման հետևանքով խաթարվում է օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործումը»[49]:

9.2. «Իրավակիրառ պրակտիկայում նորմատիվ իրավական ակտին տրված մեկնաբանություն» հասկացությունը

Ե՞րբ կարող է վիճարկվել նորմին իրավակիրառի կողմից տրված մեկնաբանությունը:

Ինչպես արդեն նշվել է, 2015թ. Սահմանադրական փոփոխությունների արդյունքում սահմանադրական մակարդակ է բարձրացվել այն դրույթը, ըստ որի՝ նորմատիվ ակտերի սահմա-

[49] 4 սեպտեմբերի 2019թ. ՍԴՈ-1476, կետ 4.4:

նադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանը հաշվի է առնում նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը[50]:

Այսինքն՝ սահմանադրական գանգատի շրջանակում այս պարագայում ստուգման առարկա է դառնում նորմատիվ իրավական ակտի կիրառման ժամանակ իրավակիրառի կողմից նորմին տրված մեկնաբանությունը: Ինչպես նշել է Սահմանադրական դատարանը, «վիճարկվող իրավակարգավորումների սահմանադրականությունը որոշելիս կարևոր նշանակություն ունի վիճարկվող դրույթների սահմանադրաիրավական բովանդակության բացահայտումը՝ իրավակիրառական պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ, քանի որ իրավանորմի սահմանադրականությունը պայմանավորված է ոչ միայն նրանով, թե ինչպես է այն շարադրված իրավական ակտում, այլև նրանով, թե ինչպես է այն ընկալվում ու կիրառվում իրավակիրառ պրակտիկայում»[51]:

Ցանկացած իրավակիրառ ունի իրավական նորմերը մեկնաբանելու պարտականություն՝ բացահայտելու համար նորմի իմաստը, պահանջը: Մեկնաբանման այս գործընթացում, սակայն, իրավակիրառը կարող է հանգել նորմի այնպիսի իմաստի, որը հակասահմանադրական է:

Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «որպես Սահմանադրության գերակայության ապահովման միջոց՝ **Սահմանադրության վերջնական և համապարտադիր մեկնաբանությունն ու կիրառումն է** Սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությունը, իսկ **հանրային իշխանության բոլոր մարմինները՝** Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իրենց լիազորությունների

[50] Տես բաժին I, մաս 5՝ Իրավակիրառ պրակտիկայում նորմի մեկնաբանման Սահմանադրությանը համապատասխանության ստուգումը:

[51] 15 հուլիսի 2011թ. ՍԴՈ-984, կետ 6:

շրջանակներում **մեկնաբանում և կիրառում են Սահմանադրությունը,** հատկապես եթե, Սահմանադրության 3-րդ հոդվածին համահունչ, խոսքն անմիջականորեն գործող իրավունքի, այն է՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների մասին է, որոնցով սահմանափակված է **ամբողջ հանրային իշխանությունը»** *(ընդգծումները Սահմանադրական դատարանինն են)*[52]:

Եթե Սահմանադրական դատարանի կողմից նորմը ճանաչվում է Սահմանադրությանը համապատասխանող միայն Սահմանադրական դատարանի մեկնաբանությամբ, ապա նորմն ինքնին մնում է ուժի մեջ, սակայն դրա հետագա կիրառման ժամանակ իրավակիրառը պետք է առաջնորդվի Սահմանադրական դատարանի կողմից նորմին տրված մեկնաբանությամբ:

ՍԴՕ 69-րդ հոդվածի 10-րդ մասը սահմանում է, որ եթե «Սահմանադրական դատարանը նորմատիվ իրավական ակտի դրույթն իր մեկնաբանությամբ ճանաչելով Սահմանադրությանը համապատասխանող, միաժամանակ գտել է, որ այն նրա նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ», ապա «դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով»:

Այդուհանդերձ, այս հարցում պետք է հստակ տարբերակել մի կողմից՝ նորմի սահմանադրականությունը որոշելու հարցը, և մյուս կողմից՝ նորմի կիրառման իրավաչափության հարցը: Այս սահմանաբաժանը բավական նուրբ է[53]: Սահմանադրական դատարանը գործնականում մերժում է դիմումը[54] բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, «բարձրացնե-

---

52 25 հունվարի 2019թ. ՍԴԱՈ-7, կետ 4.8, 7 մայիսի 2019թ.ՍԴՈ-1459, կետ 4.7:

53 Այս մասին տես բաժին IV, մաս 27՝ Գործի քննության սահմանները:

54 Այս մասին տես բաժին III, մաս 18՝ Դիմումի նախնական ուսումնասիրությունը և վարույթ ընդունելը:

լով վիճարկվող դրույթը՝ իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ, Սահմանադրությանը հակասող ճանաչելու խնդրանք՝ միայն ձևականորեն է բարձրացնում օրենքի սահմանադրականության հարց՝ ըստ էության բարձրացնելով այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց»[55]:

9.3. Անձի նկատմամբ «կիրառված նորմատիվ իրավական ակտի» հասկացությունը

Ե՞րբ է նորմը համարվում կիրառված անձի նկատմամբ:

Անհատական դիմումի շրջանակներում անձը կարող է վիճարկել իր նկատմամբ «կիրառված» նորմատիվ իրավական ակտի կամ դրա դրույթի սահմանադրականությունը: Կարևոր է նշել, որ «կիրառում» հասկացությունը չի վերաբերում դատական ակտում օրենքի այս կամ այն դրույթի ցանկացած վկայակոչմանը: Այն կարող է դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում» միայն այն դեպքում, երբ անձի համար այն առաջացնում է իրավական հետևանքներ[56]: Իսկ բոլոր այն դեպքերում, երբ «վկայակոչումն ունի ծանուցողական բնույթ, կամ դրա միջոցով դատավարության կողմի ուշադրությունն է հրավիրվում իր գործողությունների օրինականության վրա, հարցի սահմանադրականության բարձրացման տեսանկյունից չի կարող դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում»[57]:

Վիճարկվող դրույթի կիրառված լինելու պահանջը չի նշանակում, որ նորմատիվ իրավական ակտի համապա-

[55] 17 մարտի 2009թ. ՍԴԱՈ-21, ՍԴՈ-817, 21 հուլիսի 2009թ., 22 նոյեմբերի 2011թ. ՍԴՈ-998, 29 մարտի 2011թ. ՍԴՈ-946 և այլն:
[56] 4 ապրիլի 2008թ. ՍԴՈ-747, 23 մարտի 2020թ. ՍԴԴԿՈ-15:
[57] 4 ապրիլի 2008թ. ՍԴՈ-747, կետ 5:

տասխան դրույթը պետք է պարտադիր կերպով կիրառված լինի բոլոր ատյանների դատարաններում. բավարար է միայն վերջնական դատական ակտով կիրառված լինելու հանգամանքը[58]:

Վիճարկվող օրենքի դրույթի կիրառված լինելու պահանջը չի նշանակում նաև, որ դիմողը պետք է վիճարկվող նորմի սահմանադրականության հարցը բարձրացրած լինի դատարանում գործի քննության ժամանակ: Անհատական դիմումի թույլատրելիության նման պահանջ չի բխում ո՛չ Սահմանադրությունից և ո՛չ էլ՝ ՍԴՕ-ից:

10. ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Ի՞նչ ծավալով է ստուգվում դիմումի հիմնավորվածությունը թույլատրելիության փուլում:

Սահմանադրական դատարան ներկայացվող բոլոր տեսակի դիմումների համար, որպես ընդհանուր պահանջ, ՍԴՕ 24-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը սահմանում է, որ դիմումում-խնդրանքից բացի, պետք է նշվեն ***«դիմողի փաստարկները՝ Սահմանադրության համապատասխան նորմերին կատարված հղումներով»:*** ՍԴՕ 69-րդ հոդվածի 2-րդ մասը անհատական դիմումի վարույթի համար կոնկրետացնում է դիմողի կողմից փաստարկներ ներկայացնելու պահանջը, սահմանելով, որ անհատական դիմումը պետք է պարունակի *«հիմնավորումներ, որ նորմատիվ իրավական ակտի հակասությունը հանգեցրել է Սահմանադրության*

[58] Այս մասին տես բաժին II, մաս 11.2՝ «Վերջնական դատական ակտ» հասկացությունը:

2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը»: Այս դրույթների համադրումից բխում է, որ միայն հիմնական իրավունքի խախտման վերաբերյալ սուբյեկտիվ պնդումները ինքնին բավարար չեն, այլ ներկայացվող փաստարկները պետք է հիմնավորված լինեն:

Այնուամենայնիվ, հիմնավորումների վրա չպետք է չափազանց բարձր պահանջներ դրվեն, քանի որ հիմնական իրավունքի իրական խախտումը պարզելը ոչ թե անհատական դիմումի թույլատրելիության, այլ դիմումի հիմնավորվածության առարկան է: Հիմնավորվածության՝ հիմնական իրավունքի իրական խախտման առկայության հարցի պարզումը Սահմանադրական դատարանի ամբողջ կազմի իրավասությունն է, այլ ոչ թե դատական կազմի: Քանի որ անհատական դիմումը հետապնդում է ինչպես անձի սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության նպատակ, այնպես էլ ծառայում է Սահմանադրության օբյեկտիվ պաշտպանությանը, ապա այս փուլում Սահմանադրական դատարանի կազմը, «հիմնավորվածության բացակայության» հիմքով մերժելով գործի քննությունը, զրկում է ամբողջ Սահմանադրական դատարանին գործի վերաբերյալ ըստ էության որոշում կայացնելու նրա լիազորությունից: Արդյունքում կարող է տուժել ինչպես դիմողի հիմնական իրավունքը, այնպես էլ Սահմանադրության գերակայությունը, եթե ուժի մեջ մնա հակասահմանադրական նորմը: Ուստի, դիմումի թույլատրելիության ստուգման փուլում բավարար է պարզել, թե արդյո՞ք հիմնական իրավունքի խախտումը ի սկզբանե բացառված է: Այլ կերպ ասած՝ վիճարկվող նորմի հակասահմանադրականության պարագայում պետք է բացառված չլինի հիմնական իրավունքի խախտման հնարա-

վորությունը: Եթե վիճարկվող նորմատիվ իրավական ակտի և հիմնական իրավունքի խախտման միջև հնարավոր է պատճառահետևանքային կապ, ապա դիմումի հիմնավորման պահանջը դիմումի թույլատրելիության ստուգման փուլում պահպանված է, և Սահմանադրական դատարանը պետք է ըստ էության քննության առնի այն:

2009թ. մարտի 17-ի իր աշխատակարգային որոշմամբ[59] Սահմանադրական դատարանը անդրադարձել է Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողի այս պարտականության բովանդակությանը: Ըստ Սահմանադրական դատարանի՝ այդ «պահանջը նշանակում է, որ դիմողը պետք է ***<u>փորձի բավարար կերպով</u>*** *իրավաբանորեն հիմնավորել, թե* իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև» *(ընդգծումը հեղինակներինն է):* Այստեղ պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ Սահմանադրական դատարանը խոսում է *պահանջը բավարար կերպով հիմնավորելու փորձի,* այլ ոչ թե պահանջի ամբողջությամբ հիմնավոր լինելու մասին, ինչը, ինչպես նշվեց, բացառապես Սահմանադրական դատարանի՝ դատաքննության արդյունքում կայացվելիք ըստ էության որոշման խնդիրն է: Այդ նույն որոշման մեջ «Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, երբ, թեև դրանում բարձրացված հարցը ենթակա է սահմանադրական դատարանի քննությանը, այնուամենայնիվ, դիմումում չեն բերվում բավարար իրավական փաստարկներ այն հիմնավորելու համար»:

Այսպիսով, 2009թ. մարտի 17-ի իր աշխատակարգային որոշումը անհատական դիմումի հիմնավորման համար

[59] 17 մարտի 2009թ. ՍԴԱՈ-21:

պահանջում է միայն որոշակի աստիճանի իրավական փաստարկներ և անհատական դիմումի թույլատրելիության համար որպես չափանիշ է ընդունում դիմումի ակնհայտ անհիմն չլինելը:

Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Սահմանադրական դատարանը արմատավորել է մի պրակտիկա, երբ ակնհայտ անհիմն է ճանաչում այնպիսի դիմումներ, որոնք բավարար չափով հիմնավորված են, այսինքն, որոնք ի սկզբանե չեն բացառում պատճառահետևանքային կապի առկայության հնարավորությունը վիճարկվող նորմի և հիմնական իրավունքի խախտման միջև[60]: Այս առումով տեղին է հիշատակել Սահմանադրական դատարանի 2013թ. սեպտեմբերի 18-ի որոշումը, որտեղ Սահմանադրական դատարանը Վճռաբեկ դատարանին քննադատում է այն պատճառով, որ «գործի քննության ընդունման փուլում վճռաբեկ դատարանը հաճախ իրականացնում է գործն ըստ էության լուծելու գործառույթ: Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրությամբ առավել հստակ պետք է սահմանազատվեն վճռաբեկ դատարանի կողմից գործը քննության ընդունելու և գործով ըստ էության որոշում կայացնելու դատավարական ընթացակարգերն ու ընդունվող որոշումներին ներկայացվող պահանջները»[61]:

Սահմանադրական դատարանի վերը բերված քննադատությունը հավասարապես վերաբերում է հենց իրեն, քանի որ ակնհայտ անհիմն լինելու հիմքով անհատական դիմումների քննությունը մերժելիս Սահմանադրական դատարանը, որպես կանոն, բավարարվում է միայն պնդումով, որ պատճառահետևանքային կապն առկա չէ, և ցույց չի տալիս, թե ինչու նման կապ հնարավոր չէ: Սահմանադրական դա-

[60] Տես նաև Հավելված 4. Անհատական դիմումների վիճակագրություն (2018-2021 թթ.):
[61] 18 սեպտեմբերի 2013թ. ՍԴՈ-1114, կետ 10:

տարանը մինչև այժմ չի տվել որևէ հիմնավորում, թե ո՞րն է այն չափանիշը, որն իր համար հիմք է հանդիսանում դիմումը ակնհայտ անհիմն ճանաչելու համար, այսինքն, որն է այն շեմը, որից ցածր դիմումն ակնհայտ անհիմն է: Իր աշխատակարգային որոշումներից մեկում Սահմանադրական դատարանի կազմը իրեն նույնիսկ իրավունք է վերապահել առանց որևէ հիմնավորման պնդելու, որ դիմողի կողմից վիճարկվող նորմը խախտում է այն հիմնական իրավունքը, որը դիմողը չի մատնանշել, և մերժել է քննության ընդունել դիմումը[62]: Մինչդեռ, ինչպես արդեն նշվել է, եթե Սահմանադրական դատարանի կազմը գտնում է, որ վիճարկվող նորմը կարող է հակասել որևէ հիմնական իրավունքի, ապա պարտավոր է գործը ընդունել քննության, քանի որ անհատական դիմումը նպատակ է հետապնդում պաշտպանելու անձի հիմնական իրավունքները: Եթե նորմի հակասահմանադրականությունը և դրա արդյունքում հիմնական իրավունքի խախտումը ի սկզբանե բացառված չէ, ապա Սահմանադրական դատարանը պարտավոր է գործը քննել ըստ էության և պարզել, թե արդյո՞ք վիճարկվող ակտը սահմանադրական է բոլոր առումներով, լինեն դրանք ընթացակարգային թե նյութական պահանջներ: Նման պարագայում Սահմանադրական դատարանը իրավասու է նաև վիճարկվող նորմը հակասահմանադրական ճանաչել ոչ այն հոդվածով, որը մատնանշել է դիմողը, քանի որ դիմումի առարկան հիմնական իրավունքները խախտող նորմատիվ իրավական ակտն է:

62 23 մարտի 2022թ. ՍԴԴԿՈ-19:

11. ԴԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՍՊԱՌՈՒՄ

Ե՞րբ են դատական պաշտպանության բոլոր միջոցները համարվում սպառված:

Սահմանադրական գանգատի շրջանակներում դիմողի համար որպես Սահմանադրական դատարան դիմելու նախապայման է սահմանված կոնկրետ գործի շրջանակներում դատական պաշտպանության միջոցները սպառելու պարտականությունը և վերջնական դատական ակտի առկայության պահանջը: Այս պահանջի էությունն այն է, որ անհատական դիմում ներկայացնելու համար դիմողը կոնկրետ գործի շրջանակներում պետք է իրացրած լինի օրենսդրորեն իրեն վերապահված բողոքարկման բոլոր հնարավորությունները[63] վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում: Այլ կերպ ասած, եթե անձը չի օգտվել գործն ըստ էության լուծող դատական ակտը վերաքննիչ և վճռաբեկ դատարան բողոքարկելու իր իրավունքից, և այն մտել է ուժի մեջ, այդ պարագայում, անձը զրկվում է անհատական դիմում ներկայացնելու իրավունքից: Նման իրավակարգավորումը խարսխված է այն տրամաբանության վրա, որ ֆիզիկական և իրավաբանական անձինք իրենց խախտված իրավունքները, նախևառաջ, պետք է պաշտպանեն դատարաններում[64]:

[63] 31 հուլիսի 2020թ. ՍԴԴԿՈ-39:
[64] 29 մարտի 2011թ. ՍԴՈ–946, կետ 5:

11.1. «Կոնկրետ գործ» հասկացությունը

Ո՞ր գործերով կարող է ներակայացվել անհատական դիմում:

Ֆիզիկական և իրավաբանական անձինք անհատական դիմում կարող են ներկայացնել ***միայն կոնկրետ գործով:*** Սահմանադրական դատարանը նշել է, որ Սահմանադրության և ՍԴՕ իմաստով «կոնկրետ գործ» եզրույթն իրենից ներկայացնում է դատավարական ընթացակարգ, որն սկսվում է դատավորի կողմից համապատասխան գործն իր վարույթ ընդունելու հարցը լուծելով և ներառում է համապատասխան դատավարական օրենսգրքերով նախատեսված՝ գործը քննող դատավորի կողմից դատավարական որոշումների (դատական ակտերի) կայացում և համապատասխան դատավարական գործողությունների իրականացում[65]: Մեկ այլ գործով Սահմանադրական դատարանը նշել է, որ քաղաքացիական դատավարությունում «կոնկրետ գործ» հասկացության բովանդակությունը ներառում է այն վեճը կամ հարցը, որը լուծվում է քաղաքացիական դատավարության շրջանակներում[66]:

11.2. «Վերջնական դատական ակտ» հասկացությունը

Ո՞ր դատական ակտերը կարող են անհատական դիմում ներկայացնելու հիմք լինել:

Անհատական դիմումի շրջանակներում անձը կարող է վիճարկել ոչ թե ցանկացած դատական ակտով, այլ միայն *վերջնական* դատական ակտով իր նկատմամբ կիրառված նորմա-

[65] 25 հունիսի 2021թ. ՍԴԱՈ-123:
[66] 4 դեկտեմբերի 2015թ. ՍԴԱՈ-77:.

տիվ իրավական ակտի կամ դրա դրույթի սահմանադրականությունը: Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի իմաստով՝ որպես վերջնական դատական ակտ կարող են հանդես գալ տարբեր ատյանների դատարանների դատական ակտերը:

Գործի քննության ընթացքում դատարանների կողմից կայացված դատական ակտերը կարելի է բաժանել երկու հիմնական խմբի՝ գործն ըստ էության լուծող և գործն ըստ էության չլուծող դատական ակտերի[67]: Անհատական դիմումի շրջանակներում դատական ակտի վերջնական լինելը կապված է կոնկրետ գործի սկսման, ընթացքի և ելքի վրա վերջինիս ունեցած որոշիչ ազդեցությամբ: Այս իմաստով վերջնական դատական ակտեր են, առաջին հերթին, գործն ըստ էության լուծող ակտերը, որոնցով ավարտվում է դատարանում գործի դատաքննությունը: «Առավել հաճախ վերջնական դատական ակտը վճռաբեկ դատարանի ակտն է, որը կայացվել է ի սպառումն պաշտպանության բոլոր միջոցների»[68]:

Գործն ըստ էության լուծող վերջնական դատական ակտերից բացի Սահմանադրական դատարանը իր մի շարք որոշումներում սահմանադրական դիմումի իմաստով վերջնական դատական ակտ անուղղակիորեն դիտարկում է նաև գործն ըստ էության չլուծող մի շարք միջանկյալ դատական ակտեր:

Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների համաձայն՝ միջանկյալ դատական ակտերի բողոքարկումը օրենսդիրը կարող է կարգավորել երկու եղանակով՝ *անմիջական և հետաձգված:* Վերլուծելով միջանկյալ դատական ակտերի բողոքարկմանն առնչվող իրավանորմերը, Սահմանադրական դատարանը 2007 թ. նոյեմբերի

[67] 6 նոյեմբերի 2019թ. ՍԴՈ-1487, կետ 4.5:
[68] 9 սեպտեմբերի 2008թ. ՍԴՈ-758:

28-ի ՍԴՈ-719 որոշման մեջ արձանագրել է, որ «օրենսդիրը հիմնականում բողոքարկելի է համարում այն բոլոր ակտերը, որոնք կարող են կասեցնել կամ խոչընդոտել դատարանի մատչելիության իրավունքի իրացման ընթացքը, այն է՝ հայցադիմումի ընդունումը մերժելու, հայցադիմումը վերադարձնելու, հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու, գործի վարույթը կասեցնելու մասին որոշումները»: Այդ նույն որոշման մեջ Սահմանադրական դատարանը նկատել է, որ «բողոքարկման ոչ ենթակա ակտերն իրենց բնույթով այնպիսին են, որ չեն կասեցնում գործի քննության հնարավորությունը և վերաբերում են գործի քննությունը կազմակերպելու՝ դատավորի հայեցողությանը»[69]: Սահմանադրական դատարանը մեկ այլ որոշմամբ նշել է, որ «հարուցված, չկասեցված և շարունակվող վարույթի տրամաբանական ավարտը գործն ըստ էության լուծող դատական ակտի կայացումն է, հետևաբար՝ նման վարույթի շրջանակներում կայացված միջանկյալ ակտերը, անձի իրավունքի ենթադրյալ խախտման դեպքում, կարող են վիճարկվել գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում»[70]: Սահմանադրական դատարանի վերոհիշյալ նկատառումները վերաբերում են միջանկյալ դատական ակտերի բողոքարկմանը ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարաններում: Եթե անձի հիմնական իրավունքը ենթադրաբար խախտվում է նման՝ գործի վարույթը չկասեցնող միջանկյալ դատական ակտի միջոցով, ապա անձը պետք է վիճարկի դրա իրավաչափությունը գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում: ՍԴԴԿՈ/1-19 որոշմամբ Սահմանադրական դատարանը նշել է, որ եթե օրենսդիրը նման միջանկյալ դատական ակտերի բողոքարկման անմիջական կարգ չի

[69] 28 նոյեմբերի 2007թ. ՍԴՈ-719, կետ 4:
[70] 2 նոյեմբերի 2010թ. ՍԴՈ-922, կետ 5:

նախատեսում, ապա դա չի նշանակում, որ «այն բողոքարկելիությունից զրկված ակտ է և այդ առումով նաև՝ վերջնական, այլ գործն ըստ էության լուծող դատական ակտի շրջանակում բողոքարկման ենթակա ակտ է»[71]: Դա նշանակում է, որ եթե անձը բողոքարկում է միջանկյալ դատական ակտը այդ՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի շրջանակում, ապա նա անհատական դիմումի միջոցով կարող է վիճարկել միջանկյալ դատական ակտի հիմքում ընկած նորմատիվ իրավական դրույթի և/կամ դրա մեկնաբանման սահմանադրականությունը:

Եթե միջանկյալ դատական ակտը դատական վարույթի ընթացքը չի կասեցնում, ապա, ըստ Սահմանադրական դատարանի, օրենսդիրն ունի լայն հայեցողություն առ այն, թե բողոքարկման ո՞ր կարգն է նախատեսում՝ անմիջական, թե՞ հետաձգված: Սակայն երբ միջանկյալ դատական ակտը կասեցնում է վարույթի հետագա ընթացքը, Սահմանադրական դատարանի ՍԴՈ-922 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշման համաձայն՝ օրենսդիրը պարտավոր է նախատեսել նման ակտերի անմիջական բողոքարկում: Նման մոտեցումը Սահմանադրական դատարանը հիմնավորում է նրանով, որ ի տարբերություն հարուցված, չկասեցված և շարունակվող վարույթի, որի տրամաբանական ավարտը գործն ըստ էության լուծող դատական ակտի կայացումն է և անձի իրավունքի ենթադրյալ խախտման վիճարկումն է գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում, ապա կասեցված կամ ընդհատված վարույթի պարագայում «նման հնարավորությունը բացառվում է, և միջանկյալ դատական ակտի դեմ պաշտպանության միակ միջոցը դրա անմիջականորեն բողոքարկման հնարավորությունն է»[72]:

---

71 30 հուլիսի 2018թ. ՍԴԴԿՈ/1-19:

72 2 նոյեմբերի 2010թ. ՍԴՈ-922, կետ 5:

Դատական վարույթի ընթացքի կասեցումից բացի, Սահմանադրական դատարանը 2019թ. նոյեմբերի 6-ի որոշմամբ[73], անմիջական բողոքարկման անհրաժեշտություն է գտել նաև անձին կալանքի տակ պահելու դեպքում: Բոլոր այն դեպքերում, երբ միջանկյալ դատական ակտի անմիջական բողոքարկումը չի հանգեցնում անձի հիմնական իրավունքի ենթադրյալ խախտման վերացմանը, ապա նա իրավասու է անհատական դիմում ներկայացնել Սահմանադրական դատարան:

Միևնույն ժամանակ, այն դեպքերում, երբ օրենքը չի նախատեսում միջանկյալ դատական ակտի՝ վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում բողոքարկելու հնարավորություն, Սահմանադրական դատարանի պրակտիկայում չկա միանշանակ մոտեցում, թե արդյո՞ք անձը պարտավոր է անմիջապես դիմել Սահմանադրական դատարան, թե՞ այդուհանդերձ պետք է սպառի բողոքարկման հնարավորությունները: Սահմանադրական դատարանը՝ 2016թ. դեկտեմբերի 13-ի ՍԴՈ-1330 որոշմամբ[74] կարճել է անհատական դիմումով գործի վարույթը, այն հիմքով, որ «դիմողը չի դիմել վճռաբեկ դատարան և չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները» վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո: Ընդ որում, վերաքննիչ դատարանը բողոքը վերադարձրել է այն պատճառաբանությամբ, որ բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէր բողոքարկման: Այս որոշմամբ Սահմանադրական դատարանը

[73] «Սահմանադրական դատարանը գտնում է, որ երբ գործն ըստ էության չլուծող դատական ակտով սահմանափակվում է անձնական ազատության հիմնական իրավունքը, ապա այդ իրավունքի պաշտպանությունն արդյունավետ չի իրացվում հետաձգված բողոքարկման միջոցով, քանի որ անձը դատական քննության ողջ ընթացքում շարունակում է մնալ կալանքի տակ անորոշ ժամկետով՝ չունենալով այդ ընթացքում կալանքի իրավաչափությունը բողոքարկելու հնարավորություն», 6 նոյեմբերի 2019թ. ՍԴՈ-1487, կետ 4.5:

[74] 13 դեկտեմբերի 2016թ. ՍԴՈ-1330, կետ 8:

անհրաժեշտ է համարել դատական պաշտպանության բոլոր միջոցների սպառումը, ինչն արդարացված է Վճռաբեկ դատարանի՝ Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գործառույթների իրականացման անհրաժեշտությամբ: Անտեսելով իր այս որոշումը՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը 2022թ. հոկտեմբերի 18-ի ՍԴԴԿՈ-57 մեկ այլ որոշմամբ[75] մերժել է անհատական դիմումը վարույթ ընդունել՝ այն պատճառաբանությամբ, որ դիմողը սպառել է անհատական դիմում ներկայացնելու համար պահանջվող վեցամսյա ժամկետը, քանի որ անմիջապես Սահմանադրական դատարան դիմելու փոխարեն, վճռաբեկ բողոք է ներկայացրել վերաքննիչ քաղաքացիական դատարանի կայացրած այն որոշման դեմ, որը բողոքարկելու իրավունք Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում:

12. ԴԻՄՈՒՄՈՒՄ ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՄԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Եթե Սահմանադրական դատարան է ներկայացվում անհատական դիմում, որով վիճարկվում է անձի նկատմամբ կիրառված այն նորմի սահմանադրականությունը, որի վերաբերյալ արդեն իսկ առկա է Սահմանադրական դատարանի որոշում՝ այդ

Հնարավո՞ր է անհատական դիմում ներկայացնել, եթե նույնական հարցով արդեն իսկ առկա է Սահմանադրական դատարանի որոշում:

[75] 18 հոկտեմբերի 2022թ. ՍԴԴԿՈ-57, կետ 3:

նորմի՝ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու վերաբերյալ, ապա նման դիմումը սկզբունքորեն անթույլատրելի է: Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Սահմանադրական դատարանի որոշումները և եզրակացությունները վերջնական են և ուժի մեջ են մտնում հրապարակման պահից»: ՍԴՕ 61-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասությունը, վերարտադրելով Սահմանադրության այս դրույթը, միաժամանակ կոնկրետացնում է, որ խոսքը Սահմանադրական դատարանի ըստ էության որոշումների վերջնականության մասին է:

Սահմանադրական դատարանի ըստ էության որոշումների օրինական ուժին ընդհանուր առմամբ ներհատուկ են այն հատկանիշները, որոնք ունենում են սովորական դատարանների օրինական ուժի մեջ մտած ակտերը: Խոսքը, առաջին հերթին, Սահմանադրական դատարանի որոշումների անփոփոխելիության, պարտադիրության և բացառիկության մասին է: Սահմանադրական դատարանի ըստ էության որոշումների վերջնական լինելը նշանակում է, որ դրանք որևէ կերպ չեն կարող վերանայման ենթարկվել որևէ ատյանի կողմից: Սահմանադրական դատարանի որոշումը վերջակետ է դնում իրավական վեճին և այդ իմաստով անբեկանելի է: ՍԴՕ 64-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանի որոշումը պետք է պարտադիր նշում պարունակի որոշման վերջնական լինելու մասին: ՍԴՕ 61-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է Սահմանադրական դատարանի ըստ էության ընդունված որոշումների պարտադիրությունը բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում: Ուստի, Սահմանադրական դատարանի ըստ էության ընդունված որոշումը սկզբունքորեն բացառում է

դրանով լուծված հարցին նույնական երկրորդ գործի հարուցումը, քննությունը և լուծումը: ՍԴՕ 29-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը մերժում է գործի քննությունը, «եթե Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-5-րդ կետերում նշված գործերով ներկայացված որևէ դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա է Սահմանադրական դատարանի որոշում»: Անհատական դիմումում առաջադրված հարցը դիմումի առարկան է՝ կոնկրետ իրավանորմը, ներառյալ՝ դատարանի կողմից դրան տրված մեկնաբանությունը[76]:

Այն հանգամանքը, որ անհատական դիմումում առաջադրված հարցերի վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշման առկայությունը ՍԴՕ-ն դիտում է որպես անհատական դիմումը վարույթ ընդունելը մերժելու հիմք, դիմողի համար որևէ բացասական հետևանք չի առաջացնում այն դեպքում, երբ նրա նկատմամբ կայացված դատական ակտը ընդունվել է մինչև Սահմանադրական դատարանի որոշումը: ՍԴՈ-1645 որոշման 5.3-րդ կետի համաձայն՝ ՍԴՕ 69-րդ հոդվածի 11-րդ մասի ուժով անձի նկատմամբ կայացված դատական ակտը ենթակա է վերանայման նաև այն պարագայում, երբ Սահմանադրական դատարանում դիմումը մուտքագրվելու օրվա դրությամբ անձը դեռևս պահպանել է Սահմանադրական դատարան դիմելու իր իրավունքը, սակայն Սահմանադրական դատարան դիմելու համար խոչընդոտ է դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշման առկայությունը[77]:

---

[76] Այս մասին առավել մանրամասն տես բաժին II, մաս 9՝ Դիմումի առարկան:

[77] Այս մասին առավել մանրամասն տես բաժին V, մաս 33՝ Սահմանադրական դատարանի որոշումների իրավական հետևանքները դիմողի և այլ անձանց համար:

Սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը համապատասխանող ճանաչված նորմի վերաբերյալ նոր քննության արգելքը բացարձակ չէ. այն ունի ժամանակային սահմաններ: Սահմանադրական դատարանի որոշումը արդիական է միայն այնքան ժամանակ, քանի դեռ չեն փոխվել որոշման ընդունման պահին առկա իրավական և փաստական նախադրյալները: Նման պարագայում անհատական դիմումը *բացառության կարգով* կարող է թույլատրելի լինել ՍԴՕ 68-րդ հոդվածի 16-րդ մասով նախատեսված հետևյալ երկու դեպքերում՝

- փոփոխվել է Սահմանադրության՝ տվյալ գործով կիրառված դրույթը, կամ
- ի հայտ է եկել տվյալ գործով կիրառված՝ Սահմանադրության դրույթի այնպիսի նոր ընկալում, որի առկայությամբ նույն հարցի վերաբերյալ կարող է ընդունվել Սահմանադրական դատարանի այլ որոշում, և տվյալ հարցն ունի սկզբունքային սահմանադրահիրավական նշանակություն:

Սահմանադրության դրույթի նոր ընկալումը կարող է կապված լինել հասարակական այնպիսի էական փոփոխությունների հետ, որոնք արմատապես տարբերվում են այն իրավիճակից, երբ Սահմանադրական դատարանը ընդունել էր իր նախորդ որոշումը վիճարկվող դրույթի սահմանադրականության վերաբերյալ[78]:

[78] Ի տարբերություն «Սահմանադրական դատարանի մասին» 2006թ. օրենքի (հոդված 68, մաս 14)՝ նման որոշման կայացման համար Սահմանադրական դատարանի մասին գործող սահմանադրական օրենքը այլևս չի նախատեսում Սահմանադրական դատարանի որոշումը վերանայելու առնվազն 7 տարվա ժամանակային սահմանափակում:

13. ԴԻՄՈՒՄԻ ԱՌԱՐԿԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՅԼ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԳՈՐԾԻ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Հնարավո՞ր է անհատական դիմում ներկայացնել, եթե նույնական հարցով Սահմանադրական դատարանի վարույթում արդեն իսկ առկա է գործ:

Այն սկզբունքը, որ միևնույն գործը չի կարող լինել մեկից ավելի դատաքննության առարկա, որպես ընդհանուր դատավարական իրավունքի հիմնարար սկզբունք, գործում է նաև սահմանադրական դատավարությունում և ամրագրված է ՍԴՕ 29-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում: Սակայն այդ սկզբունքի կիրառումը ենթադրում է, որ դիմումի առարկան նույնական է: Եթե գործը վարույթ ընդունելու փուլում կասկածներ են առաջանում դիմումի առարկայի նույնականության վերաբերյալ, ապա այդ հարցի լուծումը պետք է իրականացվի գործի քննության փուլում: Նման կասկածներ կարող են, մասնավորապես, առաջանալ այն դեպքում, երբ վիճարկվում է միևնույն նորմին՝ դատարանի կողմից դիմողի նկատմամբ կիրառված ակտին տրված այնպիսի մեկնաբանություն, որը տարբերվում է արդեն իսկ քննվող գործում նորմին տրված մեկնաբանությունից: Այս պարագայում Սահմանադրական դատարանը իրավասու է գործն ընդունել քննության և այն մինչև դատաքննությունն սկսվելը Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշմամբ միավորել նույն հարցին վերաբերող այլ գործի հետ (ՍԴՕ, հոդված 41): Գործերի միավորումից հետո ՍԴՕ-ն միավորված գործերը միմյանցից անջատել չի թույլատրում[79]:

[79] Չնայած դրան՝ Սահմանադրական դատարանը ՍԴԱՈ-242 որոշմամբ, առանց որևէ հիմնավորման, ուժը կորցրած է ճանաչել գործը միավորելու մասին մինչ այդ իր ընդունած ՍԴԱՈ-218 աշխատակարգային որոշումը:

14. ԺԱՄԿԵՏԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ

Ի՞նչ ժամկետում կարող է անհատական դիմում ներկայացվել:

Անհատական դիմումը Սահմանադրական դատարան կարող է ներկայացվել դատական պաշտպանության բոլոր միջոցները սպառելուց՝ վերջնական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան վեց ամիս հետո (ՍԴՕ, հոդված 69, մաս 3):

ՍԴՕ-ն նախատեսում է վեցամսյա ժամկետը հաշվարկել վերջնական դատական ակտի հրապարակման պահից: Տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքը սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդող օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը («Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենք, հոդված 31, մաս 2):

Օրինակ՝

Եթե դիմողի գործով վերջնական դատական ակտը կայացվել է 2020թ. հունիսի 24-ին, Սահմանադրական դատարան դիմելու ժամկետի ընթացքը սկսվում է 2020թ. հունիսի 25-ից և ավարտվում 2020թ. դեկտեմբերի 25-ին[80]:

Ամիսներով հաշվարկվող ժամկետը լրանում է ժամկետի վերջին ամսվա համապատասխան ամսաթվին: Ուշադրություն պետք է դարձնել նաև այն հանգամանքին, որ եթե ամիսներով հաշվարկվող ժամկետը լրանում է այն ամսին, որը չունի համապատասխան ամսաթիվ, ապա ժամկետը լրանում է այդ ամսվա վերջին օրը[81]:

[80] 11 փետրվարի 2021թ. ՍԴԴԿՈ-9:
[81] «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենք, հոդված 31, մաս 4:

Օրինակ՝

Եթե դիմողի գործով վերջնական դատական ակտը կայացվել է 2020թ. օգոստոսի ***30-ին,*** Սահմանադրական դատարան դիմելու ժամկետը լրանում է փետրվարի ***28-ին:***

Սահմանադրական դատարան դիմելու համար նախատեսված ժամկետի պահպանման համար կարևոր է նաև կոնկրետ գործի շրջանակներում վերջնական դատական ակտի ճիշտ նույնականացումը, քանի որ այդ ակտի հրապարակման պահից է սկսվում հաշվարկվել 6-ամսյա ժամկետի սկիզբը: Սահմանադրական դատարանի կազմը ՍԴԴԿՈ–57 գործով համարել էր, որ դիմողը բաց է թողել Սահմանադրական դատարան դիմելու 6-ամսյա ժամկետը, քանի որ ժամկետի սկիզբը հաշվարկել էր ոչ թե տվյալ գործի շրջանակներում վերջնական դատական ակտ համարվող վերաքննիչ դատարանի որոշման պահից, այլ վճռաբեկ դատարանի բողոքը առանց քննության թողնելու որոշման պահից, որը վերջնական դատական ակտ չէր[82]: Սահմանադրական դատարանի դատական կազմն արձանագրել է, որ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի իմաստով վերջնական դատական ակտը դիմողի գործով վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2022թ.

[82] 18 հոկտեմբերի 2022թ. ՍԴԴԿՈ–57: Տվյալ գործի շրջանակներում դիմողը վճռաբեկության կարգով բողոքարկել էր վերաքննիչ դատարանի որոշումը, որը Վճռաբեկ դատարանը թողել էր առանց քննության այն պատճառաբանությամբ, որ վերաքննիչ քաղաքացիական դատարանի միջանկյալ դատական ակտերը վճռաբեկության կարգով ենթակա են բողոքարկման միայն Քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում, իսկ հայցադիմումի ընդունումը մերժելու որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում վերաքննիչ քաղաքացիական դատարանի կայացրած որոշումը բողոքարկելու իրավունք Քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ: Սահմանադրական դատարանի դատական կազմը, հաշվի առնելով Վճռաբեկ դատարանի հիմնավորումները, որոշել էր, որ նշված գործի շրջանակներում Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի իմաստով վերջնական դատական ակտը վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումն է:

մարտի 21-ի որոշումն է, որը Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 387-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ուժի մեջ է մտել կայացման պահից:

Սահմանադրական դատարան դիմելու համար նախատեսված վեցամսյա ժամկետի լրանալը անհատական դիմումներով գործի քննության մերժման հիմք է: ՍԴՕ-ն չի նախատեսում դատական ակտն ավելի ուշ ստանալու փաստով կամ այլ հանգամանքներով դատավարական ժամկետի բացթողումը հարգելի ճանաչելու և վերականգնելու հնարավորություն[83]:

15. ՊԱՏՇԱՃ ԴԻՄՈՒՄԸ

Ի՞նչ ձևական պահանջների պետք է համապատասխանի անհատական դիմումը:

Դիմումը պետք է բավարարի օրենքով սահմանված ձևական պահանջներին՝ պատշաճ դիմում համարվելու համար: Դիմումին ներկայացվող ընդհանուր պահանջները սահմանված են ՍԴՕ 24-րդ հոդվածում, իսկ կից ներկայացվող նյութերի ցանկը՝ ՍԴՕ 25-րդ հոդվածում:

Անհատական դիմումի համար սահմանված ձևական պահանջները չպահպանելու դեպքում Սահմանադրական դատարանի աշխատակազմը տեղեկացնում է դիմողին՝ հնարավորություն տալով շտկել թերությունները կամ վերադարձնում է դիմումը[84]:

Դիմումը պետք է լինի գրավոր՝ իրավասու անձի կողմից ստորագրված (ՍԴՕ, հոդված 24, մաս 1): Անհատական դի-

[83] 27 մայիսի 2020թ. ՍԴԴԿՈ-30:

[84] Այս մասին առավել մանրամասն տես բաժին III, մաս 17՝ Անհատական դիմումի գրանցումը:

մումը կարող է ստորագրվել ինչպես անմիջապես դիմողի կողմից, այնպես էլ ներկայացուցչի միջոցով հանդես գալու դեպքում՝ ներկայացուցչի կողմից:

Անհատական դիմում ներկայացնելուց և Սահմանադրական դատարանի կողմից այն ընդունվելուց հետո դիմողը նոր նյութեր կարող է ներկայացնել միայն Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշմամբ[85]:

Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելիս գանձվում է պետական տուրք[86]՝ բազային տուրքի 30-ապատիկի չափով[87], այսինքն՝ 30 000 ՀՀ դրամ[88]: Պետական տուրքը վճարվում է 9 0000 500 16 08 գանձապետական հաշվեհամարին[89]:

Առանձին դեպքերում անձը իրավունք ունի նաև միջնորդություն ներկայացնել պետական տուրքի վճարումից ազատվելու համար: Սահմանադրական դատարանը, ելնելով դիմողի գույքային վիճակից[90], կարող է բավարարել միջնորդությունը և սահմանել պետական տուրքի գծով հետևյալ արտոնություններից որևէ մեկը[91]՝

ա) պետական տուրքի վճարումից ազատում,

բ) պետական տուրքի նվազեցում,

գ) պետական տուրքի դրույքաչափի նվազեցում,

դ) պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգում:

---

85 ՍԴՕ, հոդված 25, մաս 3:

86 ՍԴՕ հոդված 25, մաս 2, կետ 1:

87 «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք, հոդված 9.1:

88 Բազային տուրքի չափ է սահմանված 1000 դրամը («Պետական տուրքի մասին» օրենք, 8-րդ հոդված):

89 https://www.minfin.am/hy/page/gandzapetakan_hashivner/:

90 «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը դատարաններին իրավունք է վերապահում սահմանել առանձին գործերով պետական տուրքի գծով արտոնություններ՝ ելնելով կողմերի գույքային դրությունից (հոդված 31, մաս 1, «գ1» ենթակետ): Օրենքը չի տալիս «գույքային վիճակի» գնահատման չափանիշներ՝ այն թողնելով դատարանների հայեցողությանը: Բոլոր դեպքերում դիմողը պետք է հիմնավորի պետական տուրքի գծով արտոնության կիրառման անհրաժեշտությունը իր նկատմամբ:

91 Նույն տեղում, հոդված 21:

Սահմանադրական դատարանը պետական տուրքի վճարումից ազատելու հետ կապված հարցերը լուծում է գործը քննության ընդունելու փուլում (ՍԴՕ, հոդված 28, մաս 3):

Անհատական դիմումում նշվող տեղեկությունները[92]

ՍԴՕ, հոդված 24, մաս 2

Անհատական դիմումը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝

1) Սահմանադրական դատարանի անվանումը,
2) դիմողի անունը (իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը), հաշվառման (իրավաբանական անձի դեպքում՝ գտնվելու վայրի) կամ բնակության վայրի հասցեն, եթե այն տարբերվում է հաշվառման հասցեից. եթե դիմողը հանդես է գալիս ներկայացուցչի միջոցով՝ դիմողի ներկայացուցչի անունը, հաշվառման կամ բնակության վայրի հասցեն, եթե այն տարբերվում է հաշվառման հասցեից,
3) Սահմանադրության այն հոդվածը, որը Սահմանադրական դատարան դիմելու հիմք է հանդիսանում,
4) Սահմանադրական դատարան ներկայացվող խնդրանքը և դիմողի փաստարկները՝ Սահմանադրության համապատասխան նորմերին կատարված հղումներով,
5) այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի անվանումը կամ պաշտոնատար անձի անունը, որն ընդունել է վիճարկվող ակտը:

[92] Անհատական դիմումի կառուցվածքը և ձևական պահանջները ներկայացված են սույն ձեռնարկի հավելված 1-ում՝ անհատական դիմումի տիպային ձևի օրինակով:

Անհատական դիմումին կցվող նյութերի ցանկը

ՍԴՕ, հոդված 25, մաս 1 և 2

1) լիազորագիրը կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող այլ փաստաթուղթ,
2) օտար լեզվով շարադրված բոլոր փաստաթղթերի՝ օրենքով սահմանված կարգով վավերացված հայերեն թարգմանությունը,
3) սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ դիմումի հիմնավորվածությունը հավաստող ապացույցները,
4) դիմողի հայեցողությամբ՝ գործին առնչվող այլ նյութեր,
5) օրենքով սահմանված չափով պետական տուրք վճարելու վերաբերյալ անդորրագիրը կամ միջնորդություն պետական տուրքի վճարումից ազատելու մասին,
6) ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանի այն վերջնական դատական ակտը, որով դիմողի նկատմամբ կիրառվել է նրա կողմից վիճարկվող օրենքի դրույթը,
7) դիմողի անձը հաստատող փաստաթղթի պատճենը,
8) իրավաբանական անձի դեպքում պետական գրանցման կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը,
9) որպես ներկայացուցիչ հանդես եկող փաստաբանի անձը հաստատող և փաստաբանի կարգավիճակի մասին հավաստող փաստաթղթի պատճենները,
10) որպես ներկայացուցիչ հանդես եկող՝ բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող անձի՝ անձը հաստատող փաստաթղթի և բարձրագույն իրավաբանական կրթությունը հավաստող փաստաթղթի պատճենը:

III

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

16. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Ի՞նչպես դիմումը ներկայացնել Սահմանադրական դատարան:

ՍԴՕ-ն հնարավորություն է տալիս անհատական դիմումը Սահմանադրական դատարան ներկայացնել ինչպես *թղթային,* այնպես էլ *էլեկտրոնային* եղանակով[93] (հոդված 24, մաս 1):

Թղթային եղանակով դիմումները ներկայացվում են Սահմանադրական դատարանի աշխատակազմի ընդհանուր բաժին՝ առձեռն, փոստային կապի կամ սուրհանդակային կապի ծառայության միջոցով: Առձեռն հանձնման պարագայում պետք է նկատի ունենալ, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում աշխատաժամանակի

[93] ՍԴՕ 88-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում:

սկիզբը ժամը 9:00-ն է, իսկ ավարտը՝ 18:00-ն (աշխատողների հանգստանալու և սնվելու համար ընդմիջման ժամը՝ 13:00-14:00)։ Ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերի նախօրյակին աշխատանքային օրվա տևողությունը կրճատվում է մեկ ժամով[94]։

Էլեկտրոնային եղանակով դիմումները Սահմանադրական դատարան են ներկայացվում ինչպես էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի, այնպես էլ Սահմանադրական դատարանի պաշտոնական էլեկտրոնային փոստի՝ armlaw@concourt.am հասցեին ուղարկելու միջոցով[95]։ Էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացման համար գործում է https://e-request.am էլեկտրոնային հարցումների միասնական հարթակը, որը հնարավորություն է ընձեռում անհատական դիմումը Սահմանադրական դատարան ներկայացնել առցանց՝ կցելով համապատասխան փաստաթղթերը։ Դիմումները էլեկտրոնային եղանակով ներկայացնելու դեպքում դրանք պետք է ստորագրված լինեն բացառապես էլեկտրոնային թվային ստորագրությամբ՝ ստորագրող անձին նույնականացնելու համար։ Էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումին կից այլ փաստաթղթերը, մասնավորապես՝ լիազորագիր, պետական տուրքի վճարումից ազատելու մասին միջնորդություն, նույնպես պետք է պարունակեն էլեկտրոնային թվային ստորագրություն։

Անհատական դիմումի գործերով որպես դիմողի ներկայացուցիչ կարող է հանդես գալ կամ փաստաբանը, կամ

---

94 «Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում և դրանց ենթակա կազմակերպություններում աշխատաժամանակի սկիզբը և ավարտը սահմանելու մասին» 24 նոյեմբերի 2005թ. ՀՀ կառավարության թիվ 2138-Ն որոշման 1-ին կետ և 2-րդ կետի «գ» ենթակետ։

95 Տեղեկատվությունը ստացվել է Սահմանադրական դատարանի աշխատակազմից (գրություն Ա/1017-2022)՝ ի պատասխան հեղինակների կողմից ներկայացված հարցման։

Ո՞վ կարող է ներկայացնել կողմին Սահմանադրական դատարանում:

բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող անձը (ՍԴՕ, հոդված 46, մաս 3): Երկու պարագայում էլ դիմողի ներկայացուցչի լիազորությունները պետք է հավաստված լինեն օրենքով սահմանված կարգով տրված լիազորագրով: Թեև ՍԴՕ-ն չի մանրամասնում լիազորագրի ձևին վերաբերող հարցերը, այս հարցում նույնպես կարելի է անալոգիա անցկացնել, մասնավորապես, քաղաքացիական[96] և վարչական դատավարության[97] կարգավորումների հետ: Այսպես, ֆիզիկական անձի կողմից փաստաբան չհանդիսացող անձին տրված լիազորագիրը պետք է վավերացված լինի նոտարի կամ օրենքով նման իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից[98]: Փաստաբանին լիազորագիրը տրվում է հասարակ գրավոր ձևով և այն վավերացման կամ հաստատման ենթակա չէ: Եթե դիմողը իրավաբանական անձ է, ապա ինչպես փաստաբանին, այնպես էլ փաստաբան չհանդիսացող անձին լիազորագիրը տալիս է իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարը կամ կանոնադրությամբ այդ իրավաբանական անձին առանց լիազորագրի ներկայացնելու իրավասություն ունեցող անձը՝ հասարակ գրավոր ձևով:

Օրինական ներկայացուցչի[99] լիազորությունները հաստատվում են նրա կարգավիճակը հավաստող համապատասխան փաստաթղթերով:

---

96 Ընդունվել է 2018թ. փետրվարի 9-ին, ՀՕ-110-Ն, ՀՀՊՏ 2018.03.05/16(1374), հոդ. 208:

97 Վարչական դատավարության օրենսգիրք, ընդունվել է 2013թ. դեկտեմբերի 5-ին, ՀՕ-139-Ն, ՀՀՊՏ 2013.12.28/73(1013).1, հոդ. 1186.1:

98 Քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է նման անձանց շրջանակը:

99 Այս մասին տես բաժին II, մաս 8՝ Դատավարական գործունակություն:

Դիմողը Սահմանադրական դատարանում կարող է ունենալ ոչ ավելի, քան երեք ներկայացուցիչ (ՍԴՕ, հոդված 46, մաս 5):

17. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ[100]

Ո՞վ է ստուգում անհատական դիմումի ձևական պահանջները և ինչպե՞ս են շտկվում թերությունները:

Սահմանադրական դատարան ներկայացված անհատական դիմումը Սահմանադրական դատարանի աշխատակազմի իրավասու ստորաբաժանման կողմից պարտադիր ենթակա է գրանցման (ՍԴՕ, հոդված 26, մաս 1): Անհատական դիմումի գրանցման ընթացակարգի մանրամասները սահմանված են ՍԴՕ 26-րդ հոդվածով և ՍԴԱ 72-85-րդ կետերով:

Թղթային եղանակով ներկայացված անհատական դիմումները գրանցվում են աշխատակազմի իրավասու ստորաբաժանման անհատական դիմումների գրանցման մատյանում, իսկ էլեկտրոնային եղանակով ներկայացված դիմումները՝ էլեկտրոնային մատյանում[101]:

Գրանցված դիմումները ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում ներկայացվում են Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարին[102]:

Անհատական դիմումը գրանցելու փուլի նպատակն է ստուգել դիմումի ձևական համապատասխանությունը օրենքի պահանջներին: Հաշվի առնելով, որ այս փուլում քննվում է ոչ թե դիմումի բովանդակային, այլ ընդամենը ձևական պա-

[100] Տես նաև Հավելված 1. Անհատական դիմումի տիպային ձև:
[101] ՍԴԱ, կետեր 72 և 74:
[102] ՍԴԱ, կետեր 72 և 75:

հանջներին համապատասխանության հարցը, գործընթացն իրականացվում է Սահմանադրական դատարանի աշխատակազմի իրավասու ստորաբաժանման կողմից:

Անհատական դիմումի գրանցումից հետո Սահմանադրական դատարանի աշխատակազմի իրավասու ստորաբաժանումը երկօրյա ժամկետում ուսումնասիրում է դիմումի ձևի համապատասխանությունը ՍԴՕ 24-րդ և 25-րդ հոդվածների պահանջներին և արդյունքների մասին տեղեկանք է ներկայացնում աշխատակազմի ղեկավարին[103]:

Աշխատակազմի ղեկավարը տեղեկանքը ստանալուց հետո, անհրաժեշտության դեպքում 1 օրվա ընթացքում, աշխատակազմի իրավասու ստորաբաժանմանը հանձնարարում է դիմողին տեղեկացնել դիմումը ՍԴՕ պահանջներին համապատասխանեցման մասին՝ նշելով այն պահանջները, որոնք դիմողի կողմից չեն պահպանվել[104]: Այսինքն՝ անհատական դիմումի ձևի՝ օրենքի պահանջներին չհամապատասխանելու դեպքում անձը տեղեկացվում է անհատական դիմումը գրանցվելուց հետո առավելագույնը եռօրյա ժամկետում:

Անհատական դիմումում առկա սխալների վերաբերյալ տեղեկացվելուց հետո եռօրյա ժամկետում դիմողը կարող է խմբագրել անհատական դիմումը և այն կրկին ներկայացնել Սահմանադրական դատարան[105]: Այս դեպքում դիմումն ընդունված է համարվում սկզբնական ներկայացման օրը[106]:

Մատնանշված թերությունները եռօրյա ժամկետում չվերացնելու և դիմումի խմբագրված տարբերակը Սահմանադրական դատարան չներկայացնելու դեպքում Սահմանադրական դատարանի իրավասու ստորաբաժանումը

[103] ՍԴԱ, կետ 76:
[104] ՍԴԱ, կետ 77:
[105] ՍԴԱ, կետեր 78 և 79:
[106] ՍԴԱ, կետ 80:

մեկօրյա ժամկետում դիմողին է վերադարձնում դիմումը՝ բողոքարկելու կարգի մասին համապատասխան նշմամբ[107]:

Դիմումը վերադարձնելու մասին որոշումը ստանալուց հետո եռօրյա ժամկետում դիմողը կարող է բողոքարկել այդ որոշումը: Այս հարցով վերջնական որոշումը կայացնում է Սահմանադրական դատարանի 3 դատավորից կազմված դատական կազմը՝ դիմողի կողմից բողոքը ներկայացվելուց ոչ ուշ, քան մեկ օր հետո:

Դիմումը օրենքով սահմանված պահանջներին համապատասխանեցնելու կամ վերադարձնելու որոշման մասին անձը տեղեկացվում է էլեկտրոնային (հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե) կամ փոստային կապի միջոցով[108]: Նշված դեպքերում դիմողը համարվում է ծանուցված՝ էլեկտրոնային կամ փոստային կապի համապատասխան միջոցով ծանուցվելու պահից[109]:

Այն դեպքում, սակայն, երբ անհատական դիմումում առկա սխալները թվաբանական, տեխնիկական կամ ձևական են, և դրանք հնարավոր է շտկել տեղում, ապա այդ հիմքով դիմումը չի վերադարձվում: Փոխարենը, դրանք շտկվում են դիմումների ընդունման բաժնում՝ դիմողի կողմից կամ նրա համաձայնությամբ[110]:

Այսպիսով, եթե դիմողը չի առարկում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից մատնանշված սխալներին և սահմանված ժամկետում շտկում է դրանք, ապա, դիմումը գրանցվում է առավելագույնը 6 օրում: Այն դեպքում, երբ դիմողը բողոքարկում է վերադարձի որոշումը, ապա, կախված Սահմանադրական դատարանի որոշումից, դիմումը կամ գրանցվում, կամ մերժվում է առավելագույնը 11 օրում:

---

107 ՍԴՕ, հոդված 26, մաս 4:
108 ՍԴԱ, կետ 83:
109 ՍԴԱ, կետ 84:
110 ՍԴՕ, հոդված 26, մաս 5:

Պետք է, սակայն, ուշադրություն դարձնել, որ վերը նշված ժամկետում արտացոլված չեն ո՛չ աշխատանքային օրերը և էլ ծանուցումների համար նախատեսված ժամանակը: Քանի որ դիմողը Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կարող է տեղեկացվել կա՛մ էլեկտրոնային կա՛մ փոստային կապի միջոցով, ապա, կախված ընտրված ծանուցման միջոցից՝ նշված ժամկետները կարող են փոխվել: Եթե էլեկտրոնային եղանակով ծանուցվելու դեպքում անձը ծանուցված է համարվում անմիջապես, ապա փոստային եղանակով ծանուցվելու դեպքում պահանջվում է որոշակի ժամանակ:

Պետք է նաև նկատի ունենալ, որ վերոհիշյալ բոլոր ժամկետները, այդ թվում՝ շտկումների համար նախատեսվածները, ներառվում են անհատական դիմումի քննության և որոշման ընդունման համար սահմանված ժամկետների մեջ:

18. ԴԻՄՈՒՄԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼԸ[111]

Ինչպե՞ս է իրականացվում անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը, և ի՞նչ որոշումներ կարող են կայացվել:

Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից գրանցվելուց հետո անհատական դիմումի նախնական ուսումնասիրության և վարույթ ընդունելու հարցերի լուծումը վերապահված է Սահմանադրական դատարանի երեք դատավորի կազմին[112]: Բացա-

[111] Տե՛ս նաև Հավելված 3. Անհատական դիմումի քննությունը (նախնական ուսումնասիրում, դատաքննություն) (Գծապատկեր 2):

[112] ՍԴՕ, հոդված 69, մաս 4, ՍԴԱ, կետ 85:

ռություն են կազմում ՍԴՕ 68-րդ հոդվածի 16-րդ մասով[113] նախատեսված դեպքերը, որոնց պարագայում խոսքը Սահմանադրական դատարանի կողմից վիճարկվող նորմը կամ դրա մեկնաբանությունը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին նախկինում հաստատված պրակտիկան փոխելու մասին է: Հաշվի առնելով Սահմանադրական դատարանի պրակտիկայի կայունության, կանխատեսելիության կարևորությունը և այն փոխելու համար հիմնավորվածության բարձր աստիճանի առկայության անհրաժեշտությունը՝ ՍԴՕ-ն նախատեսում է, որ նման դեպքերում գործը քննության ընդունելու վերաբերյալ Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշումն ընդունվում է Սահմանադրական դատարանի դատավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով:

Անհատական դիմումներով ուսումնասիրություն իրականացնող դատական կազմը ձևավորվում է վիճակահանության միջոցով[114]:

Անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը իրականացվում է դիմումը մուտքագրելուց հետո ոչ ուշ, քան ***20-օրյա ժամկետում***[115]:

Եթե դատական կազմի նախագահողը գտնում է, որ նիստում անհատական դիմումի նախնական ուսումնասի-

---

[113] Սահմանադրական դատարանը ՍԴՕ 68-րդ հոդվածի 9-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված որոշումները սույն օրենքով սահմանված կարգով ներկայացված համապատասխան դիմումի հիման վրա կարող է վերանայել, եթե՝

1) փոփոխվել է Սահմանադրության՝ տվյալ գործով կիրառված դրույթը, կամ

2) ի հայտ է եկել տվյալ գործով կիրառված՝ Սահմանադրության դրույթի այնպիսի նոր ընկալում, որի առկայությամբ նույն հարցի վերաբերյալ կարող է ընդունվել Սահմանադրական դատարանի այլ որոշում, և տվյալ հարցն ունի սկզբունքային սահմանադրաիրավական նշանակություն:

[114] ՍԴԱ, կետեր 88-97:

[115] ՍԴԱ, կետ 27, ենթակետ 2:

ության անհրաժեշտություն չկա, և դատական կազմի դատավորներից որևէ մեկը չի առարկում, ապա տվյալ անհատական դիմումի վերաբերյալ կազմակերպվում է գրավոր քվեարկություն: Գրավոր քվեարկությունն իրականացվում է էլեկտրոնային եղանակով: Այս նպատակով դատական կազմի նախագահողը դատական կազմի դատավորներին տրամադրում է քվեարկության դրվող որոշման նախագիծ, որի վերաբերյալ կողմ կամ դեմ դիրքորոշումը դատավորները ներկայացնում են նախագահողի կողմից նշված ժամկետում: Գրավոր քվեարկությանը դատական կազմի դատավորների մասնակցությունը պարտադիր է, և նախագահողի կողմից նշված ժամկետում դիրքորոշում չներկայացվելու դեպքում համարվում է, որ դատավորը քվեարկել է կողմ:

Դատական կազմը կարող է ընդունել հետևյալ որոշումներից որևէ մեկը՝

1) անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին,
2) անհատական դիմումով գործի քննությունը մերժելու մասին,
3) անհատական դիմումով գործը մասամբ քննության ընդունելու և գործի քննությունը մասամբ մերժելու մասին:

Որոշում կայացնելու համար դատական կազմի 3 դատավորներն էլ պետք է քվեարկեն միաձայն՝ կողմ կամ դեմ: Եթե դատական կազմը միաձայն չէ, ապա գործը քննության ընդունելու կամ գործի քննությունը մերժելու հարցը վերստին քննարկվում և լուծվում է Սահմանադրական դատարանի ամբողջ կազմով: Այս նպատակով Սահմանադրական դատարանի նախագահը ողջամիտ ժամկետում հրավիրում է աշխատակարգային նիստ: Խնդրո առարկա հարցով

Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշումներն ընդունվում են Սահմանադրական դատարանի դատավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ (ՍԴՕ, հոդված 62, մաս 7)։ Քվեարկության արդյունքում ձայների հավասարության դեպքում աշխատակարգային որոշումը համարվում է չընդունված (ՍԴԱ, կետ 125)[116]։

Քվեարկությունից հետո դատական կազմի նախագահողն ամփոփում է արդյունքները և ընդունված որոշումը ներկայացնում աշխատակազմի ղեկավարին՝ դիմողին ծանուցելու նպատակով։ Սահմանադրական դատարան ներկայացված անհատական դիմումը ընդունվում է վարույթ, եթե առկա չեն ՍԴՕ 29-րդ հոդվածով սահմանված գործի քննությունը մերժելու հիմքերը։ Գործը քննության ընդունելու մասին որոշումը եռօրյա ժամկետում ուղարկվում է կողմերին[117]։

Եթե գործն ընդունվել է քննության, ապա այս մասին որոշումից հետո 10-օրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշմամբ լուծվում են մի շարք դատավարական հարցեր՝

- գործով պատասխանող կողմ ներգրավելու,
- գործի դատաքննությունն սկսելու ժամանակի,
- գործով զեկուցող նշանակելու,
- գործի դատաքննության ընթացակարգի,
- գործը դատաքննության նախապատրաստելու,
- պետական տուրքի վճարումից ազատելու միջնորդության՝ առկայության դեպքում[118]։

[116] Նման դեպքերում Սահմանադրական դատարանը ընդհանրապես որևէ կերպ չի հիմնավորում դիմումի մերժումը, ինչը արդարադատության իրականացման տեսանկյունից խնդրահարույց է։
[117] ՍԴՕ, հոդված 28, մաս 5։
[118] ՍԴՕ, հոդված 28, մաս 3 և 4։

19. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼԸ[119]

Ի՞նչ հիմքերով Սահմանադրական դատարանը կարող է մերժել անհատական դիմումի ընդունումը:

ՍԴՕ 29-րդ հոդվածը՝ 69-րդ հոդվածի հետ համակցության մեջ, սահմանում է այն հիմքերը, որոնց առկայության դեպքում դատական կազմը կամ Սահմանադրական դատարանը ամբողջ կազմով[120] կարող է ընդունել գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում: Դիմումի քննությունը մերժելու հիմքերը նույնական են անհատական դիմումի թույլատրելիության նախապայմանների հետ[121]:

Հիմք ընդունելով ՍԴՕ պահանջները՝ Սահմանադրական դատարանը անհատական դիմումի ընդունելության վերաբերյալ դատական կազմերի որոշումների մեջ թվարկում է ստուգման ենթակա պայմանների ցանկը, որոնցով դատական կազմերը առաջնորդվում են անհատական դիմումը վարույթ ընդունելու հարցը որոշելիս[122].

---

119 Տես նաև Հավելված 4. Անհատական դիմումների վիճակագրություն (2018-2021 թթ.)՝ անհատական դիմումի քննությունը մերժելու վիճակագրության համար:

120 Դատական կազմով և Սահմանադրական դատարանի ամբողջ կազմով որոշում ընդունելու իրավիճակների մասին տես վերը՝ մաս 18:

121 Այս մասին առավել մանրամասն տես բաժին II՝ Անհատական դիմումի թույլատրելիության նախադրյալները:

122 Տես, օրինակ, 12 սեպտեմբերի 2022թ. ՍԴԴԿՈ-49:

1. դիմումում առաջադրված հարցերը ենթակա են Սահմանադրական դատարանին[123],
2. դիմողն իրավասու է նշված հարցերով դիմելու Սահմանադրական դատարան, այն է՝
   ա) դիմողը հանդիսացել է դատարանում դատավարության մասնակից.
   բ) դիմողի նկատմամբ մասնագիտացված դատարանի կողմից կիրառվել է օրենքի դրույթը.
   գ) դիմողի նկատմամբ վիճարկվող դրույթները կիրառվել են դատարանի վերջնական ակտով.
   դ) դիմողն սպառել է ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները.
3. դիմումում առաջադրված հարցերի վերաբերյալ առկա չէ Սահմանադրական դատարանի որոշում[124],
4. դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում[125],
5. դիմումն ակնհայտ անհիմն չէ[126],
6. դիմողը պահպանել է Սահմանադրական դատարան դիմելու համար նախատեսված վեցամսյա ժամկետը:

---

123 Մերժման այս հիմքը պարզապես նշանակում է, որ Սահմանադրական դատարանը ընդհանրապես իրավասու է քննել անհատական դիմում, ինչն ուղղակիորեն ամրագրված է Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում: Առանց նման իրավասության՝ որևէ անհատական դիմում ներկայացնելու հնարավորություն չի կարող գոյություն ունենալ:

124 Այս մասին առավել մանրամասն՝ բաժին II, մաս 12՝ Դիմումում առաջադրված հարցերի վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշման բացակայություն:

125 Այս մասին առավել մանրամասն տես բաժին II, մաս 13՝ Դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանում գործի դատաքննության բացակայությունը :

126 Այս մասին առավել մանրամասն տես բաժին II, մաս 10՝ Հիմնական իրավունքի խախտման հիմնավորումը:

Վերոհիշյալ պահանջներից որևէ մեկի անհամապատասխանության դեպքում անհատական դիմումի քննությունը ենթակա է մերժման:

Գործը քննության ընդունելու հիմքերի պատշաճ և մանրակրկիտ ուսումնասիրությունը հետագա դատավարական գործընթացների արդյունավետության կարևոր նախապայման է: Սակայն, հարկ է նկատի ունենալ, որ գործը քննության ընդունելու որոշումը դեռևս չի նշանակում, որ գործի վարույթը հետագայում չի կարող կարճվել: ՍԴՕ-ն Սահմանադրական դատարանին թույլ է տալիս գործի քննության ցանկացած փուլում կարճել գործի վարույթը[127], եթե բացահայտվել են գործի քննությունը մերժելու վերոհիշյալ հիմքերից որևէ մեկը:

20. ՎԻՃԱՐԿՎՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԻ ԿԱՄ ԴՐՈՒՅԹԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՄԱՄԲ

Անհատական դիմումի ապահովման ի՞նչ միջոց կարող է կիրառել Սահմանադրական դատարանը:

Գործը քննության ընդունելուց հետո Սահմանադրական դատարանը դիմող կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ մինչև գործի դատաքննության ավարտը կարող է կասեցնել վիճարկվող իրավական ակտի կամ դրույթի գործողությունը: Նման որոշման համար հիմք է հանդիսանում վիճարկվող իրավական ակտի կամ դրույթի հետագա գործողության արդյունքում կողմերից մեկի կամ

[127] Այս մասին առավել մանրամասն՝ բաժին IV, մաս 26՝ Գործի վարույթը կարճելը:

հանրության համար «անդառնալի կամ ծանր հետևանքներ» առաջանալու հնարավորությունը (ՍԴՕ, հոդված 31, մաս 1)[128]:

Վիճարկվող իրավական ակտի կամ դրույթի գործողության կասեցման մասին աշխատակարգային որոշումն ուժի մեջ է մտնում որոշումը Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Այդ որոշումն անհապաղ հրապարակվում է նաև Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների http://www.azdarar.am պաշտոնական ինտերնետային կայքում, իսկ համապատասխան տեղեկատվությունը 24 ժամվա ընթացքում հաղորդվում է հանրային հեռուստատեսությամբ և ռադիոյով[129]:

[128] Վենետիկի հանձնաժողովը, անդրադառնալով Սերբիայի «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի համանման կարգավորմանը, նշել է, որ օրենքի գործողության կասեցման համար «անդառնալի վնասակար հետևանքներ» չափանիշը շատ խիստ է այլ երկրների հետ համեմատությամբ: Որպես օրինակ ներկայացվել են Գերմանիայի և Ավստրիայի Սահմանադրական դատարանների մասին օրենքները: Նշված երկրներում, Սահմանադրական դատարանը, առաջնորդվելով համաչափության սկզբունքով, կարող է կասեցնել օրենքի գործողությունը նաև այն դեպքերում, երբ հանրային շահի տեսանկյունից առկա են ծանրակշիռ անբարենպաստ հանգամանքներ կամ այլ կարևոր հիմքեր: Venice Commission, Comments on The Draft Law on The Constitutional Court of The Republic of Serbia, , CDL-AD(2007)039, para. 17:

[129] ՍԴՕ, հոդված 31, մաս 2:

IV

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

21. ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ[130]

Ո՞րքան է տևում անհատական դիմումի քննությունը:

Սահմանադրական դատարանը անհատական դիմումի գործերով որոշում է ընդունում դիմումը մուտքագրելուց ոչ ուշ, քան 3 ամիս հետո, որը Սահմանադրական դատարանի պատճառաբանված աշխատակարգային որոշմամբ կարող է երկարաձգվել, բայց ոչ ավելի, քան 3 ամսով (ՍԴՕ, հոդված 69, մաս 8)[131]: Այսինքն՝ Սահմանադրական դատարանը անհատական դիմումի

[130] Տես նաև Հավելված 3. Անհատական դիմումի քննությունը (նախնական ուսումնասիրում, դատաքննություն) (Գծապատկեր 2):

[131] ՍԴՕ 68-րդ հոդվածի 8-րդ մասը, որը սահմանում է քննության ավելի երկար՝ վեց ամիս ժամկետ, անհատական դիմումների պարագայում ակնհայտորեն կիրառելի չէ, չնայած որ ՍԴՕ 69-րդ հոդվածի 13-րդ մասը այս մասի կանոնները ևս կիրառելի է համարում անհատական դիմումների գործերով: Խոսքն ակնհայտորեն օրենսդրական սխալի մասին է, և ամեն պարագայում կիրառման ենթակա է ՍԴՕ 69-րդ հոդվածի 8-րդ մասը՝ որպես հատուկ նորմ:

գործերով որոշում է կայացնում անհատական դիմումը մուտքագրելուց հետո առավելագույնը 6 ամսվա ընթացքում[132]:

Գործի դատաքննությունն սկսվելու ժամանակի վերաբերյալ Սահմանադրական դատարանը կայացնում է աշխատակարգային որոշում գործը քննության ընդունելու մասին դատական կազմի որոշման ընդունումից հետո՝ տասնօրյա ժամկետում (ՍԴՕ, հոդված 28, մաս 3 և 4):

Սահմանադրական դատարանի նիստի օրվա և ժամի մասին դատավարության մասնակիցներին ու հրավիրյալներին ծանուցում է Սահմանադրական դատարանի աշխատակազմը՝ Սահմանադրական դատարանի աշխատակարգով սահմանված կարգով (ՍԴՕ հոդված 39, մաս 3):

22. ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

Գրավո՞ր, թե՞ բանավոր ընթացակարգով է քննվում անհատական դիմումը:

Սահմանադրական դատարանում գործերի դատաքննությունն իրականացվում է *բանավոր* կամ *գրավոր* ընթացակարգով (ՍԴՕ, հոդված 40, մաս 1):

ՍԴՕ-ն ելնում է նրանից, որ իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննությունը, *որպես կանոն,* պետք է իրականացվի գրավոր ընթացակարգով, քանի որ այս վարույթում

[132] Նշված 6-ամսյա ժամկետի մեջ չեն հաշվարկվում գործի վարույթը կասեցված լինելու դեպքում այդ ժամկետը: Գործի վարույթի կասեցման մասին տես բաժին IV, մաս 25՝ Գործի վարույթը կասեցնելը: Հարկ է նկատել, որ Սահմանադրական դատարանը 2020թ. երկրորդ կեսից հետո բազմիցս խախտել է այդ առավելագույն ժամկետը: Տես, մասնավորապես, ՍԴՈ-1572, ՍԴՈ-1561, ՍԴՈ-1565:

քննության առարկան առավելապես իրավունքի հարցեր են և, որպես կանոն, բացակայում է գործի նյութերի բանավոր հետազոտման անհրաժեշտությունը: Նույն մոտեցումն է արտացոլված անհատական դիմումի վերաբերյալ գործերի քննության պարագայում: Անհատական գանգատի գործերով բանավոր դատաքննությունը ՍԴՕ-ն նախատեսում է միայն որպես բացառություն, այն դեպքերում, երբ՝

- գործը ձեռք է բերել հասարակական մեծ հնչեղություն, կամ
- բանավոր դատաքննությունը կնպաստի գործի հանգամանքների առավել արդյունավետ բացահայտմանը (ՍԴՕ, հոդված 68, մաս 7, հոդված 69, մաս 13):

Վերը նշված հանգամանքների առկայությունը գնահատում է Սահմանադրական դատարանը: Գործի դատաքննությունը գրավոր կամ բանավոր ընթացակարգով իրականացնելու մասին հարցերը Սահմանադրական դատարանը լուծում է աշխատակարգային որոշմամբ[133]:

ՍԴՕ-ն նախատեսում է, որ գործի դատաքննությունը գրավոր կամ բանավոր ընթացակարգով իրականացնելու մասին դատաքննության մասնակիցները տեղեկացվում են գրությամբ՝ գործը քննության ընդունելու պահից եռօրյա ժամկետում (ՍԴՕ հոդված 40, մաս 3):

Բանավոր դատաքննության անցնելու վերաբերյալ Սահմանադրական դատարանին միջնորդություն կարող են ներկայացնել նաև Սահմանադրական դատարանի դատավորները և դատավարության կողմերը (ՍԴԱ, կետ 67):

[133] Աշխատակարգային որոշումների ընդունման մասին տես բաժին III, մաս 18: Հարկ է նկատել, որ Սահմանադրական դատարանի պրակտիկայում եղել են գործը բանավոր ընթացակարգով քննելու վերաբերյալ մի շարք միջնորդություններ, որոնք մերժվել են ոչ աշխատակարգային որոշմամբ:

Միջնորդության մեջ պետք է հիմնավորվի բանավոր ընթացակարգով անցկացնելու՝ ՍԴՕ 68-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված հիմքերի առկայությունը:

Սահմանադրական դատարանը բանավոր ընթացակարգով քննության անցկացնելու մասին որոշում կարող է ընդունել նաև գրավոր ընթացակարգով գործի դատաքննության ցանկացած փուլում, եթե գտնի, որ առկա են ՍԴՕ 68-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված հիմքերը (ՍԴԱ, կետ 66): Այս դեպքում կողմերը ծանուցվում են այդ մասին նիստից առնվազն 5 օր առաջ, իսկ հրատապ դեպքերում՝ անհապաղ (ՍԴԱ, կետ 69):

Սահմանադրական դատարանը կողմերին է ուղարկում դիմումների և գործը դատաքննության նախապատրաստելու ժամանակ ձեռք բերված այլ փաստաթղթերի պատճենները՝ նիստից առնվազն հինգ օր առաջ (ՍԴՕ, հոդված 39, մաս 2): ՍԴԱ-ն սահմանում է նաև, որ մինչև գրավոր ընթացակարգով գործի դատաքննությունն սկսվելը Սահմանադրական դատարանի կողմից ձեռք բերված գործի լրացուցիչ նյութերը՝ դրանց ձեռքբերմանը համընթաց, աշխատակազմի միջոցով տրամադրվում են Սահմանադրական դատարանի դատավորներին և կողմերին (կետ 63):

Քանի որ գրավոր դատաքննությունն իրականացվում է միայն գործում առկա նյութերի հիման վրա, այս դեպքում առանձնահատուկ նշանակություն են ձեռք բերում հատկապես անհատական դիմում ներկայացրած կողմի բացատրություններն ու առարկությունները՝ պատասխանողի փաստարկներին:

Եթե դատաքննությունն իրականացվելու է գրավոր ընթացակարգով, ապա դատաքննության մասնակիցներին Սահմանադրական դատարանի կողմից ուղարկվող գրության մեջ նշվում է նաև ժամկետ, որի ընթացքում դատաքննության մասնակիցները պետք է ներկայացնեն

իրենց գրավոր բացատրությունները և գործի այլ նյութեր (ՍԴՕ հոդված 40, մաս 3, կետ 2)։ Այս պարագայում գրավոր բացատրություն ներկայացնելու պարտականությունը վերաբերում է պատասխանողին։ ՍԴՕ-ն սահմանում է նաև, որ գրավոր ընթացակարգով դատաքննության ժամանակ կողմերն իրենց բացատրությունները, միջնորդությունները, առաջարկությունները և առարկությունները ներկայացնում են *գրավոր* Սահմանադրական դատարանի սահմանած ժամկետներում՝ *մինչև գործի դատաքննությունը սկսվելը* (ՍԴՕ, հոդված 47, մաս 2)։ Իր հերթին, ՍԴԱ-ն սահմանում է, որ նշված գործողությունները իրականացվում են Սահմանադրական դատարանի նիստի օրվա և ժամի մասին ծանուցվելուց հետո 30-օրյա ժամկետում, եթե Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշմամբ այլ ժամկետ սահմանված չէ (կետ 63)։ Նշված նորմերի համադրությունից կարելի է եզրահանգել, որ դիմող կողմը իրավունք ունի նաև առարկություններ ներկայացնել պատասխանող կողմի բացատրություններին, որոնք հնարավորություն են տալիս առավել համապարփակ արձագանքել պատասխանողի դիրքորոշմանը։

ՍԴՕ-ն նախատեսում է նաև, որ Սահմանադրական դատարանի սահմանած ժամկետը լրանալուց հետո կողմերը կարող են բացատրություններ, միջնորդություններ, առարկություններ, առաջարկություններ, ապացույցներ կամ այլ նյութեր ներկայացնել միայն այն դեպքում, երբ այդ նյութերը կողմից անկախ պատճառներով իրեն հայտնի են դարձել դատաքննության ժամանակ, էական նշանակություն ունեն գործի լուծման համար և կնպաստեն գործի առավել արդյունավետ դատաքննությանը (ՍԴՕ, հոդված 47, մաս 2)։

23. ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

Ո՞վքեր են անհատական դիմումի գործերով կողմերը:

Անհատական դիմումի գործերով սահմանադրական դատավարության մասնակիցներն են (ՍԴՕ, հոդված 44) `

- դիմողը,
- պատասխանողը,
- վկան, փորձագետը և թարգմանիչը[134]:

Դիմողը այն ֆիզիկական կամ իրավաբանական անձն է[135], ով վիճարկում է իր նկատմամբ կիրառված իրավական ակտի սահմանադրականությունը: Որպես դիմող կարող են հանդել գալ մեկ և ավելի անձինք:

Պատասխանողը համապատասխան նորմատիվ իրավական ակտն ընդունած մարմինն է[136]: Բացառություն է միայն այն դեպքը, երբ նորմատիվ իրավական ակտն ընդունվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից՝ հանրաքվեի միջոցով:

ՍԴՕ-ն հրավիրյալի կարգավիճակ է վերապահում Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի, Կառավարության, Բարձրագույն դատական խորհրդի, Վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների պաշտպանի, գլխավոր դատախազի ներկայացուցիչներին: Վերջիններս կարող են դիմել Սահմանադրական դատարան և նախապես ստանալ քննվող գործին առնչվող նյութերը: Դատաքննության

---

134 ՍԴՕ-ն որպես դատավարության մասնակից է նախատեսում նաև երրորդ անձանց, ինչպես նաև այլ անձանց, որոնք ՍԴՕ-ով նախատեսված կարգով օգտվում են դատավարության կողմի իրավունքներից: Սակայն վերջիններիս մասնակցությունը անհատական դիմումի վարույթին բնորոշ չէ:

135 Առավել մանրամասն տես բաժին II, մաս 7 Անհատական դիմում ներկայացնելու իրավասություն:

136 Ավելի մանրամասն տես բաժին II, մաս 9.1. «Նորմատիվ իրավական ակտ» հասկացությունը:

ընթացքում նրանք կարող են հրավիրյալների կարգավիճակով պարզաբանումներ տալ Սահմանադրական դատարանի՝ իրենց ուղղած հարցերի վերաբերյալ (ՍԴՕ, հոդված 44, մաս 2):

Կողմերը Սահմանադրական դատարանում կարող են հանդես գալ ինչպես անձամբ, այնպես էլ ներկայացուցիչների միջոցով[137]:

Եթե դիմողը Սահմանադրական դատարան ներկայացրած դիմումում չի նշում պատասխանող կողմին կամ նշում է ոչ պատշաճ կողմի, ապա Սահմանադրական դատարանը գործը քննության ընդունելու մասին աշխատակարգային որոշմամբ դատավարությանը որպես կողմ ներգրավում է պատասխանողին կամ պատշաճ պատասխանողին, իսկ ՍԴՕ-ով նախատեսված դեպքերում՝ նաև հարակից պատասխանողներին (ՍԴՕ, հոդված 45, մաս 1):

Քանի որ անհատական դիմումը իր էությամբ նորմերի վերահսկողության վարույթ է, և դիմումը ներկայացնելուց հետո Սահմանադրական դատարանը ինքնուրույն է գնահատում վիճարկվող նորմի սահմանադրականության հարցը, ուստի դիմողի մահվան կամ իրավահաջորդության դեպքում դատարանը պետք է ելնի դիմումը հետ վերցնելու ՍԴՕ 30-րդ հոդվածի 2-րդ մասի տրամաբանությունից: Այս պարագայում Սահմանադրական դատարանի համար ուղղորդիչ պետք է լինի այն, թե որքանով է գործի դատաքննության հետագա շարունակությունը ծառայում օբյեկտիվ սահմանադրական իրավունքի պաշտպանության նպատակին[138]:

---

137 Սահմանադրական դատարանում ներկայացուցչության մասին առավել մանրամասն տես բաժին III, մաս 16՝ Անհատական դիմումի ներկայացումը:

138 Տես բաժին IV, մաս 24՝ Դիմումը հետ վերցնելը:

24. ԴԻՄՈՒՄԸ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼԸ

Կարո՞ղ է դիմողը հետ վերցնել ներկայացված անհատական դիմումը:

Ընդհանուր կանոնն այն է, որ *մինչև գործի դատաքննությունը սկսվելը* դիմողը իրավունք ունի հետ վերցնել Սահմանադրական դատարան ներկայացված անհատական դիմումը (ՍԴՕ հոդված 30, մաս 1):

Գործը քննության ընդունելուց հետո ՍԴՕ-ն նախատեսում է դիմումը հետ վերցնելու իրավունքից բացառություն: Եթե Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմումի առարկայի վերաբերյալ գործի քննությունը բխում է հանրային շահերից, ապա այդ հիմնավորմամբ կարող է մերժել անհատական դիմումը հետ վերցնելը (ՍԴՕ, հոդված 30, մաս 2): Նշված սահմանափակումը պայմանավորված է նրանով, որ անհատական դիմումը սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության գործառույթից բացի ծառայում է նորմատիվ իրավական ակտերի համակարգում Սահմանադրության գերակայության ապահովմանը (Սահմանադրություն, հոդված 167, մաս 1)[139]: Հետևաբար, գործը քննության ընդունվելուց հետո դիմումը դադարում է ծառայել միայն դիմողի սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությանը, այլ նաև հանրային շահերի պաշտպանության նպատակ է հետապնդում:

[139] Տես նաև բաժին I, մաս 2՝ Սահմանադրական գանգատի տեսակները:

25. ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼԸ

Ե՞ՐԲ կարող է անհատական դիմումի քննությունն ընդհատվել:

Անհատական դիմումով գործի վարույթը պատշաճ կազմակերպելու անհրաժեշտությունից ելնելով՝ Սահմանադրական դատարանը կարող է կասեցնել գործի վարույթը: ՍԴՕ 56-րդ հոդվածը նախատեսում է գործի վարույթը կասեցնելու 5 հիմք՝

1) նշանակվել է փորձաքննություն,
2) տրվել է դատական հանձնարարություն,
3) այլ մարմիններից կամ անձանցից անհրաժեշտ է ապացույցներ պահանջել,
4) դատավարության կողմերից մեկը կամ նրա ներկայացուցիչը հիվանդության կամ այլ հարգելի պատճառով խնդրել է կասեցնել գործի վարույթը,
5) Սահմանադրական դատարանի պատճառաբանված աշխատակարգային որոշմամբ նախատեսված այլ դեպքերում[140]:

Գործի վարույթը կասեցնելը հանգեցնում է ՍԴՕ, ՍԴԱ-ով և Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշումներով սահմանված դատավարական ժամկետների ընթացքի կասեցմանը (ՍԴՕ, հոդված 56, մաս 2):

Գործի վարույթը վերսկսվում է դրա կասեցման հիմքերը վերանալուց հետո (ՍԴՕ, հոդված 56, մաս 3):

[140] Սահմանադրական դատարանում լայնորեն կիրառվում է վերջին հիմքով գործի քննության կասեցումը, ինչը խնդրահարույց է:

26. ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼԸ

Կարո՞ղ է Սահմանադրական դատարանը մերժել գործի քննությունը դիմումը վարույթ ընդունելուց հետո:

Ինչպես այլ դատավարություններում, այնպես էլ սահմանադրական արդարադատության պարագայում հնարավոր են դեպքեր, երբ գործի քննությունը չի ավարտվում ըստ էության որոշման կայացմամբ և գործը կարճվում է: Քանի որ գործի վարույթի կարճումը իր էությամբ հավասարազոր է արդարադատություն իրականացնելը մերժելուն, այլ դատավարական օրենքների նման, ՍԴՕ-ն ևս սահմանում է գործի վարույթը կարճելու հիմքերի սպառիչ ցանկ:

ՍԴՕ 60-րդ հոդվածը սահմանում է գործի վարույթի կարճման չորս հիմք, որոնցից անհատական դիմումի վարույթի համար ըստ էության վերաբերելի է հիմնականում 1-ին կետը[141], ըստ որի՝ Սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը՝ գործի քննության ցանկացած փուլում, եթե

[141] ՍԴՕ 60-րդ հոդվածի 2-րդ հիմքը անհատական դիմումի վարույթում կիրառելի չէ, քանի որ այն, ի թիվս այլոց, պահանջում է ոչ միայն վիճարկվող իրավական ակտի կամ դրա դրույթի գործողության դադարում մինչև դատաքննությունը, այլև սահմանում է, որ վիճարկվող նորմը չպետք է կիրառված լինի: ՍԴՕ 60-րդ հոդվածի 3-րդ հիմքը ուղղակիորեն վերաբերում է այլ վարույթներին: Անհատական գանգատի վարույթում սկզբունքորեն չի բացառվում ՍԴՕ 60-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված հիմքով գործի վարույթի կարճումը, այն է՝ ՍԴՕ 56-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված այն դեպքերում, երբ կասեցման հիմք հանդիսացած հանգամանքները չեն վերացել գործի վարույթը կասեցնելու մասին աշխատակարգային որոշում ընդունելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, և գործի վարույթն այդ պայմաններում վերսկսելն անհնարին է: Համաձայն ՍԴՕ 56-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ Սահմանադրական դատարանը կարող է կասեցնել գործի վարույթը «Սահմանադրական դատարանի պատճառաբանված աշխատակարգային որոշմամբ նախատեսված այլ դեպքերում»: Այսպես, օրինակ, 2022թ. հուլիսի 1-ի ՍԴԱՈ-114 որոշմամբ անհատական դիմումով գործի վարույթը կասեցվել է՝ հղում կատարելով հենց ՍԴՕ 56-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին՝ պատճառաբանելով, որ առկա է լրացուցիչ տեղեկություններ ստանալու անհրաժեշտություն:

բացահայտվել են ՍԴՕ 29-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր[142]:

Չնայած այն հանգամանքին, որ ՍԴՕ օրենքի 29-րդ հոդվածով սահմանված հիմքերի գերակշիռ մեծամասնությունը, ինչպես նաև գործի քննությունը մերժելու բոլոր այն հիմքերը, որոնք թվարկված են ՍԴՕ 69-րդ հոդվածի 5-րդ մասում, վերաբերում են անհատական դիմումի թույլատրելիության նախապայմաններին, այդուհանդերձ Սահմանադրական դատարանի պրակտիկայում գործի վարույթի կարճումը չափազանց լայն կիրառություն ունի[143]: Այդ պրակտիկան, թերևս, վկայում է այն մասին, որ Սահմանադրական դատարանը պատշաճ կերպով չի ուսումնասիրում անհատական դիմումի թույլատրելիության նախապայմանների բավարարվածությունը գործը վարույթ ընդունելու փուլում:

27. ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Ի՞նչպես տարբերակել նորմի սահմանադրականության հարցը դատական ակտի վերանայումից:

Երբ անհատական դիմումի վարույթում դիմողը վիճարկում է իր նկատմամբ կիրառված օրենքի կամ այլ նորմատիվ ակտի սահմանադրականությունը, ***դիմողը պետք է պնդի, որ այդ ակտի միջոցով խախտվել է իր հիմնական իրավունքը:*** Ասվածը հստակ արտացոլված է Սահ-

142 Այս մասին առավել մանրամասն տե՛ս բաժին III, մաս 19՝ Անհատական դիմումի քննությունը մերժելը:

143 Տե՛ս նաև Հավելված 4. Անհատական դիմումների վիճակագրություն (2018-2021 թթ.) և Հավելված 5. Վարույթ ընդունվելուց հետո կարճված գործերի վիճակագրություն:

մանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում, որի համաձայն՝ անհատական գանգատի վարույթում դիմողը վիճարկում է *«նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է* Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման...» *(ընդգծումը հեղինակներինն է)*:

Մարդու հիմնական իրավունքը խախտվում է ոչ միայն այն դեպքում, երբ օրենքը ուղղակիորեն խախտում է հիմնական իրավունքի դրույթների պահանջները, այլև բոլոր այն դեպքերում, երբ այդ օրենքը հակասում է Սահմանադրության այլ դրույթներին: Հիմնական իրավունքի պաշտպանության ոլորտին առնչվող ցանկացած օրենք, որը հակասում է Սահմանադրության այլ դրույթներին, հանգեցնում է դիմողի հիմնական իրավունքի խախտմանը, քանի որ միայն Սահմանադրության բոլոր ձևական և բովանդակային պահանջներին համապատասխանող օրենքը կարող է սահմանափակել հիմնական իրավունքը: Հետևաբար, յուրաքանչյուր հիմնական իրավունքի խախտման քննության ժամանակ Սահմանադրական դատարանը պարտավոր է ստուգել, թե արդյո՞ք վիճարկվող օրենքը, որով միջամտություն է իրականացվել հիմնական իրավունքի նկատմամբ, ինչպես *ձևական,* այնպես էլ *բովանդակային առումներով* համապատասխանում է Սահմանադրությանը: Այսպիսով, դիմողը կարող է վիճարկել ոչ միայն օրենքի այն դրույթները, որոնք ուղղակիորեն հակասում են իր հիմնական իրավունքի պահանջներին, այլև քննության առարկա դարձնել, օրինակ, այն հարցը, թե արդյո՞ք այդ օրենքն ընդունվել է Սահմանադրության ընթացակարգային պահանջներին համապատասխան, կամ արդյո՞ք այն բովանդակային առումով համապատասխանում է իրավական պետության սկզբունքին:

Եթե Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքը կամ այլ նորմատիվ իրավական ակտը ինքնին համապա-

տասխանում է Սահմանադրությանը, այն համապատասխան դիմումի առկայության դեպքում միաժամանակ պարտավոր է նաև ստուգել, թե արդյո՞ք այդ դրույթը կոնկրետ գործում կիրառվել է այլ՝ Սահմանադրությանը հակասող մեկնաբանությամբ: Դա նշանակում է, որ Սահմանադրական դատարանը պետք է ստուգի, թե օրենքի նորմը մեկնաբանելիս սովորական դատարանները, և հատկապես՝ Վճռաբեկ դատարանը, որքանով են հաշվի առել հիմնական իրավունքների պահանջները: Սահմանադրական դատարանի խնդիրը չէ՝ պարզել, թե մասնագիտական դատարանները Սահմանադրությանը համապատասխանող նորմը կիրառելիս թույլ են տվել հասարակ իրավունքի մեկնաբանության սխալ, թե ոչ: Միայն նորմի մեկնաբանության՝ Սահմանադրությանը հակասելու պարագայում է անհատական դիմումը հիմնավոր և ենթակա բավարարման:

Հնարավոր է, որ սովորական դատարանի կողմից ընդունված ակտից պարզ չլինի, թե ինչպես է այդ դատարանը մեկնաբանել օրենքի այս կամ այն նորմը: Դա չի նշանակում, որ Սահմանադրական դատարանը այստեղ անելիք չունի, քանի որ հաճախ հնարավոր է դատարանի դիրքորոշումներից և կայացրած ըստ էության ակտից վերականգնել, թե որ իրավական հանգամանքներն են դատարանի համար այս կամ այն վճիռը կայացնելու հիմք հանդիսացել: Եթե դատարանի վճիռը հնարավոր է ընդհանրացնել, ապա նման դեպքում մեթոդական առումով, թերևս, լավագույն մոտեցումը Ծումանի բանաձևի օգտագործումն է. դատարանի վճռին պետք է փորձել տալ օրենքի նորմին համապատասխանող ընդհանուր-վերացական ձև, այն մտովի պատկերացնել որպես օրենք և ստուգել դրա սահմանադրականությունը[144]:

[144] Տես նաև բաժին I, մաս 6՝ Նորմի մեկնաբանման և նորմի կիրառության տարանջատման գործնական բարդությունները:

V

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

28. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ

Ի՞նչ կարող է որոշել Սահմանադրական դատարանը անհատական դիմումի քննության արդյունքում:

Քանի որ անհատական դիմումի վարույթում ուղղակիորեն վիճարկվում է ոչ թե դատական ակտը, այլ դրա հիմքում ընկած իրավանորմը, ուստի անհատական դիմումի վարույթը նորմերի սահմանադրական վերահսկողության տեսակներից մեկն է: Նորմերի վերահսկողության բոլոր վարույթների համար[145] ՍԴՕ 68-րդ հոդվածի 9-րդ մասը սահմանում է Սահմանադրական դատարանի որոշումների եզրափակիչ մասի ձևակերպումները: Այն կարգավորում է Սահմանադրական

[145] ՍԴՕ, 68-71-րդ հոդվածներ:

դատարանի կողմից ընդունվող որոշումների բովանդակությունը՝ ինչպես վիճարկվող ակտը կամ դրա նորմը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու, այնպես էլ Սահմանադրությանը հակասող ճանաչելու պարագայում: ՍԴՕ 69-րդ հոդվածի 13-րդ մասի ուժով այդ բոլոր որոշումները կիրառելի են նաև անհատական դիմումի պարագայում:

Այսպես, անհատական դիմումի քննության արդյունքում Սահմանադրական դատարանը կարող է ընդունել հետևյալ 4 որոշումներից որևէ մեկը՝

1) վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին,
2) վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը Սահմանադրական դատարանի մեկնաբանությամբ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին,
3) վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին,
4) վիճարկվող նորմատիվ իրավական ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող ճանաչելու և նորմատիվ իրավական ակտի կամ դրա մի մասի իրավական ուժը կորցնելու ավելի ուշ ժամկետ սահմանելու մասին:

Որոշումների վերոնշյալ տեսակները սպառիչ են, և Սահմանադրական դատարանը իրավասու չէ սահմանել որոշման եզրափակիչ մասի որևէ այլ ձևակերպում:

ՍԴՕ 68-րդ հոդվածի 9-րդ մասից հետևում է, որ *Սահմանադրությանը համապատասխանության առումով* Սահմանադրական դատարանն ունի երկու այլընտրանք

- նորմը ճանաչել Սահմանադրությանը *համապատասխանող*, կամ
- նորմը ճանաչել Սահմանադրությանը *հակասող*:

ՍԴՕ 68-րդ հոդվածի 9-րդ մասը միաժամանակ պատասխան է տալիս այն հարցին, թե որոնք են Սահմանադրական դատարանի որոշումների *իրավական հետևանքները* Հայաստանի իրավական համակարգի համար: Յուրաքանչյուր պարագայում (թե՛ նորմը Սահմանադրությանը *համապատասխանող* և թե՛ Սահմանադրությանը հակասող ճանաչելու դեպքերում) Սահմանադրական դատարանը կրկին ունի երկուական այլընտրանք:

Եթե վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը ըստ Սահմանադրական դատարանի *սահմանադրական է*, ապա Սահմանադրական դատարանը՝

- սահմանափակվում է դրանք Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելով (1-ին կետ), կամ
- սահմանում է, որ վիճարկվող նորմերը սահմանադրական են միայն Սահմանադրական դատարանի կողմից տրված մեկնաբանությամբ (2-րդ կետ):

Ինչպես ՍԴՕ 68-րդ հոդվածի 9-րդ մասի 1-ին, այնպես էլ 2-րդ կետի պարագայում վիճարկվող նորմը պահպանում է իր տեղը երկրի իրավական համակարգում և մնում է պարտադիր բոլոր հասցեատերերի համար: Եթե իրավական առումով 1-ին կետի պարագայում իրավական համակարգում որևէ բան չի փոխվում, ապա 2-րդ կետի դեպքում նորմի բոլոր հասցեատերերի դեպքում պարտադիր է դառնում Սահմանադրական դատարանի կողմից նորմին տրված մեկնաբանությունը:

Նորմը Սահմանադրությանը *հակասող ճանաչելու դեպքում* Սահմանադրական դատարանը.

- վիճարկվող ակտը ամբողջությամբ կամ մասամբ ճանաչում է անվավեր կամ
- սահմանում է նորմատիվ իրավական ակտի կամ դրա մի մասի իրավական ուժը կորցնելու ավելի ուշ ժամկետ:

Սահմանադրական դատարանի որոշումների եզրափակիչ մասի ձևակերպումների վերլուծությունը ցույց է տալիս, որ Սահմանադրական դատարանի որոշումները ոչ միայն նորմը *վերացնող*, այլ նաև *կարգավորիչ* բնույթ ունեն: Սահմանադրական դատարանի նման իրավասության առկայությունն ունի սահմանադրաիրավական հիմնավորում: Անհատական դիմումի հնարավորությունը սահմանող Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը արդեն իսկ պահանջում է, որ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանը հաշվի առնի նաև վիճարկվող նորմին տրված մեկնաբանությունը: Դրանով Սահմանադրական դատարանից պահանջվում է, որ նորմը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելիս դատարանը նաև սահմանի, թե ո՞ր բովանդակությամբ է նորմը համահունչ Սահմանադրությանը[146]: Ակնհայտ է, որ նման լիազորությամբ Սահմանադրական դատարանը կարգավորիչ ներգործություն է ունենում օրենքի բովանդակության վրա: Նման իրավիճակ է առաջանում նաև այդ դեպքերում, երբ Սահմանադրական դատարանը միայն մասամբ է Սահմանադրությանը հակասող ճանաչում նորմատիվ իրավական ակտը (Սահմանադրություն, հոդված 170, մաս 3):

[146] Այս մասին առավել մանրամասն տես ստորև՝ մաս 3՝ Ակտը Սահմանադրական դատարանի մեկնաբանությամբ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին որոշումների իրավական հետևանքները (ՍԴՕ 68-րդ հոդվածի 9-րդ մասի 2-րդ կետ):

Սահմանադրական դատարանը նորմը մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու դեպքում օգտագործում է «*այնքանով, որքանով...*» ձևակերպումը, այսինքն՝ առանձնացնում է նորմի այն հակասահմանադրական բաղադրիչները, որոնք կորցնում են իրենց իրավաբանական ուժը:

Օրինակ՝

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասը՝ *այնքանով, որքանով* որ գրավի կիրառումը թույլատրելի է համարում միայն քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով՝ բացառելով նույն Օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված մյուս դեպքերը, ճանաչել Սահմանադրության 27 և 78-րդ հոդվածներին հակասող և անվավեր» (ՍԴՈ-1480, 15 հոկտեմբերի 2019 թ. կետ 1) *(ընդգծումը հեղինակներինն է)*:

Սահմանադրական դատարանը հաճախ նման մոտեցում է որդեգրում նաև *օրենսդրական բացերի* դեպքում: Սահմանադրական դատարանը ոչ թե անվավեր է ճանաչում օրենքի բացը (ինչն անհնարին է), այլ մասամբ անվավեր է ճանաչում բաց պարունակող նորմը՝ սահմանադրորեն պահանջվող կարգավորման անլիարժեքության պատճառով: Վիճարկվող նորմի տեքստի մեկնաբանության արդյունքում Սահմանադրական դատարանը բացահայտում է դրա անլիարժեքությունը Սահմանադրության տեսանկյունից և որոշման եզրափակիչ մասում սահմանում, թե որ մասով է այդ նորմը հակասահմանադրական և անվավեր:

Օրինակ՝

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածը՝ Սահմանադրության ուժով հատուկ պաշտպանությամբ օժտված պաշտոնատար անձանց գործառութային անձեռնմխելիությունը՝ *քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքների թվում չնախատեսելու մասով,* ճանաչել Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին և 75-րդ հոդվածին հակասող և անվավեր (ՍԴՈ-1476, 4 սեպտեմբերի 2019 թ.) (*ընդգծումը հեղինակներինն է*):

Եթե օրենսդրական բացի արդյունքում դիմումատուի համար առաջացել է հիմնական իրավունքի սահմանափակում, ապա Սահմանադրական դատարանը իրավասու է այն ճանաչել հակասահմանադրական և անվավեր: Իսկ այն դեպքերում, երբ օրենսդրական բացը հաղթահարելու համար անհրաժեշտ է միայն լրացուցիչ կարգավորում, որի բովանդակությունը պետք է սահմանվի Ազգային ժողովի կողմից, ապա Սահմանադրական դատարանը չի կարող ստանձնել օրենսդրի դեր: Առաջնորդելով ՍԴՕ 68-րդ հոդվածի 9-րդ մասի 4-րդ կետով՝ Սահմանադրական դատարանը, նման պարագայում, պետք է արձանագրի նորմի բացի առկայությունը և հակասությունը Սահմանադրությանը, սահմանի այդ բացի վերացման համար որոշակի ժամկետ:

Էականորեն շեղվելով տնօրինչականության սկզբունքից՝ ՍԴՕ-ն Սահմանադրական դատարանին հնարավորություն է ընձեռում դուրս գալ դիմումի առարկայի շրջանակներից և որոշում կայացնել վիճարկվող նորմի հետ փոխկապակցված այլ դրույթների հետ՝ պայմանով, որ դրանք զետեղված են միևնույն նորմատիվ իրավական ակտում:

ՍԴՕ 68-րդ հոդվածի 10-րդ մասը սահմանում է, որ «Որևէ նորմատիվ իրավական ակտի սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանը պարզում է նաև այդ ակտի վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված տվյալ ակտի այլ դրույթների սահմանադրականությունը: Հավաստիանալով վիճարկվող դրույթների հետ փոխկապակցված տվյալ նորմատիվ իրավական ակտի այլ դրույթների՝ Սահմանադրությանը հակասելու մեջ՝ Սահմանադրական դատարանը կարող է Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչել նաև այդ դրույթները»: Այս կարգավորումը արդարացված է, քանի որ ծառայում է իրավական որոշակիության հաստատմանը և դատարանին ազատում է այդ հարցի վերաբերյալ նորմերի վերահսկողության հետագա վարույթներից:

29. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱԿԱՍՈՂ ԵՎ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ՊԱՀԸ (ՍԴՕ 68-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 9-ՐԴ ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏ)

Ո՞ր պահից է նորմը անվավեր:

Հայաստանի իրավական համակարգում, որը կառուցված է նորմերի աստիճանակարգության վրա (Սահմանադրություն, հոդված 5), եթե որևէ նորմատիվ ակտի դրույթ հակասում է իրենից ավելի բարձր աստիճանի վրա գտնվող իրավանորմին, ապա այն իրավասու մարմնի կողմից ճանաչվում է անվավեր: Անվավերությունը նշանակում է, որ տվյալ նորմը չունի իրավաբանական ուժ, այսինքն՝ այն չի գործում[147]:

[147] Գ. Հովհաննիսյանի այն պնդումը, թե ավելի բարձր աստիճանի վրա

Երբ նորմը իրավասու մարմնի կողմից ճանաչվում է անվավեր, ապա, առաջին հերթին, առաջանում է այն հարցը, թե ո՞ր պահից է այն անվավեր՝ վիճարկվող նորմն անվավեր ճանաչելո՞ւ (ex nunc), թե՞ այդ նորմն ընդունվելու (ex tunc) պահից: Բացի այդ, անհրաժեշտ է կարգավորել, թե ի՞նչ իրավական հետևանքներ է առաջացնում նորմի անվավերությունը դրա վրա հիմված այլ նորմատիվ և անհատական ակտերի համար:

Նորմի անվավերության պահի որոշման խնդրում Հայաստանի իրավակարգի ելակետը ոչ իրավաչափ նորմերի *վերացնելիության* տեսությունն է[148]: Ըստ այդմ, իրավանորմի անվավերությունը վրա է հասնում դրա ոչ իրավաչափ լինելը արձանագրելու պահից (ex nunc)[149]: Անվավեր ճանաչված նորմը նման պաշտոնական արձանագրման պահից, պատկերավոր ասած, «վերացվում» է երկրի իրավական համակարգից: ՍԴՕ 68-րդ հոդվածի 11-րդ մասի 1-ին նախադասությունը ուղղակիորեն ամրագրում է այն ընդհա-

---

գտնվող իրավանորմին հակասող նորմը «հակասության ծագման պահից ... անվավեր է ու այլևս իրավաբանական ուժ չունի», չի տարբերակում նորմի անվավերությունը նորմի իրավաբանական ուժը կորցնելու պահից: Անվավերությունը տարբեր աստիճանի նորմերի միջև հակասության հետևանքն է և պարզապես նշանակում է, որ նորմը իրավաբանական ուժ չունի: Անվավերության հասկացությունը դեռևս պատասխան չի տալիս այն հարցին, թե որ պահից է նորմը անվավեր՝ հակասության ծագմա՞ն, թե՞ հակասության ճանաչման: Տե՛ս Գ. Հովհաննիսյան, Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն, Երևան, 2020, էջ 135:

148 Վերացնելիության և ipso-iure-առոչնչության վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս Գ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 137-140:

149 Այս մոտեցման ակունքը Ավստրիայի Սահմանադրության 140-րդ հոդվածի 3-րդ մասն է, ըստ որի՝ հակասահմանադրական օրենքի կամ դրա մի մասի վերացումը ուժի մեջ է մտնում Սահմանադրական դատարանի որոշման հրապարակման օրը, եթե դատարանը չի սահմանում ուժը կորցնելու այլ ժամկետ: Արևելաեվրոպական և նախկին ԽՍՀՄ բոլոր երկրները հետևում են ավստրիական մոդելին: Ավստրիական մոդելի հակոտնյան գերմանական առոչնչության մոդելն է, ըստ որի՝ Սահմանադրությանը հակասող նորմը ipso iure առոչինչ է Սահմանադրության հետ հակասության առաջացման պահից (ex tunc):

նուր կանոնը, ըստ որի՝ «Վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին որոշում ընդունվելու դեպքում այն *իրավական ուժը կորցնում է* Սահմանադրական դատարանի *որոշումն ուժի մեջ մտնելու պահից...*»:

30. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱԿԱՍՈՂ ԵՎ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ (ՍԴՕ 68-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 9-ՐԴ ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏ)

Ի՞նչ հետևանքներ ունեն անհատական դիմումով կայացված Սահմանադրական դատարանի որոշումները:

Եթե ex nunc կանոնի իրավական հետևանքները ապագայի համար ակնհայտ են, ապա հարց է առաջանում, թե ինչպե՞ս վարվել այն բոլոր իրավական ակտերի հետ, որոնք անցյալում են հիմնվել անվավեր ճանաչված իրավանորմի վրա: Ի՞նչ իրավական հետևանքներ են առաջանում անցյալում ընդունված ինչպես նորմատիվ, այնպես էլ անհատական ակտերի համար:

Վերացնելիության տեսության մաքուր կիրառման պարագայում նորմի անվավերությունը պետք է գործեր միայն ապագայի համար և որևէ ազդեցություն չունենար անցյալում կատարված փաստերի վրա: Նման մոտեցման միակ արդարացումը կլիներ իրավական անվտանգության ապահովումը, անցյալում առաջացած իրավական հարաբերությունները հարցականի տակ չդնելը: Սակայն նման մոտեցումը լիովին կանտեսեր նյութական արդարության վերականգման անհրաժեշտությունը: Եթե ՍԴՕ 68-րդ հոդվածի

11-րդ մասի 1-ին նախադասությամբ սահմանված վերոհիշյալ նորմը լիներ բացարձակ և չունենար որևէ բացառություն, ապա դա կնշանակեր, որ, մասնավորապես, անհատական դիմումի պարագայում դիմումատուն հետապնդում է միայն ընդհանուր շահին միտված նպատակ և անձամբ որևէ օգուտ չի ստանում նորմի անվավերության ճանաչումից: Արդյունքում, նման մոտեցումը միակողմանիորեն նախընտրությունը կտար իրավական անվտանգության սկզբունքին՝ ամբողջությամբ բացառելով արդարության վերականգնումը: Իրավական պետության սահմանադրական սկզբունքի բաղադրատարր հանդիսացող այս երկու սկզբունքները, սակայն, պետք է ներդաշնակեցվեն միմյանց հետ, և այդ առումով օրենսդիրն ունի հայեցողության լայն դաշտ՝ ինչպես նորմատիվ, այնպես էլ անհատական ակտերի վրա ներգործության տեսանկյունից:

Արդարության վերականգնման պահանջը նկատի ունենալով՝ ՍԴՕ 68-րդ հոդվածի նույն 11-րդ մասը ընդհանուր կանոնից բացառության դեպքեր է սահմանում ՍԴՕ 68-րդ հոդվածի 13-րդ և 15-րդ մասերով սահմանված դեպքերի համար, որոնց անդրադարձ է կատարվում ստորև:

30.1. Իրավական հետևանքները այլ նորմատիվ իրավական ակտերի համար

Ի՞նչ հետևանք ունի մի նորմատիվ իրավական ակտի անվավերությունը այլ նորմատիվ իրավական ակտերի համար:

ՍԴՕ 68-րդ հոդվածի 12-րդ մասը սահմանում է, որ «Անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտի կատարումն ապահոված այլ նորմատիվ իրավական ակտերի համապատասխան դրույթները կորցնում են իրենց իրավաբանական

ուժը՝ վիճարկվող ակտի ուժը կորցնելու հետ միաժամանակ»:

Անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտի կատարումն ապահոված այլ նորմատիվ իրավական ակտի ուժը կորցնելը նշանակալից է ոչ միայն ապագայի համար: Եթե նման նորմատիվ ակտի հիման վրա ընդունվել է ՍԴՕ 68-րդ հոդվածի 13-րդ մասի իմաստով հանրության կամ պետության համար ծանր հետևանքներ առաջացնող վարչական կամ դատական ակտ, ապա այդ ակտը կողմի դիմումի հիման վրա ենթակա է վերանայման ակտն ընդունած մարմնի կողմից՝ օրենքով սահմանված կարգով (ՍԴՕ, հոդված 68, մաս 14):

30.2. Իրավական հետևանքները դատական և վարչական ակտերի համար

Արդյո՞ք Սահմանադրական դատարանի որոշումն ունի հետադարձ ուժ դատական և վարչական ակտերի համար:

Այն անհատական ակտերի համար, որոնք հիմնվել են Սահմանադրական դատարանի կողմից անվավեր ճանաչված իրավանորմերի վրա, ՍԴՕ-ն նախատեսում է որոշակի իրավական հետևանքները, որոնք կարգավորված են 68-րդ հոդվածի 11-րդ մասի 2-րդ նախադասությունում, և նույն հոդվածի 13-15-րդ մասերում:

ՍԴՕ 68-րդ հոդվածի 11-րդ մասի 2-րդ նախադասությունը սահմանում է *ընդհանուր կանոնը,* իսկ մյուս դրույթները՝ ընդհանուր կանոնից *բացառությունները*:

ՍԴՕ 68-րդ հոդվածի 11-րդ մասի 2-րդ նախադասության համաձայն անվավեր ճանաչված ակտերի վրա հիմնված՝ ***Սահմանադրական դատարանի որոշման ընդունմանը***

նախորդող ժամանակահատվածում կատարված վարչական կամ դատական ակտերը ***վերանայման ենթակա չեն:*** Նման կարգավորմամբ օրենսդիրը սկզբունքորեն նախապատվություն է տալիս իրավական որոշակիության պահանջին: Վերանայման ենթակա չլինելու դրույթը, բնականաբար, վերաբերում է միայն օրինական ուժի մեջ մտած և արդեն իսկ կատարված դատական և վարչական ակտերին:

Ելնելով արդարությունը վերականգնելու պահանջից՝ օրենսդիրը երկու տեսակի բացառություններ է սահմանում նշված ընդհանուր կանոնից՝ տարբերակված մոտեցում ցուցաբերելով մի կողմից՝ քաղաքացիական կամ վարչական բնույթի (պատասխանատվություն չնախատեսող) նորմատիվ իրավական ակտերի և մյուս կողմից՝ քրեական կամ վարչական պատասխանատվություն սահմանող օրենքի համար:

Առաջին բացառությունը սահմանված է ՍԴՕ 68-րդ հոդվածի 13-րդ մասում, որը լիազորում է Սահմանադրական դատարանին նորմը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին որոշումը «տարածելու նաև այդ որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա, *եթե այդպիսի որոշում չընդունելը կարող է հանրության կամ պետության համար առաջացնել ծանր հետևանքներ*»: Ծանր հետևանքների չափանիշները օրենսդիրը չի հստակեցնում, ինչը նշանակում է, որ այդ խնդիրը դրված է Սահմանադրական դատարանի վրա:

Նման որոշման համար ՍԴՕ 68-րդ հոդվածի 14-րդ մասը սահմանում է 3 տարվա ժամկետային սահմանափակում և նախատեսում, որ «Սահմանադրական դատարանի որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող երեք տարիների ընթացքում կատարված վարչական կամ դատական ակտերը կողմի դիմումի հիման վրա ենթակա են վերանայման վարչական կամ դատական ակտն ընդունած մարմնի կողմից՝ օրենքով

սահմանված կարգով»: ՍԴՕ 68-րդ հոդվածի 13-րդ և 15-րդ մասերի համակարգային մեկնաբանությունից բխում է, որ ՍԴՕ 68-րդ հոդվածի 14-րդ մասում հիշատակված «դատական ակտերը» քաղաքացիական և վարչական դատավարություններում ընդունված դատական ակտերն են: Ըստ այդմ, Քաղաքացիական դատավարության և Վարչական դատավարության օրենսգրքերը սահմանում են համապատասխան դատարանների կողմից այդ դատական ակտերի վերանայման կարգը: Այդ օրենսգրքերը վիճարկվող նորմատիվ իրավական ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին Սահմանադրական դատարանի որոշումը դիտարկում են որպես նոր հանգամանք (Քաղաքացիական դատավարության օրենսգիրք, հոդված 419, մաս 1, կետ 1, Վարչական դատավարության օրենսգիրք, հոդված 182, մաս 1, կետ 1): Նոր հանգամանքի հիմքով բողոք կարող է բերվել Սահմանադրական դատարանի համապատասխան որոշումը հրապարակվելու օրվանից երեք ամսվա ընթացքում (Քաղաքացիական դատավարության օրենսգիրք, հոդված 420, մաս 1, կետ 1, Վարչական դատավարության օրենսգիրք, հոդված 185, մաս 1)[150]:

[150] Չնայած այն հանգամանքին, որ Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը և Վարչական դատավարության օրենսգիրքը միմյանցից տարբերվող ձևակերպումներ են պարունակում նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման դիմում ներկայացնելու ժամկետի սկսման պահի վերաբերյալ (առաջին դեպքում՝ «ՀՀ պաշտոնական տեղեկագրում հրապարակվելու օրվանից», իսկ երկրորդ դեպքում՝ «համապատասխան հիմքն ի հայտ գալուց հետո»), այս հարցում ուղենիշային է Սահմանադրական դատարանի մասին օրենքը՝ որպես սահմանադրական օրենք, որին պետք է համապատասխանեն բոլոր դատավարական օրենսգրքերը: ՍԴՕ 61-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասության համաձայն՝ Սահմանադրական դատարանի ըստ էության որոշումները ուժի մեջ են մտնում Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում հրապարակվելու օրվանից: Սահմանադրական դատարանը, դեռևս 2016թ., երբ գործում էր Սահմանադրական դատարանի մասին 2006թ. օրենքը, և որը ժամանակագրական խզում էր թույլ տալիս Սահմա-

ՍԴՕ 68-րդ հոդվածի 11-րդ մասի 2-րդ նախադասությունով սահմանված հետադարձ ուժի արգելքի ընդհանուր կանոնից ***երկրորդ բացառությունը*** վերաբերում է քրեական և վարչական պատասխանատվություն սահմանող դատական և վարչական ակտերին: ՍԴՕ 68-րդ հոդվածի 15-րդ մասի համաձայն՝ «Քրեական կամ վարչական պատասխանատվություն սահմանող օրենքի վիճարկվող դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին որոշում ընդունվելու դեպքում իրավական ուժը կորցնում է իր ուժի մեջ մտնելու պահից, իսկ դրա կիրառման վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող ժամանակահատվածում ընդունված դատական, իսկ կողմի դիմումի հիման վրա՝ նաև վարչական ակտերը ենթակա են վերանայման օրենքով սահմանված կարգով»: Այս բացառությունը հիմնվում է այն տրամաբանության վրա, որ քրեական և վարչական պատասխանատվություն նախատեսող դատական ակտերն անձի փաստացի վիճակի վրա ազդեցության առումով ունեն առանձնակի նշանակություն: Մասնավորապես, այս դեպքում հաշվի է առնվել անձի նկատմամբ քրեական օրենսգրքով կամ վարչական պատասխանատվության վերաբերյալ օրենքով հարկադրանքի միջոց կիրառելու և դրանից բխող հետևանքների առկայությունը և դրանց վերացման իրական հնարավորությունը[151]:

նադրական դատարանի որոշման հրապարակման և հրատարակման միջև, անդրադառնալով Վարչական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորման սահմանադրականությանը, նշել էր, որ «ի հայտ գալուց հետո» բառակապակցության սահմանադրաիրավական բովանդակությունից հետևում է, որ այն շահագրգիռ անձանց համար իրավական հետևանք է առաջացնում «ՀՀ սահմանադրական դատարանի որոշումը հրապարակվելուց հետո եռօրյա ժամկետում համացանցի՝ ՀՀ սահմանադրական դատարանի պաշտոնական էջում տեղակայելուց հետո» ՍԴՈ-1275, 7-րդ կետ:

151 5 ապրիլի 2008թ. ՍԴՈ-751, 4-րդ կետ:

Քրեական դատավարության օրենսգրքի[152] 403-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը Սահմանադրական դատարանի որոշումը դիտում է որպես նոր հանգամանքներով բացառիկ վերանայման հիմք: Բացառիկ վերանայման բողոքը կարող է ներկայացվել չորս ամսվա ընթացքում՝ այն պահից, երբ բողոք բերելու իրավունք ունեցող անձն իմացել է կամ կարող էր իմանալ համապատասխան հանգամանքների առաջացման կամ հայտնաբերման մասին:

Ընդհանուր առմամբ, պետք է նկատել, որ օրենսդիրը, թեև որպես ընդհանուր կանոն դիտարկում է Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված նորմի հիման վրա առաջացած իրավահարաբերությունների կայունության պահպանումը, այդուհանդերձ, օրենքը նախատեսում է բավական լայն հնարավորություններ՝ վերականգնելու խախտված արդարությունը: Դա հատկապես վերաբերում է քրեական դատավճիռներին և վարչական իրավախախտումներին, որտեղ մարդու ազատության ոլորտին միջամտությունը առավել ինտենսիվ է և զգայուն:

Վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին Սահմանադրական դատարանի որոշումը բացարձակ խոչընդոտ է այդ ակտի հիման վրա ընդունված և դեռևս չկատարված վարչական և դատական ակտերի կատարման համար: ՍԴՕ 68-րդ հոդվածի 11-րդ մասի 2-րդ նախադասության վերջին մասի համաձայն՝ «չկատարված վարչական և դատական ակտերի կատարումը Սահմանադրական դատարանի որոշումը հրապարակելուց հետո անհապաղ դադարեցվում է իրավասու վարչական մարմնի կամ դատարանի որոշմամբ»:

[152] Ընդունվել է 2021 թվականի հունիսի 30-ին, ՀՕ-306-Ն, Միասնական կայք 2021.07.26-2021.08.08, Պաշտոնական հրապարակման օրը 28.07.2021:

31. ԱԿՏԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ (ՍԴՕ 68-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 9-ՐԴ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏ)

Ի՞նչ հետևանք ունի Սահմանադրական դատարանի կողմից տրված մեկնաբանությունը:

Հայաստանում ի սկզբանե, 1995թ. Սահմանադրության ընդունումից հետո, իրավական ակտի սահմանադրականության որոշումը Սահմանադրական դատարանի կողմից ընկալվել է ոչ թե միայն այնպիսի գործընթաց, երբ դատարանը պարզապես վերացականորեն գնահատում է այդ նորմը, այլև միաժամանակ իր գնահատականի մեջ ներառում է ձևավորված իրավակիրառական պրակտիկան: Առնվազն 2015թ. սահմանադրական փոփոխություններից հետո, անկասկած, նորմերի վերահսկողության վարույթներում Սահմանադրությունը Սահմանադրական դատարանից պահանջում է, որ վիճարկվող իրավանորմը գնահատելիս դատարանը հաշվի առնի, թե այն ինչպես է մեկնաբանվել իրավակիրառական պրակտիկայում և որոշի, թե այդ նորմի հնարավոր տարբեր մեկնաբանություններից ո՞րն է համապատասխանում Սահմանադրությանը[153]:

Օրենքի նորմը հակասահմանադրական է, եթե դրա մեկնաբանությունը անխուսափելիորեն հանգեցնում է Սահմանադրության հետ անհամատեղելիության: Ուստի, առաջին հերթին, պետք է օրենքի նորմը ենթարկվի մեկնաբանության՝ նորմի մեկնաբանման այն կանոններին համա-

[153] Այս մասին առավել մանրամասն տե՛ս բաժին I, մաս 3՝ Սահմանադրական գանգատի իրավական ամրագրումը Հայաստանում:

պատասխան, որոնք լայնորեն ճանաչված են իրավագիտությունում և Հայաստանում պոզիտիվացված են «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածում: Այդ հոդվածը աներկբայորեն պահանջում է օրենսդրի իրական կամքի պարզումը. «Նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս *այն ընդունող մարմնի նպատակը...» (ընդգծումը հեղինակներինն է)*: Ակնհայտ է, որ օրենսդրի նպատակը չի կարող այլ բան լինել, քան իր կամքը: Նման ձևակերպմամբ օրենքի այս նորմը ուղղակիորեն մերժում է մեկնաբանման օբյեկտիվ տեսությունը, ըստ որի՝ նորմի մեկնաբանման ժամանակ վճռորոշը ոչ թե օրենսդրի կամքն է, այլ օրենքի այսպես կոչված՝ օբյեկտիվ «կամքը»:

ՍԴՕ 64-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը, իրավական որոշակիության պահանջից ելնելով, սահմանում է, որ Սահմանադրական դատարանը նորմը Սահմանադրական դատարանի մեկնաբանությամբ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու դեպքում պարտավոր է որոշման եզրափակիչ մասում շարադրել «վիճարկվող ակտի կամ դրա վիճարկվող դրույթի համառոտ սահմանադրաիրավական բովանդակությունը»: Սահմանադրական դատարանի կողմից տրված Սահմանադրությանը համապատասխանող մեկնաբանությունը դառնում է միակ պարտադիրը բոլոր իրավակիրառողների համար[154]:

Այդուհանդերձ, ՍԴՕ-ն պատասխան չի տալիս այն հարցին, թե ի՞նչ կառուցակարգերից կարող է օգտվել անձը այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանը նորմը ճանաչել է սահմանադրական՝ իր մեկնաբանությամբ, սակայն հետագայում դատարանը մեկ այլ անձի նկատմամբ

[154] Այս մասին տես նաև վերը, մաս 28՝ Սահմանադրական դատարանի ըստ էության որոշումների բովանդակությունը և եզրափակիչ մասի ձևակերպումները:

նույն նորմը կրկին կիրառում է հակասահմանադրական մեկնաբանությամբ:

32. ԱԿՏԸ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱԿԱՍՈՂ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՆԵԼՈՒ ԱՎԵԼԻ ՈՒՇ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ (ՍԴՕ 68-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 9-ՐԴ ՄԱՍԻ 4-ՐԴ ԿԵՏ)

Արդյո՞ք Սահմանադրական դատարանը կարող է հետաձգել նորմի ուժը կորցնելու ժամկետը:

2005թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ[155] Սահմանադրական դատարանը առաջին անգամ իրավունք ստացավ իր որոշմամբ սահմանելու Սահմանադրությանը չհամապատասխանող նորմատիվ ակտի կամ դրա մի մասի իրավական ուժը կորցնելու ավելի ուշ ժամկետ: ՍԴՕ 68-րդ հոդվածի 19-րդ մասը սահմանում է, որ. «Եթե Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կամ դրա որևէ դրույթի՝ Սահմանադրական դատարանի որոշման հրապարակման պահին Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելն անխուսափելիորեն կառաջացնի այնպիսի ծանր հետևանքներ պետության կամ հանրության համար, որոնք կխաթարեն այդ պահին տվյալ նորմատիվ իրավական ակտի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, ապա Սահմանադրական դատարանը, տվյալ ակտը ճանաչելով Սահմանադրությանը հակասող, իր որոշմամբ հետաձգում է այդ ակտի իրավա-

[155] Հոդված 102, մաս 3:

կան ուժը կորցնելը»՝ իրավասու մարմնին հնարավորություն տալով վիճարկվող իրավակարգավորումը համապատասխանեցնելու Սահմանադրական դատարանի որոշման պահանջներին[156]:

Այդպիսով, իրավանորմը հակասահմանադրական ճանաչելու պարագայում, Սահմանադրական դատարանը պարտավոր չէ այն միաժամանակ ճանաչել անվավեր, այլ կարող է հետաձգել այդ ակտի իրավական ուժը կորցնելը: Նման կարգավորումը անհրաժեշտ է հատկապես այն դեպքերում, երբ նորմի անվավեր ճանաչման հետևանքով առաջացող «իրավական վակուումը» ստեղծում է այնպիսի իրավական դրություն, որն ավելի է հեռանում Սահմանադրության պահանջներից: Հակասահմանադրական նորմը միանգամից անվավեր ճանաչելուց երբեմն պետք է խուսափել նաև այն դեպքերում, երբ գոյություն ունեն հակասահմանադրական իրավիճակը վերացնելու տարբեր եղանակներ (օրինակ, երբ խախտվում է հավասարության սկզբունքը): Սահմանադրական դատարանը նման պարագայում կարող է նախապատվությունը տալ խորհրդարանի կողմից հակասահմանադրական նորմը վերացնելուն, ինչն ավելի համահունչ է իշխանությունների բաժանման սկզբունքին:

Սահմանադրական դատարանը իրավասու է ինքը որոշելու այն ժամկետը, որի ընթացքում օրենսդիրը պարտա-

[156] Օրինակ՝ 12 մայիսի 2020թ. ՍԴՈ-1529 որոշման 4.4 կետ (թեև որոշումը անհատական գանգատի գործով չէ), որով Սահմանադրական դատարանը գտել է, որ նորմը «Սահմանադրական դատարանի որոշման հրապարակման պահին Սահմանադրությանը հակասող ճանաչելը հարկային վարչարարության շրջանակում *անխուսափելիորեն կառաջացնի այնպիսի ծանր հետևանքներ պետության կամ հանրության համար, որոնք կխաթարեն վերոհիշյալ դրույթի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը*» և որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթի ուժը կորցնելու համար սահմանել է ավելի ուշ վերջնաժամկետ՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին վիճարկվող իրավակարգավորումը համապատասխանեցնելու որոշման պահանջներին:

վոր է ընդունել Սահմանադրական դատարանի որոշմանը համապատասխանող նոր կարգավորումներ: ՍԴՕ 68-րդ հոդվածի 20-րդ մասի համաձայն՝ «Նորմատիվ իրավական ակտի ուժը կորցնելու հետաձգումը պետք է համարժեք լինի այն ժամանակահատվածին, որի ընթացքում հնարավոր և անհրաժեշտ է ձեռնարկել սույն հոդվածի 19-րդ մասում նշված հետևանքները կանխելուն ուղղված միջոցները»: ՍԴՕ 66-րդ հոդվածի 2-րդ մասը խնդրո առարկա իրավիճակում պարտավորեցնում է նաև Կառավարությանը մինչև Սահմանադրական դատարանի սահմանած ժամկետի ավարտը «համապատասխան օրենքի նախագիծ կամ նախագծերի փաթեթ ներկայացնելու միջոցով» ապահովել որոշման կատարումը:

ՍԴՕ նման ձևակերպումից ակնհայտ է, թե ինչ անընդունելի իրավիճակ կարող է առաջանալ հակասահմանադրական ակտի ուժը կորցնելը հետաձգելու պարագայում: Բնական է, որ չկա որևէ երաշխիք, որ խորհրդարանը կունենա անհրաժեշտ մեծամասնություն՝ ընդունելու առաջարկված նախագիծը: Բացի այդ, չկա նաև որևէ երաշխիք, որ կառավարությունը կներկայացնի Սահմանադրական դատարանի որոշմանը համապատասխանող օրինագիծ: Արդյունքում, չի բացառվում, որ երկար ժամանակով կարող է լինել մի այնպիսի իրավիճակ, երբ նորմը հակասահմանադրական է, սակայն մնում է գործողության մեջ: 2018թ. ընդունված Սահմանադրական դատարանի մասին սահմանադրական օրենքը չներառեց նախորդ՝ 2006թ. օրենքում (68-րդ հոդվածի 15-րդ մասի 2-րդ պարբերություն) առկա այն դրույթը, ըստ որի՝ նորմատիվ իրավական ակտի ուժը կորցնելու հետաձգման դեպքում «մինչև ակտի իրավաբանական ուժը կորցնելը ակտը համարվում է Սահմանադրությանը համա-

պատասխանող»[157]: Այս նորմի ուժը կորցնելուց հետո անորոշ է մնում այն հարցը, թե արդյո՞ք հակասահմանադրական ճանաչված, սակայն իր իրավական ուժը պահպանած իրավանորմը անվերապահորեն պարտադիր է կիրառման համար: Այս խնդիրը հատկապես կարևոր է անհատական դիմումի պարագայում[158]:

33. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԴԻՄՈՂԻ ԵՎ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

Ո՞ր դեպքում կարող է Սահմանադրական դատարանի որոշումը որպես նոր հանգամանք դատական ակտի վերանայման հիմք լինել:

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե ինչպիսի իրավական հետևանքներ են առաջանում անհատական դիմումի պարագայում մի կողմից՝ դիմողի, և մյուս կողմից՝ այլ անձանց համար, ՍԴՕ 68-րդ հոդվածի 9-րդ մասում թվարկված Սահմանադրական դատարանի 4 տարբեր որոշումների դեպքում:

[157] 11 մայիսի 2007թ. ՍԴՈ-701 որոշման մեջ Սահմանադրական դատարանը զարգացրել էր այս կարգավորման մեկնաբանությունը, նշելով, որ ՍԴՕ 68-րդ հոդվածի 15-րդ մասի երկրորդ պարբերության դրույթի ձևակերպումն «իրավակիրառական պրակտիկայում պետք է մեկնաբանվի Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի համատեքստում, որ Սահմանադրությունը հնարավոր է դարձնում սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը չհամապատասխանող նորմի ժամանակավորապես կիրառումը», կետ 6:

[158] Նույն ՍԴՈ-701 որոշման մեջ Սահմանադրական դատարանը արձանագրել էր, որ. «Ինչ վերաբերում է նոր հանգամանքներով քաղաքացու իրավունքների պաշտպանության հնարավորությանը, ապա այն առաջ է գալիս Սահմանադրական դատարանի որոշմամբ իրավական ակտի կամ դրա որևէ դրույթի իրավական ուժը կորցնելու, այսինքն՝ հետաձգման ժամկետը լրանալու պահից՝ օրենքով սահմանված կարգով»:

Երբ Սահմանադրական դատարանը բավարարում է դիմողի պահանջը, այսինքն, երբ Սահմանադրական դատարանը ընդունում է ՍԴՕ 68-րդ հոդվածի 9-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերում թվարկված որոշումներից որևէ մեկը՝ ՍԴՕ 69-րդ հոդվածի 10-րդ մասը կարգավորում է դիմողի համար իրավական հետևանքները: Ըստ այդ հոդվածի՝ «դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով»:

Քանի որ, ի տարբերություն լրիվ սահմանադրական գանգատի, Հայաստանում Սահմանադրական դատարանի որոշումները ուղղակիորեն չեն ներգործում դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտի վրա, դիմողի հիմնական իրավունքների պահպանման տեսանկյունից վճռորոշ է դառնում նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով դատական ակտի վերանայումը: Այսպիսով, դիմողի հիմնական իրավունքի պաշտպանությունը իրագործվում է երկու փուլով՝

- նախ՝ Սահմանադրական դատարանը որոշում է դիմողի նկատմամբ կիրառված նորմի սահմանադրականությունը,
- այնուհետև՝ Սահմանադրության հետ հակասության պարագայում, դա հիմք է հանդիսանում դիմողի նկատմամբ կայացված դատական ակտը վերանայելու համար:

Դիմող չհանդիսացող այն անձանց համար, որոնց նկատմամբ նույնպես կիրառվել է Սահմանադրությանը հակասող նորմը կամ հակասահմանադրական մեկնաբանությամբ նորմը, հաջողություն ունեցած անհատական դիմումի հետևանքները կարգավորված են ՍԴՕ 69-րդ հոդվածի 11-րդ մասում: Ըստ այդմ, ՍԴՕ 69-րդ հոդվածի 10-րդ մասը «տարածվում է նաև այն անձանց վրա, որոնք Սահմա-

նադրական դատարանում դիմումը մուտքագրվելու օրվա դրությամբ դեռևս պահպանել էին նույն հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրենց իրավունքը, սակայն չէին դիմել Սահմանադրական դատարան»: Այստեղ խոսքն այն անձանց մասին է, որոնք իրենց նկատմամբ կայացված և օրինական ուժի մեջ մտած վերջնական դատական ակտը *դեռևս չեն հասցրել վիճարկել* Սահմանադրական դատարանում *մինչև* նույն հարցով մեկ այլ անձի կողմից անհատական դիմումով Սահմանադրական դատարան դիմելը:

ՍԴՕ 69-րդ հոդվածի 11-րդ մասը, սակայն, անտեսում է ***այն անձանց*** իրավունքները, ***որոնց նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը ուժի մեջ է մտել Սահմանադրական դատարանում այլ անձի դիմումը մուտքագրվելուց հետո,*** թեև մինչև Սահմանադրական դատարանի կողմից որոշման կայացումը: Քանի որ ՍԴՕ 29-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը թույլ չի տալիս գործի քննություն այն դեպքում, երբ դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա ընթանում է դատաքննություն, ապա նշված անձինք զրկվում են անհատական դիմում ներկայացնելու հնարավորությունից և, ըստ այդմ, չեն կարող ի նպաստ իրենց օգտագործել այլ անձի դիմումի հիման վրա կայացված Սահմանադրական դատարանի որոշումը: Անհատական դիմումների հիման վրա քննության առնելով ՍԴՕ 69-րդ հոդվածի 11-րդ մասի սահմանադրականության հարցը, Սահմանադրական դատարանը որոշել է, որ այդ դրույթը *«այն մասով, որ չի նախատեսում այն անձանց նկատմամբ կայացված վերջնական դատական ակտերի՝ նոր հանգամանքի հիմքով վերանայում, որոնք դատական պաշտպանության միջոցները սպառել են Սահմանադրական դատարանում այլ անձի դիմումը մուտքագրվելուց հետո, սակայն նրանց նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականության*

հարցի վերաբերյալ այլ անձի դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանում գործի դատաքննություն սկսելու օրվա կամ այդ հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշման հրապարակման օրվա դրությամբ լրացած չի եղել նրանց կողմից Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու համար սահմանված վեցամսյա ժամկետը», հակասում է Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներին և անվավեր է[159]: Ուստի, ՍԴՈ-1645 որոշումից հետո նշված անձանց նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը ենթակա է վերանայման նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով:

Այսպիսով, ՍԴՈ-1645 որոշումից հետո ՍԴՕ 69-րդ հոդվածի 11-րդ մասը ներառում է ֆիզիկական և իրավաբանական անձանց երկու խումբ՝

1) «անձինք, որոնց նկատմամբ համապատասխան դրույթը վերջնական դատական ակտով կիրառվել է, և նրանք ***դատական պաշտպանության միջոցներն սպառել են մինչև այլ անձի դիմումը Սահմանադրական դատարանում մուտքագրվելու օրը*** և այդ օրվա դրությամբ չեն կորցրել Սահմանադրական դատարան դիմելու իրավունքը (օրենքով սահմանված ժամկետն ավարտվելու հետևանքով)»,

2) «անձինք, որոնք ***դատական պաշտպանության միջոցներն սպառել են այլ անձի դիմումը Սահմանադրական դատարանում մուտքագրվելու և այդ դիմումի հիման վրա գործով Սահմանադրական դատարանի կողմից որոշումը հրապարակելու միջև ընկած ժամանակահատվածում***, և Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն զրկված են եղել Սահմանադրական դատարան դիմելու հնարավորությունից»[160]:

---

[159] 29 մարտի 2022թ. ՍԴՈ-1645:
[160] ՍԴՈ-1645, կետ 5.3:

Այս երկու խմբերի պարագայում էլ խոսքը այն ֆիզիկական և իրավաբանական անձանց մասին է, որոնց նկատմամբ արդեն կայացվել է օրինական ուժի մեջ մտած վերջնական դատական ակտ: Բնական է, որ ընթացող դատավարությունների պարագայում դատարանը պարտավոր է արդեն իսկ առաջնորդվել նորմի սահմանադրականության վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշմամբ և չկիրառել հակասահմանադրական նորմը կամ կիրառել նորմը Սահմանադրական դատարանի կողմից տրված մեկնաբանությամբ:

Սահմանադրական դատարանը ՍԴՈ-1645 որոշման մեջ պարզորոշ կերպով առանձնացրել է դատարաններում քննվող կամ քննված գործերով դատավարության մասնակիցների համար այն երեք խմբերը, որոնց համար իրավական հետևանքներ են առաջանում, երբ Սահմանադրական դատարանը նորմատիվ իրավական ակտի դրույթը ճանաչում է Սահմանադրությանը հակասող և անվավեր, կամ երբ վիճարկվող նորմը Սահմանադրական դատարանը Սահմանադրությանը համապատասխանող է ճանաչում Սահմանադրական դատարանի մեկնաբանությամբ: Բոլոր այն ֆիզիկական և իրավաբանական անձանց համար, որոնք ընդգրկված չեն այդ խմբերում, անհատական դիմումի վարույթում Սահմանադրական դատարանի ընդունած վերոհիշյալ որոշումները իրավական նշանակություն են ստանում միայն այն դեպքերում, երբ Սահմանադրական դատարանը անհատական դիմումի քննության արդյունքում կիրառում է ՍԴՕ 68-րդ հոդվածի 13-15-րդ կետերը[161]:

ՍԴՕ 69-րդ հոդվածի 10-րդ մասը չի անդրադառնում այն դեպքերին, երբ Սահմանադրական դատարանը վի-

[161] Այս մասին առավել մանրամասն տե՛ս բաժին 5, մաս 30՝ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին որոշումների իրավական հետևանքները (ՍԴՕ 68-րդ հոդվածի 9-րդ մասի 3-րդ կետ):

ճարկվող նորմը ճանաչում է Սահմանադրությանը համապատասխանող (ՍԴՕ 68-րդ հոդվածի 9-րդ մասի 1-ին կետ) կամ երբ սահմանում է հակասահմանադրական նորմի ուժը կորցնելու ավելի ուշ ժամկետ (ՍԴՕ 68-րդ հոդվածի 9-րդ մասի 4-րդ կետ): Եթե առաջին դեպքում դա ինքնըստինքյան հասկանալի է, քանի որ անհատական դիմումը, ըստ էության, մերժվում է, ապա հակասահմանադրական ակտի ուժը կորցնելու հետաձգման որոշման դեպքում անհատական դիմումի մերժումը ակնհայտորեն միակ հնարավոր լուծումը չէ: Անհատական դիմումի էությանը շատ ավելի համահունչ կլինի այնպիսի կարգավորումը, որը կպարտավորեցնի առնվազն դիմողի պարագայում սահմանել նույն իրավական հետևանքը, ինչ ՍԴՕ 69-րդ հոդվածի 10-րդ մասի դեպքերում: Այդպիսի լուծման պարագայում կարելի է նախատեսել, որ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման Ազգային ժողովի կողմից Սահմանադրությանը համապատասխանող նոր կարգավորումն ընդունելուց հետո[162]:

[162] Օրինակ, Լեհաստանում, որտեղ իրավակարգումները նույնպես թերի են, Սահմանադրական տրիբունալը դիմողի համար նույնիսկ թույլ է տալիս գործի անմիջական վերանայում՝ առանց սպասելու օրենսդրի նոր կարգավորմանը: Տես B. Banaszak, S. Jarosz-Zukowska, Die Verfassungsbeschwerde in Polen, in Osteuroparecht, 3-2014, էջ 299:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. Անհատական դիմումի տիպային ձև

ՍԴՕ, հոդված 24, մաս 2, կետ 1

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ

Դիմող[1]՝ Արամ Արամյան

անձնագիր՝ AA1234567, տրված 12.03.2022թ.123-ի կողմից[2]

Հասցե՝ *ք.Երևան, Աբովյան փ., 1 շ., 11 բն.*

Ծանուցման հասցե[3]՝ *ք.Երևան, Հանրապետության փ., 1 շ., 11 բն.*

Էլ. փոստ.՝ *aram.aramyan@gmail.com*[4]

Հեռ.՝ *011 123456*

ՍԴՕ, հոդված 24, մաս 2, կետ 2

[1] Տես բաժին II, մաս 7՝ Անհատական դիմում ներկայացնելու իրավասություն:

[2] Եթե դիմողը ֆիզիկական անձ է:

[3] Նշվում է այն դեպքերում, երբ տարբերվում է հաշվառման կամ գրանցման հասցեից:

[4] Սահմանադրական դատարանի նիստի օրվա և ժամի մասին դատավարության մասնակիցները և հրավիրյալներն իրենց գրավոր համաձայնությամբ կարող են ծանուցվել նաև ծանուցման այլ եղանակներով, մասնավորապես՝ ֆաքսով, էլեկտրոնային փոստով, էլեկտրոնային հաղորդագրության միջոցով, հեռագրով (ՍԴԱ, կետ 34):
Իրավաբանական անձանց ծանուցումը կատարվում է «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքի 10-րդ հոդվածով սահմանված կարգով (ՍԴԱ, կետ 35), որով նախատեսվում է պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով:

«ԱԱ» ՍՊԸ[1]

Հասցե՝ ք.Երևան, Աբովյան փ., 1 շ., 11 բն.
Գրանցման համար՝ *123456789*
ՀՎՀՀ՝ *01010101*

Դիմողի ներկայացուցիչ[2]՝
ՀՀ Փաստաբանների պալատի փաստաբան
Անի Ավետիսյան
Փաստաբանական գործունեության արտոնագիր՝ *1010,*
Հասցե՝ *ք. Երևան, Զաքյան 100*
Էլ. փոստ՝ *advocate.avetisyan@gmail.am*
Հեռ.՝ *013 010101*

ՍԴՕ, հոդված 24, մաս 2, կետ 2

ՍԴՕ, հոդված 46, մաս 3

Պատասխանող՝ ՀՀ Ազգային ժողով[3]

ՍԴՕ, հոդված 69, մաս 7

[1] Եթե դիմողը իրավաբանական անձ է:
[2] Տես բաժին III, մաս 16՝ Անհատական դիմումի ներկայացումը:
[3] Տես բաժին IV, մաս 23՝ Դատավարության մասնակիցները:

ԴԻՄՈՒՄ

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի X–րդ հոդվածը՝

Սահմանադրության X-րդ հոդվածին, համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ

ՍԴՕ, հոդված 49, մաս 5

Բարձր դատարան.

Հիմք ընդունելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը՝ սույն դիմումով խնդրում ենք որոշել ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի X-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

ՍԴՕ, հոդված 24, մաս 2, կետ 3 և 4

Ստորև ներկայացնում ենք դիմումի թույլատրելիության և հիմնավորվածության վերաբերյալ մեր փաստարկները:

I. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ[1]

1. ԵԴ/1234/01/22 գործով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը 10.01.2022թ. վճռով մերժել է դիմողի հայցը[2]:
2. ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.05.2022թ. որոշմամբ դիմողի վերաքննիչ բողոքը մերժվել է, և դատարանի 10.01.2022թ. վճիռը թողնվել է անփոփոխ:
3. 10.08.2022թ.[3] ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը մերժել է վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշման դեմ դիմողի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը[4]:

ՍԴՕ, հոդված 69, մաս 1

ՍԴՕ, հոդված 69, մաս 3

4. Գտնում ենք, որ դիմումը բավարարում է ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների հիման վրա կոնկրետ գործերով վերջնական դատական ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականությունը որոշելու վերաբերյալ դիմումներին ներկայացվող՝ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասի պահանջներին, այն է՝

   1) առկա է դատարանի վերջնական ակտը,

[1] Տես բաժին II՝ Անհատական դիմումի թույլատրելիության նախապայմանները:
[2] Տես բաժին II, ենթամաս 11.2՝ «Վերջնական դատական ակտ» հասկացությունը:
[3] Ներկայացվում է հիմնավորում առ այն, որ պահպանված է վեցամսյա ժամկետը:
[4] Ներկայացվում է հիմնավորում առ այն, որ առկա է դատարանի վերջնական ակտը, և դիմողը սպառել է ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները:

2) սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,

3) վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված՝ Դիմողի հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը,

4) պահպանված է վերջնական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո Սահմանադրական դատարան դիմելու ժամկետը:

II. ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ[1]

ՍԴՕ, հոդված 24, մաս 2, կետ 4

Դիմողը գտնում է, որ իր նկատմամբ կիրառված Քաղաքացիական օրենսգրքի X-րդ հոդվածը հակասում է Սահմանադրության X-րդ հոդվածին՝ ստորև բերվող հիմնավորումներով:

ՍԴՕ, հոդված 69, մաս 2

[1] Տես բաժին II, մաս 10՝ Հիմնական իրավունքի խախտման հնարավորությունը:

III. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԽՆԴՐԱՆՔԸ

ՍԴՕ, հոդված 24, մաս 2, կետ 4

1. Հաշվի առնելով վերը բերված փաստարկներն ու հիմնավորումները՝ գտնում ենք, որ Քաղաքացիական օրենսգրքի X-րդ հոդվածը հակասում է Սահմանադրության X-րդ հոդվածին:
2. Հաշվի առնելով վերոհիշյալը՝ Դիմողը խնդրում է Սահմանադրության X-րդ հոդվածին հակասող ճանաչել Քաղաքացիական օրենսգրքի X-րդ հոդվածը:

IV. ԴԻՄՈՒՄԻՆ ԿՑՎՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿԸ[1]

ՍԴՕ, հոդված 24, մաս 6

Կից ներկայացվում են՝

1) ներկայացուցչի լիազորությունները հաստատող լիազորագիրը[2],

ՍԴՕ, հոդված 25, մաս 1, կետ 1

[1] Տես բաժին II, մաս 15՝ Պատշաճ դիմումը:
[2] Տես բաժին III, մաս 16՝ Անհատական դիմումի ներկայացումը:

2) օրենքով սահմանված չափով պետական տուրք վճարելու վերաբերյալ անդորրագիրը կամ միջնորդություն պետական տուրքից ազատվելու մասին[1],

ՍԴՕ, հոդված 25, մաս 2, կետ 1

3) ԵԴ/1234/01/22 քաղաքացիական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի դատարանի վճռի պատճենը,

4) ԵԴ/1234/01/22 քաղաքացիական գործով վերաքննիչ դատարանի որոշման պատճենը,

5) ԵԴ/1234/01/22 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 10.08.2022թ. որոշման պատճենը՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին,

ՍԴՕ, հոդված 25, մաս 2, կետ 2

6) Արամ Արամյանի անձնագրի պատճենը[2],

ՍԴՕ, հոդված 25, մաս 2, կետ 3

7) «ԱԱ» ՍՊԸ վերաբերյալ իրավաբանական անձանց պետական ռեգիստրից քաղվածքը[3]

ՍԴՕ, հոդված 25, մաս 2, կետ 4

[1] Տես բաժին II, մաս 15՝ Պատշաճ դիմումը:
[2] Եթե դիմողը ֆիզիկական անձ է:
[3] Եթե դիմողը իրավաբանական անձ է, իսկ անհատ ձեռնարկատիրոջ պարագայում՝ պետական հաշվառման տվյալները:

8) Արամ Արամյանի ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթի պատճենը և փաստաբանական գործունեության արտոնագրի պատճենը[1],

ՍԴՕ, հոդված 25, մաս 2, կետ 5

9) դիմողի ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթի պատճենը և բարձրագույն իրավաբանական կրթությունը հավաստող փաստաթղթի պատճենը[2],

ՍԴՕ, հոդված 25, մաս 1, կետ 6

10) դիմումի հիմնավորվածությունը հավաստող ապացույցներ,

ՍԴՕ, հոդված 25, մաս 1, կետ 3

11} գործին առնչվող այլ նյութեր[3]:

ՍԴՕ, հոդված 25, մաս 1, կետ 4

11 նոյեմբերի 2022թ.

[անուն, ազգանուն, ստորագրություն[4]]

ՍԴՕ, հոդված 24, մաս 1

Արամ Արամյանի/«ԱԱ» ՍՊԸ ներկայացուցիչ

---

[1] Եթե ներկայացուցիչը փաստաբան է:

[2] Եթե ներկայացուցիչը բարձրագույն իրավաբական կրթություն ունեցող անձ է:

[3] Ներկայացվում են դիմողի հայեցողությամբ:

[4] Անհատական դիմումը ստորագրվում է դիմողի կամ նրա ներկայացուցչի կողմից:

Հավելված 2. Անհատական դիմումի ներկայացման և ժամկետները (Գծապատկեր 1)



Հավելված 3. Անհատական դիմումի քննությունը (նախնական ուսումնասիրում,տաքննություն) (Գծապատկեր 2)



Հավելված 4. Անհատական դիմումների վիճակագրություն (2018-2021 թթ.)[1]



[1] Վիճակագրական տվյալները վերցված են ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումների կատարման վիճակի վերաբերյալ տարեկան հաղորդումներից:
2018թ.՝ http://www.concourt.am/pdf/uploads/620669803045d_cc_decision_stat2018.pdf
2019թ.՝ http://www.concourt.am/pdf/uploads/62066970d0293_cc_decision_stat2019.pdf
2020թ.՝ http://www.concourt.am/pdf/uploads/62066961ef2b5_sdav-31.pdf
2021թ.՝ http://www.concourt.am/pdf/uploads/620667200a355_sdav-23.pdf

Սահմանադրական դատարանի կողմից ընդունված վերջնական որոշումների տոկոսային հարաբերությունը ներկայացված անհատական դիմումներին



Հավելված 5. Վարույթ ընդունվելուց հետո կարճված գործերի վիճակագրություն

2018թ. վարույթ ընդունված և այնուհետև կարճված գործեր՝

1) ՍԴԱՈ-30՝ դիմումն ակնհայտ անհիմն է:
2) ՍԴԱՈ-35՝ դիմումն ակնհայտ անհիմն է:
3) ՍԴԱՈ-66՝ լրացել է Սահմանադրական դատարան դիմելու համար նախատեսված վեցամսյա ժամկետը:
4) ՍԴԱՈ-76՝ ենթակա է կարճման՝ դիմումում առաջադրված հարցերի վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշման առկայության պատճառով:
5) ՍԴԱՈ-87՝ դիմողը, ձևականորեն վիճարկելով նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ըստ էության, բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ որպես Սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ:

2020թ. վարույթ ընդունված և այնուհետև կարճված գործեր՝

1) ՍԴԱՈ-49՝ դիմողները, ըստ էության, բարձրացնում են ոչ թե սահմանադրականության հարց և դրան համապատասխան ներկայացնում իրենց կողմից վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելը հիմնավորող փաստարկներ, այլ այդ դրույթի և վերջինիս առանձին եզրույթների՝ սովորական (ոչ սահմանադրական) օրենքի մակարդակում բովանդակության բացահայտման, իրավակիրառ պրակտիկայում դրանց միակերպ ընկալման ու կիրառման հարցեր, որոնք Սահմանադրական դատարանի քննության առարկա չեն կարող լինել:
2) ՍԴԱՈ - 53՝ դիմողն իրավասու չէ տվյալ հարցով դիմելու Սահմանադրական դատարան:

3) ՍԴԱՈ - 82՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողը, վիճարկելով Օրենսգրքի 339-րդ հոդվածի 5-րդ մասը, ըստ էության, բարձրացնում այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց: Դիմողն իրավասու չէ տվյալ հարցով դիմելու Սահմանադրական դատարան:
4) ՍԴԱՈ - 100՝ դիմողը չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները:
5) ՍԴԱՈ - 119՝ վիճարկվող դրույթը դիմողի նկատմամբ չի կիրառվել, ուստի գործի վարույթը ենթակա է կարճման:
6) ՍԴԱՈ - 125՝ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության, բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց:
7) ՍԴԱՈ - 187՝ վիճարկվող դրույթների սահմանադրականության մասին դիմողի հիմնավորումներն ուղղակիորեն կապված չեն վիճարկվող դրույթների սահմանադրականության վերաբերյալ Սահմանադրական դատարանի հնարավոր որևէ իրավական դիրքորոշման հետ:
8) ՍԴԱՈ – 211՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ մի կողմից՝ դիմումն ակնհայտ անհիմն է, մյուս կողմից՝ դիմողը, ըստ էության, վիճարկում է դատական ակտի կիրառման իրավաչափության հարց՝ վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականության լույսի ներքո:
9) ՍԴԱՈ - 218՝ դիմողը, ըստ էության, բարձրացնում է վիճարկվող դրույթների կիրառման իրավաչափության հարց:

2021թ. վարույթ ընդունված և այնուհետև կարճված գործեր

1) ՍԴԱՈ-80՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողը, վիճարկելով խնդրո առարկա նորմի համապատասխանությունը Սահմանադրությանը, իրականում դիմումով առաջադրում է տվյալ նորմի կիրառման իրավաչափության հարցեր:
2) ՍԴԱՈ - 100՝ անհատական դիմումներով գործի քննությունը

կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է: Սահմանադրական դատարանը վերահաստատում է իր դիրքորոշումը, որ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, երբ թեև դրանում բարձրացված հարցը ենթակա է Սահմանադրական դատարանի քննությանը, այնուամենայնիվ, դիմումը բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորված չէ:

3) ՍԴԱՈ - 181՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողը բավարար կերպով չի հիմնավորել, որ Սահմանադրության 2-րդ գլխով երաշխավորված իր համապատասխան իրավունքները խախտվել են կոնկրետ վիճարկվող նորմի կիրառման արդյունքում: Նման պայմաններում Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողը չի հիմնավորել բարձրացված հարցի (վիճարկվող իրավանորմի) և իր իրավունքների ենթադրյալ խախտման փաստի միջև անմիջական պատճառահետևանքային կապի առկայությունը, որպիսի հանգամանքը սույն անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է:
4) ՍԴԱՈ - 182՝ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է:
5) ՍԴԱՈ - 198՝ դիմողը չի հիմնավորել, թե Սահմանադրության 2-րդ գլխով երաշխավորված իր որ իրավունքն է խախտվել վիճարկվող նորմի կիրառման արդյունքում, հետևաբար նաև՝ վիճարկվող նորմի և իր իրավունքների ենթադրյալ խախտման միջև պատճառահետևանքային կապը, որպիսի պայմաններում ներկայացված դիմումն ակնհայտ անհիմն է:
6) ՍԴԱՈ - 199՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն դիմումով դիմողի կողմից չի ներկայացվել բավարար փաստարկներ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված անհատական դիմումի քննության համար անհրաժեշտ «հիմնական իրավունքների … խախտման» պայմանը հիմնավորելու համար, ինչի արդյունքում սույն դիմումով գործի վարույթը ենթակա է կարճման՝ «Սահմանադրա-

կան դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 69-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա:

7) ՍԴԱՈ - 204՝ դիմողի փաստարկների ուսումնասիրությունը վկայում է, որ վերջինս չի ներկայացրել հիմնավորումներ իր՝ Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված հիմնական իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտման և վիճարկվող դրույթի կամ դրան իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության միջև պատճառահետևանքային կապի առկայության վերաբերյալ: Նման պայմաններում դիմողը չի պահպանել վերոշարադրյալ օրենսդրական պահանջները, ուստի՝ դիմումն ակնհայտ անհիմն է:

8) ՍԴԱՈ - 211՝ Սահմանադրական դատարանի գնահատմամբ դիմողի բարձրացրած հարցը վերածվում է վերացական սահմանադրական վերահսկողության շրջանակներում քննության ենթակա հարցի: Այլ կերպ՝ դիմողը փաստացի կատարել է վերացական սահմանադրական վերահսկողությանը բնորոշ հարցադրումներ՝ չհանդիսանալով վերացական սահմանադրական վերահսկողության սուբյեկտ:

9) ՍԴԱՈ - 233՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն դիմումի շրջանակներում դիմողը, ձևականորեն վիճարկելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության սահմանադրականության հարցը, ըստ էության, բարձրացնում է դրա կիրառման իրավաչափության հարց, որը դուրս է Սահմանադրական դատարանի իրավասությունից:

ԳԼՈՒԽ 4

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼԸ

Հոդված 22. Սահմանադրական դատարանում գործի քննության առիթը

1. Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Հոդված 23. Սահմանադրական դատարան դիմելու իրավունքը

1. Սահմանադրությամբ և սույն օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան կարող են դիմել Սահմանադրության 169-րդ հոդվածով նախատեսված մարմինները և անձինք:
2. Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում նշված դեպքում Սահմանադրական դատարան կարող են դիմել նաև իրավաբանական անձինք՝ Սահմանադրության 74-րդ հոդվածին համապատասխան:

Հոդված 23. Սահմանադրական դատարան դիմելու իրավունքը

1. Սահմանադրությամբ և սույն օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան կարող են դիմել Սահմանադրության 169-րդ հոդվածով նախատեսված մարմինները և անձինք:
2. Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում նշված դեպքում Սահմանադրական դատարան կարող են դիմել նաև իրավաբանական անձինք՝ Սահմանադրության 74-րդ հոդվածին համապատասխան:

Հոդված 24. Դիմումին ներկայացվող ընդհանուր պահանջները

1. Դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրա-

վոր՝ իրավասու անձի կողմից ստորագրված: Դիմումը ներկայացվում է թղթային կամ էլեկտրոնային եղանակով:

2. Դիմումում նշվում են՝

1) Սահմանադրական դատարանի անվանումը.

2) դիմողի անունը (իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը), հաշվառման (իրավաբանական անձի դեպքում՝ գտնվելու վայրի) կամ բնակության վայրի հասցեն, եթե այն տարբերվում է հաշվառման հասցեից. եթե դիմողը հանդես է գալիս ներկայացուցչի միջոցով՝ դիմողի ներկայացուցչի անունը, հաշվառման կամ բնակության վայրի հասցեն, եթե այն տարբերվում է հաշվառման հասցեից.

3) Սահմանադրության այն հոդվածը, որը Սահմանադրական դատարան դիմելու հիմք է հանդիսանում.

4) Սահմանադրական դատարան ներկայացվող խնդրանքը և դիմողի փաստարկները՝ Սահմանադրության համապատասխան նորմերին կատարված հղումներով.

5) Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին և 5-րդ կետերով նախատեսված դեպքերում այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի անվանումը կամ պաշտոնատար անձի անունը, որն ընդունել է վիճարկվող ակտը.

6) դիմումին կցվող նյութերի ցանկը:

3. Սույն օրենքի 68-րդ, 75-րդ և 79-րդ հոդվածներում նշված գործերով պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի կողմից ներկայացվող դիմումները պետք է համապատասխանեն դիմումին ներկայացվող ընդհանուր պահանջներին, ինչպես նաև պարունակեն անհրաժեշտ քանակի ստորագրություններ:

Հոդված 25. Դիմումին կցվող նյութերը

1. Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումին կցվում են՝

1) լիազորագիրը կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող այլ փաստաթուղթ.

2) օտար լեզվով շարադրված բոլոր փաստաթղթերի՝ օրենքով սահմանված կարգով վավերացված հայերեն թարգմանությունը.

3) սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ դիմումի հիմնավորվածությունը հավաստող ապացույցները.

4) դիմողի հայեցողությամբ՝ գործին առնչվող այլ նյութեր:

2. Սույն օրենքի 69-րդ հոդվածում նշված գործերով դիմողը պարտավոր է Սահմանադրական դատարան ներկայացնել նաև՝

1) օրենքով սահմանված չափով պետական տուրք վճարելու վերաբերյալ անդորրագիրը կամ միջնորդություն պետական տուրքի վճարումից ազատելու մասին.

2) ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանի այն վերջնական դատական ակտը, որով դիմողի նկատմամբ կիրառվել է նրա կողմից վիճարկվող օրենքի դրույթը.

3) դիմողի անձը հաստատող փաստաթղթի պատճենը.

4) իրավաբանական անձի պետական գրանցման կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը.

5) որպես ներկայացուցիչ հանդես եկող փաստաբանի անձը հաստատող և փաստաբանի կարգավիճակի մասին հավաստող փաստաթղթի պատճենները.

6) որպես ներկայացուցիչ հանդես եկող՝ բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող անձի՝ անձը հաստատող փաստաթղթի և բարձրագույն իրավաբանական կրթությունը հավաստող փաստաթղթի պատճենը:

3. Դիմումն ընդունվելուց հետո դիմող կողմի նոր նյութերն ընդունվում են միայն Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշմամբ:

Հոդված 26. Դիմումի գրանցումը

1. Սահմանադրական դատարան ներկայացված դիմումը ենթակա է պարտադիր գրանցման: Գրանցված դիմումը ներկայացվում է Սահմանադրական դատարանի նախագահին: Սահմանադրական դատարան ներկայացված դիմում չհանդիսացող գրություններ-

րի գրանցման, բաշխման և քննարկման հետ կապված առանձնահատկությունները սահմանվում են Սահմանադրական դատարանի աշխատակարգով:

2. Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետին համապատասխան ներկայացված դիմումների ընդունման կարգը սահմանվում է Սահմանադրական դատարանի աշխատակարգով:

3. Եթե դիմումն ըստ ձևի չի համապատասխանում սույն օրենքի 24-րդ և 25-րդ հոդվածների պահանջներին, ապա դիմողը եռօրյա ժամկետում, իսկ Սահմանադրության 168-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված դեպքերում, ինչպես նաև սույն օրենքի 81-րդ, 84-րդ և 86-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում 24 ժամվա ընթացքում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվում է այդ մասին՝ սույն օրենքի 24-րդ և 25-րդ հոդվածների այն պահանջների մատնանշմամբ, որոնք պետք է ապահովի դիմողը:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով տեղեկացվելուց հետո դիմողը դիմումը սույն օրենքի 24-րդ և 25-րդ հոդվածների պահանջներին համապատասխանեցնելուց հետո կարող է եռօրյա ժամկետում, իսկ սույն օրենքի 81-րդ, 84-րդ և 86-րդ հոդվածներով նախատեսված գործերով՝ մեկօրյա ժամկետում վերստին ներկայացնել Սահմանադրական դատարան: Նշված ժամկետում դիմումի համապատասխանեցումը սույն օրենքի 24-րդ և 25-րդ հոդվածների պահանջներին չապահովելու դեպքում դիմումը մեկօրյա ժամկետում վերադարձվում է դիմողին՝ բողոքարկելու կարգի մասին համապատասխան նշմամբ:

5. Օրենքի պահանջներին դիմումի համապատասխանությունը դիմողը կարող է ապահովել դիմումի խմբագրված տեքստը ներկայացնելու կամ, եթե տեխնիկապես հնարավոր է, դիմումի թերությունները դիմումների ընդունման բաժնում շտկելու միջոցով: Եթե դիմումում առկա են այնպիսի թվաբանական, տեխնիկական կամ ձևական սխալներ և վրիպակներ, որոնք կարող են շտկվել դիմումների ընդունման բաժնում՝ դիմողի կողմից կամ նրա համաձայնությամբ, ապա դրանք չեն կարող դիմումը վերադարձնելու հիմք հանդիսանալ:

6. Դիմումը վերադարձնելը դիմողը կարող է եռօրյա ժամկետում, իսկ սույն օրենքի 81-րդ, 84-րդ և 86-րդ հոդվածներով նախատեսված գործերով՝ մեկօրյա ժամկետում բողոքարկել Սահմանադրական դատարան: Այդ հարցով վերջնական որոշումն ընդունվում է Սահմանադրական դատարանի երեք դատավորի կազմով ոչ ուշ, քան բողոքը ներկայացվելուց մեկ օր հետո:

7. Դատական կազմերը ձևավորվում են վիճակահանությամբ, որի անցկացման կարգը, ինչպես նաև դատական կազմերի գործունեության առանձնահատկությունները սահմանվում են Սահմանադրական դատարանի աշխատակարգով:

Հոդված 27. Դիմումի նախնական ուսումնասիրումը

1. Սույն օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված հիմքերի բացակայության դեպքում դիմումի նախնական ուսումնասիրումն իրականացվում է Սահմանադրական դատարանի աշխատակարգով սահմանված կարգով:

Հոդված 28. Գործը քննության ընդունելը

1. Գործն ընդունվում է վարույթ Սահմանադրական դատարանի աշխատակարգով սահմանված կարգով, եթե առկա չեն սույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված գործի քննությունը մերժելու հիմքերը:

2. Անհատական դիմումներով գործը քննության ընդունելու կամ դիմումի քննությունը մերժելու կարգը սահմանվում է սույն օրենքի 69-րդ հոդվածով:

3. Գործը քննության ընդունելու մասին աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարանը լուծում է նաև գործով պատասխանող կողմ ներգրավելու, գործի դատաքննությունն սկսելու ժամանակի, գործով զեկուցող նշանակելու, գործի դատաքննության ընթացակարգի հարցերը, ինչպես նաև գործը դատաքննության նա-

խապատրաստելու հետ կապված այլ հարցեր, իսկ անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին որոշմամբ՝ նաև դիմողի միջնորդության հիման վրա՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով նրան պետական տուրքի վճարումից ազատելու հետ կապված հարցերը:

4. Սահմանադրական դատարան ներկայացված անհատական դիմումներով սույն հոդվածի 3-րդ մասում նշված հարցերը լուծվում են Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշմամբ գործը քննության ընդունելու մասին դատական կազմի որոշման ընդունումից հետո՝ տասնօրյա ժամկետում:

5. Գործը քննության ընդունելու մասին որոշումը եռօրյա ժամկետում ուղարկվում է կողմերին:

Հոդված 29. Գործի քննությունը մերժելը

1. Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում՝

1) եթե դիմումում առաջադրված հարցերը ենթակա չեն Սահմանադրական դատարանին.

2) եթե դիմողն իրավասու չէ տվյալ հարցով դիմելու Սահմանադրական դատարան.

3) եթե Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-5-րդ կետերում նշված գործերով ներկայացված որևէ դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա է Սահմանադրական դատարանի որոշում.

4) եթե դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանում իրականացվում է գործի դատաքննություն.

5) եթե վիճարկվող իրավական ակտի կամ դրույթի գործողությունը դադարել է, և այն չի կիրառվել կամ ենթակա չէ կիրառման.

6) սույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերում:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով ներկայացված դիմումներով Սահմանադրական դատարանը, ելնելով գործի հանգամանքներից, կարող է կայացնել գործը քննության ընդունելու մասին պատճառաբանված աշխատակարգային որոշում:

3. Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշումը եռօրյա ժամկետում, իսկ սույն օրենքի 81-րդ, 84-րդ և 86-րդ հոդվածներով նախատեսված գործերով՝ անհապաղ, ուղարկում է կողմերին:

Հոդված 30. Դիմումը հետ վերցնելը

1. Սահմանադրական դատարան ներկայացված դիմումը դիմողը կարող է հետ վերցնել մինչև գործի դատաքննությունն սկսվելը, բացառությամբ այն դեպքերի, երբ Սահմանադրական դատարան դիմելը դիմողի պարտականությունն է:

2. Սահմանադրական դատարանը կարող է մերժել այն դիմումը հետ վերցնելը, որի հիման վրա գործ է ընդունվել քննության, եթե գտնում է, որ դիմումի առարկայի վերաբերյալ գործի քննությունը բխում է հանրային շահերից, բացառությամբ սույն օրենքով նախատեսված այն դեպքերի, երբ դիմումից հրաժարվելը հանգեցնում է գործի քննության կարճման:

Հոդված 31. Վիճարկվող իրավական ակտի կամ դրույթի գործողության կասեցումը Սահմանադրական դատարանի որոշմամբ

1. Գործը քննության ընդունելուց հետո Սահմանադրական դատարանը դիմող կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ մինչև գործի դատաքննության ավարտը կարող է կասեցնել այն իրավական ակտի կամ դրույթի գործողությունը, որի սահմանադրականությունը վիճարկվում է, եթե կասեցման մասին որոշում չընդունելը կարող է հանգեցնել անդառնալի կամ ծանր հետևանքների կողմերից մեկի կամ հանրության համար:

2. Վիճարկվող իրավական ակտի կամ դրույթի գործողության կասեցման մասին աշխատակարգային որոշումն ուժի մեջ է մտնում որոշումը Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում հրապարակելուն հաջորդող օրվանից: Այդ որոշումն անհապաղ հրապարակվում է նաև Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների http://www.azdarar.am պաշտոնական ինտերնետային կայքում, իսկ համապատասխան տեղեկատվությունը 24 ժամվա ընթացքում հաղորդվում է հանրային հեռուստատեսությամբ և ռադիոյով:

ԳԼՈՒԽ 5

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՎԱՐՈՒՅԹԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Հոդված 32. Գործի հանգամանքների ի պաշտոնե պարզումը

1. Գործի փաստական հանգամանքները Սահմանադրական դատարանը պարզում է ի պաշտոնե:

2. Սահմանադրական դատարանը կաշկանդված չէ սահմանադրական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, բացատրություններով, միջնորդություններով, առաջարկություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար:

Հոդված 33. Կոլեգիալությունը

1. Սահմանադրական դատարանը գործերը քննում և դրանց վերաբերյալ որոշումներն ու եզրակացություններն ընդունում է կոլեգիալ:

Հոդված 34. Իրավահավասարությունը

1. Սահմանադրական դատարանն ապահովում է, որ կողմերն ունենան հավասար հնարավորություններ գործի քննության ամբողջ ընթացքում, այդ թվում՝ յուրաքանչյուր կողմի ընձեռում է քննվող գործի վերաբերյալ իր դիրքորոշումը ներկայացնելու լիարժեք հնարավորություն:

Հոդված 35. Հրապարակայնությունը

1. Գործի դատաքննությունը դռնբաց է, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի:

2. Գործի դատաքննության ընթացքը նիստին ներկա անձինք կարող են գրառել, ձայնագրել:

3. Դատաքննությունը կարող է տեսագրվել և հեռարձակվել, այդ թվում՝ համացանցի միջոցով, եթե Սահմանադրական դատարանը չի ընդունել դատաքննության տեսագրման և հեռարձակման սահմանափակման մասին աշխատակարգային որոշում:

4. Դատավարության մասնակիցների մասնավոր կյանքի, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով լրատվության միջոցների և հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը Սահմանադրական դատարանի նիստերին կամ դրանց մի մասին կարող է արգելվել Սահմանադրական դատարանի դատավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված աշխատակարգային որոշմամբ:

5. Սահմանադրական դատարանի նախաձեռնությամբ կամ դատավարության որևէ կողմի միջնորդությամբ գործի դատաքննությունը դռնփակ նիստում անցկացնելու հարցը նույնպես քննվում է դռնփակ նիստում, և որոշումը կայացվում է խորհրդակցական սենյակում:

6. Դռնփակ նիստին ներկա լինելու իրավունք ունեն դատավարության կողմերը, նրանց ներկայացուցիչները, իսկ անհրաժեշտության

դեպքում՝ նաև վկաները, փորձագետները և թարգմանիչները:

7. Սահմանադրական դատարանի ըստ էության որոշման, ինչպես նաև եզրակացության եզրափակիչ մասերը բոլոր դեպքերում հրապարակվում են դռնբաց նիստում:

Հոդված 36. Գործերի քննության լեզուն

1. Սահմանադրական դատավարությունն իրականացվում է հայերենով:

2. Դատավարության մասնակիցներն իրավունք ունեն դատարանում հանդես գալու իրենց նախընտրած լեզվով, եթե ապահովում են հայերեն թարգմանությունը: Հայերենին չտիրապետող դատավարության մասնակիցներին Սահմանադրական դատարանը պետական բյուջեի միջոցների հաշվին ապահովում է անվճար թարգմանչի ծառայություններով, եթե նրանք ապացուցում են, որ բավարար միջոցներ չունեն վճարովի թարգմանություն ապահովելու համար:

3. Թարգմանիչների վարձատրության կարգը և չափը սահմանվում են Կառավարության որոշմամբ:

ԳԼՈՒԽ 6

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Հոդված 39. Գործը դատաքննության նախապատրաստելը

1. Սահմանադրական դատարանի նախագահը և զեկուցողը որոշում են դատարանի նիստին հրավիրվող անձանց շրջանակը:

2. Դիմումների և գործը դատաքննության նախապատրաստելու ժամանակ ձեռք բերված այլ փաստաթղթերի պատճենները Սահմանադրական դատարանի դատավորներին, կողմերին, իսկ անհրա-

ժեշտության դեպքում հրավիրյալներին են ուղարկվում նիստից առնվազն հինգ օր առաջ, իսկ սույն օրենքի 81-րդ, 84-րդ և 86-րդ հոդվածներով նախատեսված գործերով՝ նիստից առնվազն մեկ օր առաջ:

3. Սահմանադրական դատարանի նիստի օրվա և ժամի մասին դատավարության մասնակիցներին ու հրավիրյալներին ծանուցում է Սահմանադրական դատարանի աշխատակազմը՝ Սահմանադրական դատարանի աշխատակարգով սահմանված կարգով:

Հոդված 40. Սահմանադրական դատարանում գործերի դատաքննության ընթացակարգը

1. Սահմանադրական դատարանում գործերի դատաքննությունն իրականացվում է ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր ընթացակարգով՝ սույն օրենքին համապատասխան:

2. Գրավոր և բանավոր ընթացակարգերով գործերի դատաքննության կանոնները սահմանվում են Սահմանադրական դատարանի աշխատակարգով՝ հիմք ընդունելով սույն օրենքի ընդհանուր պահանջները:

3. Գործի դատաքննությունը գրավոր կամ բանավոր ընթացակարգով իրականացնելու մասին դատաքննության մասնակիցները տեղեկացվում են գրությամբ՝ գործը քննության ընդունելու պահից եռօրյա ժամկետում, որը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

1) գրավոր կամ բանավոր ընթացակարգով գործի դատաքննության մասին Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշման տեքստը.

2) այն ժամկետը, որի ընթացքում դատաքննության մասնակիցները պետք է ներկայացնեն իրենց գրավոր բացատրությունները, եթե դատաքննությունն իրականացվում է գրավոր ընթացակարգով, և գործի այլ նյութեր.

3) գործի դատաքննության ժամանակ մասնակիցների իրավունքների և պարտականությունների մասին հակիրճ տեղեկություններ:

Հոդված 41. Սահմանադրական դատարանում գործերը միավորելը

1. Մինչև դատաքննությունն սկսվելը Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշմամբ կարող են միավորվել և դատարանի նույն նիստում քննվել միայն նույն հարցին վերաբերող գործերը:

Հոդված 44. Սահմանադրական դատավարության մասնակիցները և հրավիրյալները

1. Սահմանադրական դատավարության մասնակիցներն են՝

1) դատավարության կողմերը՝

ա. դիմողը՝ սույն օրենքի 23-րդ հոդվածին համապատասխան՝ Սահմանադրական դատարան դիմելու իրավունք կամ պարտականություն ունեցող մարմինները և անձինք,

բ. պատասխանողը՝ սույն օրենքով նախատեսված մարմիններն ու անձինք.

2) վկան, փորձագետը և թարգմանիչը.

3) սույն օրենքով սահմանված դեպքերում՝ երրորդ անձինք, ինչպես նաև այլ անձինք, որոնք սույն օրենքով նախատեսված կարգով օգտվում են դատավարության կողմի իրավունքներից:

2. Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի, Կառավարության, Բարձրագույն դատական խորհրդի, Վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների պաշտպանի, գլխավոր դատախազի ներկայացուցիչները, որոնք ցանկանում են մասնակցել Սահմանադրական դատարանի նիստին, կարող են դիմել Սահմանադրական դատարան և նախապես ստանալ քննվող գործին առնչվող նյութերը: Դատաքննության ընթացքում նրանք կարող են հրավիրյալների կարգավիճակով պարզաբանումներ տալ Սահմանադրական դատարանի՝ իրենց ուղղած հարցերի վերաբերյալ:

Հոդված 45. Որպես պատասխանող կողմ ներգրավելը

1. Եթե դիմողը Սահմանադրական դատարան ներկայացրած դիմումում չի նշել պատասխանող կողմին կամ նշել է ոչ պատշաճ կողմի, ապա Սահմանադրական դատարանը գործը քննության ընդունելու մասին աշխատակարգային որոշմամբ դատավարությանը որպես կողմ ներգրավում է պատասխանողին կամ պատշաճ պատասխանողին, իսկ սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև հարակից պատասխանողներին:

Հոդված 46.Ներկայացուցչությունը Սահմանադրական դատարանում

1. Կողմերը Սահմանադրական դատարանում կարող են հանդես գալ անձամբ կամ ներկայացուցիչների միջոցով:

3. Սահմանադրական դատարանում որպես կողմի ներկայացուցիչ կարող են հանդես գալ նրա լիազորած անձինք՝ պաշտոնատար անձը կամ այն փաստաբանը կամ բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող անձը, որի լիազորությունները հավաստված են օրենքով սահմանված կարգով:

5. Յուրաքանչյուր կողմ Սահմանադրական դատարանում կարող է ունենալ ոչ ավելի, քան երեք ներկայացուցիչ:

Հոդված 47. Կողմերի իրավունքները

1. Կողմերն իրավունք ունեն՝

1) ծանոթանալու գործի նյութերին, անելու քաղվածքներ.

2) ներկայացնելու գործի լուծման համար նշանակություն ունեցող նյութեր.

3) գործի առնչությամբ ներկայացնելու իրենց դիրքորոշումը.

4) հարցեր տալու մյուս կողմին, նրա ներկայացուցչին, փորձագետին, վկային.

5) միջնորդություններ հարուցելու, առաջարկություններ անելու, առարկություններ ներկայացնելու:

2. Գրավոր ընթացակարգով դատաքննության ժամանակ կողմերն իրենց բացատրությունները, միջնորդությունները, առաջարկությունները և առարկությունները ներկայացնում են գրավոր Սահմանադրական դատարանի սահմանած ժամկետներում՝ մինչև գործի դատաքննությունն սկսվելը:

3. Սահմանադրական դատարանի սահմանած ժամկետը լրանալուց հետո կողմերը կարող են բացատրություններ, միջնորդություններ, առարկություններ, առաջարկություններ, ապացույցներ կամ այլ նյութեր ներկայացնել այն դեպքում, երբ այդ նյութերը կողմից անկախ պատճառներով իրեն հայտնի են դարձել դատաքննության ժամանակ, էական նշանակություն ունեն գործի լուծման համար և կնպաստեն գործի առավել արդյունավետ դատաքննությանը:

Հոդված 48. Կողմերի պարտականությունները

1. Կողմերը պարտավոր են՝

1) ներկայանալ Սահմանադրական դատարանի հրավերով.

2) բացատրություններ տալ և պատասխանել հարցերին.

3) Սահմանադրական դատարանի պահանջով ներկայացնել գործին առնչվող նյութեր.

4) ենթարկվել Սահմանադրական դատարանում գործերի քննության կանոններին և սույն օրենքի այլ պահանջների.

5) բարեխղճորեն օգտվել իրենց դատավարական իրավունքներից:

Հոդված 56. Գործի վարույթը կասեցնելը

1. Սահմանադրական դատարանը կարող է կասեցնել գործի վարույթը՝

1) եթե նշանակել է փորձաքննություն.

2) եթե տվել է դատական հանձնարարություններ.

3) եթե այլ մարմիններից կամ անձանցից անհրաժեշտ է ապացույցներ պահանջել.

4) եթե դատավարության կողմերից մեկը կամ նրա ներկայացուցիչը հիվանդության կամ այլ հարգելի պատճառով խնդրել է կասեցնել գործի վարույթը.

5) Սահմանադրական դատարանի պատճառաբանված աշխատակարգային որոշմամբ նախատեսված այլ դեպքերում:

2. Գործի վարույթը կասեցնելը հանգեցնում է սույն օրենքով, Սահմանադրական դատարանի աշխատակարգով և Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշումներով սահմանված դատավարական ժամկետների ընթացքի կասեցմանը:

3. Գործի վարույթը վերսկսվում է դրա կասեցման հիմքերը վերանալուց հետո: Մինչև կասեցման հիմքերը վերանալը գործի վարույթը վերսկսվում է Սահմանադրական դատարանի պատճառաբանված աշխատակարգային որոշմամբ:

Հոդված 57. Գործի վարույթը վերսկսելը

1. Սահմանադրական դատարանն աշխատակարգային որոշում է ընդունում գործի վարույթը վերսկսելու մասին, եթե անհրաժեշտ է համարում պարզել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքներ կամ հետազոտել նոր նյութեր:

2. Վարույթը վերսկսելուց հետո կողմերը եզրափակիչ ելույթների իրավունք ունեն՝ հետազոտված նոր հանգամանքների և նյութերի առնչությամբ:

3. Կողմերի եզրափակիչ ելույթներից հետո նախագահողը հայտարարում է գործի քննության ավարտի մասին:

Հոդված 60. Գործի վարույթը կարճելը

1. Սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը՝

1) գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են

սույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր.

2) եթե վիճարկվող իրավական ակտի կամ դրա դրույթի գործողությունը դադարել է դատաքննությունից առաջ կամ դրա ընթացքում, և այն չի կիրառվել.

3) սույն օրենքի 75-րդ, 79-րդ, 80-րդ, 82-85-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում.

4) սույն օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված այն դեպքերում, երբ կասեցման հիմք հանդիսացած հանգամանքները չեն վերացել գործի վարույթը կասեցնելու մասին աշխատակարգային որոշում ընդունելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, և գործի վարույթն այդ պայմաններում վերսկսելն անհնարին է:

ԳԼՈՒԽ 7

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱԿՏԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԱՅԴ ԱԿՏԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Հոդված 61. Սահմանադրական դատարանի ակտերը

1. Սահմանադրական դատարանը Սահմանադրության 168-րդ հոդվածով նախատեսված հարցերով, բացառությամբ 7-րդ կետով նախատեսված հարցի, ընդունում է որոշումներ, իսկ 168-րդ հոդվածի 7-րդ կետով նախատեսված հարցով՝ եզրակացություն:

2. Սահմանադրական դատարանը գործերը դատաքննության նախապատրաստելու և դատաքննության հարցերով, ինչպես նաև իր գործունեության կազմակերպման հետ կապված այլ հարցերով ընդունում է աշխատակարգային որոշումներ: Աշխատակարգային որոշումների ընդունման կարգի առանձնահատկությունները սահմանվում են Սահմանադրական դատարանի աշխատակարգով:

3. Սահմանադրական դատարանի ըստ էության որոշումները և եզրակացությունները վերջնական են և ուժի մեջ են մտնում Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում հրապարակվելու օրվանից: Սահմանադրական դատարանի որոշումներն ու եզրակացությունները պարտադիր հրապարակվում են նաև նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակման օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև Սահմանադրական դատարանի տեղեկագրում:

4. Սահմանադրական դատարանի ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

5. Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշումները պարտադիր են դատավարության մասնակիցների և դրանց այլ հասցեատերերի համար:

6. Եթե Սահմանադրական դատարանի եզրակացությունը բացասական է, ապա հարցը դուրս է գալիս իրավասու մարմնի քննարկումից:

7. Սահմանադրական դատարանի ակտերը կնքվում են Սահմանադրական դատարանի՝ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր անվանումով կնիքով:

Հոդված 62. Որոշումների և եզրակացությունների ընդունման կարգը

1. Սահմանադրական դատարանի որոշումները և եզրակացություններն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ դատավորների անվանական հարցման միջոցով:

2. Սահմանադրական դատարանի դատավորը պարտավոր է մասնակցել քվեարկությանը և քվեարկել կողմ կամ դեմ Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը:

3. Նախագահողը քվեարկում է վերջում:

4. Սահմանադրական դատարանի ըստ էության որոշումներն ընդունվում են դատավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, բացառությամբ սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերի: Սահմանադրական դատարանի ըստ էության որոշումներն ընդունվում են հանուն Հայաստանի Հանրապետության:

5. Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները դադարեցնելու և կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի որոշումներն ընդունվում են դատավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով:

6. Սահմանադրական դատարանի եզրակացություններն ընդունվում են դատավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով:

7. Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշումներն ընդունվում են Սահմանադրական դատարանի դատավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի:

8. Սահմանադրական դատարանի աշխատակարգն ընդունվում, դրանում փոփոխություններ և լրացումներ կատարվում են Սահմանադրական դատարանի՝ դատավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով ընդունված աշխատակարգային որոշմամբ: Սահմանադրական դատարանի աշխատակարգը հրապարակվում է նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակման օրենքով սահմանված կարգով:

9. Եթե Սահմանադրական դատարանը քննարկվող հարցի վերաբերյալ ձայների հավասարության հետևանքով ըստ էության որոշում կամ եզրակացություն չի ընդունում, ապա դիմումը համարվում է մերժված, որի մասին հայտարարվում է նիստերի դահլիճում:

10. Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-4-րդ և 7-րդ կետերով նախատեսված հարցերով որոշում կամ եզրակացություն ընդունելու օրվան հաջորդող տասնօրյա ժամկետում Սահմանադրական դատա-

րանի դատավորը կարող է ներկայացնել հատուկ կարծիք որոշման կամ եզրակացության ինչպես եզրափակիչ, այնպես էլ պատճառաբանական մասի վերաբերյալ, որն անհապաղ հրապարակվում է Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում, ինչպես նաև հրապարակվում է նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակման օրենքով սահմանված կարգով և Սահմանադրական դատարանի տեղեկագրում:

Հոդված 63. Որոշումներին և եզրակացություններին ներկայացվող պահանջները

1. Իրավական ակտի սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանը գնահատում է ինչպես այդ ակտը, այնպես էլ ձևավորված իրավակիրառական պրակտիկան:

2. Սահմանադրական դատարանը որոշումներ և եզրակացություններ ընդունում է միայն դիմումում նշված առարկայի վերաբերյալ:

3. Սահմանադրական դատարանի որոշման և եզրակացության հիմքում չեն կարող դրվել գործի դատաքննության ընթացքում չհետազոտված հանգամանքներ:

4. Սահմանադրական դատարանի որոշումները և եզրակացությունները հրապարակվում են դատարանի նիստում և կցվում գործին:

Հոդված 64. Որոշման կամ եզրակացության շարադրանքը

1. Սահմանադրական դատարանի որոշումը կամ եզրակացությունը, կախված գործի բնույթից, պարունակում է հետևյալ տեղեկությունները.

1) որոշման կամ եզրակացության անվանումը, ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը.

2) անհրաժեշտ տվյալներ կողմերի և դատավարության այլ մասնակիցների մասին.

3) քննվող հարցը, առիթները և հիմքերը.

4) Սահմանադրության այն հոդվածը, համաձայն որի՝ դատարանն իրավասու է քննելու տվյալ գործը.

5) դիմումի համառոտ բովանդակությունը.

6) փաստական և իրավական հանգամանքներ, որոնք հետազոտել է դատարանը.

7) Սահմանադրության և սույն օրենքի այն հոդվածները, որոնցով ղեկավարվել է դատարանը որոշում կամ եզրակացություն ընդունելիս.

8) դատարանի ընդունած որոշումը կամ եզրակացությունը հիմնավորող իրավական դիրքորոշումները, այդ թվում՝ այն փաստարկները, որոնք հաստատում կամ հերքում են կողմերի պնդումները.

9) որոշման կամ եզրակացության ձևակերպումը՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում նշելով նաև անվավեր ճանաչված իրավական ակտի կամ դրա դրույթների հետ փոխկապակցված այլ դրույթների անվավերության մասին.

10) սույն օրենքի 8-րդ գլխով նախատեսված դեպքերում՝ նշում վարչական կամ դատական ակտերի՝ օրենքով սահմանված կարգով վերանայման ենթակա լինելու մասին.

11) սույն օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի 2-րդ կետով սահմանված որոշումը ընդունելու դեպքում՝ որոշման եզրափակիչ մասում վիճարկվող ակտի կամ դրա վիճարկվող դրույթի համառոտ սահմանադրաիրավական բովանդակությունը.

12) նշում որոշման կամ եզրակացության վերջնական լինելու և հրապարակման պահից ուժի մեջ մտնելու կամ Սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմատիվ իրավական ակտի կամ դրա մի մասի իրավական ուժը կորցնելու ավելի ուշ ժամկետ սահմանվելու մասին:

2. Սահմանադրական դատարանի՝ ըստ էության որոշումը կամ եզրակացությունն ստորագրում է նիստը նախագահողը:

Հոդված 65. Որոշման կամ եզրակացության առաքումը

1. Սահմանադրական դատարանի որոշումներն ու եզրակացու-

թյունները դրանց ընդունման օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում, առաքվում են դատավարության կողմերին:

Հոդված 66.Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա իրավական ակտերում փոփոխությունների կատարումը

1. Սահմանադրական դատարանի որոշման հրապարակումից հետո՝ ոչ ուշ, քան եռամսյա ժամկետում, Կառավարությունը Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա ուսումնասիրում և անհրաժեշտության դեպքում նախաձեռնում է համապատասխան իրավական ակտեր մշակելը և Ազգային ժողով ներկայացնելը:

2. Այն դեպքերում, երբ Սահմանադրական դատարանի որոշմամբ նորմատիվ իրավական ակտն ամբողջությամբ կամ մասամբ ճանաչվել է Սահմանադրությանը հակասող, և սահմանվել է նորմատիվ իրավական ակտի կամ դրա մի մասի իրավական ուժը կորցնելու ավելի ուշ ժամկետ, ապա Կառավարությունը մինչև այդ ժամկետի ավարտը համապատասխան օրենքի նախագիծ կամ նախագծերի փաթեթ ներկայացնելու միջոցով ապահովում է որոշման կատարումը:

ԳԼՈՒԽ 8

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 68. Իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննությունը Հանրապետության նախագահի, Կառավարության, պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի և Մարդու իրավունքների պաշտպանի դիմումների հիման վրա

7. Սույն հոդվածի 1-ին մասում նշված գործերը Սահմանադրական դատարանը քննում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն

դեպքերի, երբ տվյալ գործը Սահմանադրական դատարանի գնահատմամբ ձեռք է բերել հասարակական մեծ հնչեղություն, կամ դրա բանավոր դատաքննությունը կնպաստի գործի հանգամանքների առավել արդյունավետ բացահայտմանը:

8. Սույն հոդվածի 1-ին մասում նշված գործերով Սահմանադրական դատարանը որոշում է ընդունում դիմումը մուտքագրելուց ոչ ուշ, քան վեց ամիս հետո: Սահմանադրական դատարանի պատճառաբանված աշխատակարգային որոշմամբ գործի քննության ժամկետը կարող է երկարաձգվել, բայց ոչ ավելի, քան երեք ամսով:

9. Սույն հոդվածի 1-ին մասում նշված գործերով Սահմանադրական դատարանը կարող է ընդունել հետևյալ որոշումներից մեկը.

1) վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին.

2) վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը Սահմանադրական դատարանի մեկնաբանությամբ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին.

3) վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին.

4) վիճարկվող նորմատիվ իրավական ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող ճանաչելու և նորմատիվ իրավական ակտի կամ դրա մի մասի իրավական ուժը կորցնելու ավելի ուշ ժամկետ սահմանելու մասին:

10. Որևէ նորմատիվ իրավական ակտի սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանը պարզում է նաև այդ ակտի վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված տվյալ ակտի այլ դրույթների սահմանադրականությունը: Հավաստիանալով վիճարկվող դրույթների հետ փոխկապակցված տվյալ նորմատիվ իրավական ակտի այլ դրույթների՝ Սահմանադրությանը հակասելու մեջ՝ Սահմանադրական դատարանը կարող է Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչել նաև այդ դրույթները:

11. Վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին որոշում ընդունվե-

լու դեպքում այն իրավական ուժը կորցնում է Սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու պահից, բացառությամբ սույն հոդվածի 13-րդ և 15-րդ մասերով սահմանված դեպքերի: Այդ ակտերի վրա հիմնված՝ Սահմանադրական դատարանի որոշման ընդունմանը նախորդող ժամանակահատվածում կատարված վարչական կամ դատական ակտերը վերանայման ենթակա չեն, իսկ չկատարված վարչական և դատական ակտերի կատարումը Սահմանադրական դատարանի որոշումը հրապարակելուց հետո անհապաղ դադարեցվում է իրավասու վարչական մարմնի կամ դատարանի որոշմամբ:

12. Անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտի կատարումն ապահոված այլ նորմատիվ իրավական ակտերի համապատասխան դրույթները կորցնում են իրենց իրավաբանական ուժը՝ վիճարկվող ակտի ուժը կորցնելու հետ միաժամանակ:

13. Սույն հոդվածի 9-րդ մասի 3-րդ կետում նշված որոշումը Սահմանադրական դատարանն իրավասու է տարածելու նաև այդ որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա, եթե այդպիսի որոշում չընդունելը կարող է հանրության կամ պետության համար առաջացնել ծանր հետևանքներ:

14. Սույն հոդվածի 13-րդ մասում նշված դեպքում Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտի, ինչպես նաև այդ ակտի կատարումն ապահոված այլ նորմատիվ իրավական ակտերի վրա հիմնված՝ Սահմանադրական դատարանի որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող երեք տարիների ընթացքում կատարված վարչական կամ դատական ակտերը կողմի դիմումի հիման վրա ենթակա են վերանայման վարչական կամ դատական ակտն ընդունած մարմնի կողմից՝ օրենքով սահմանված կարգով:

15. Քրեական կամ վարչական պատասխանատվություն սահմանող օրենքի վիճարկվող դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին որոշում ընդունվելու դեպքում իրավական ուժը կորցնում է իր ուժի մեջ մտնելու պահից, իսկ դրա կիրառման վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշման ուժի մեջ մտնե-

լուն նախորդող ժամանակահատվածում ընդունված դատական, իսկ կողմի դիմումի հիման վրա՝ նաև վարչական ակտերը ենթակա են վերանայման օրենքով սահմանված կարգով:

16. Սահմանադրական դատարանը սույն հոդվածի 9-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված որոշումները սույն օրենքով սահմանված կարգով ներկայացված համապատասխան դիմումի հիման վրա կարող է վերանայել, եթե՝

1) փոփոխվել է Սահմանադրության՝ տվյալ գործով կիրառված դրույթը, կամ

2) ի հայտ է եկել տվյալ գործով կիրառված՝ Սահմանադրության դրույթի այնպիսի նոր ընկալում, որի առկայությամբ նույն հարցի վերաբերյալ կարող է ընդունվել Սահմանադրական դատարանի այլ որոշում, և տվյալ հարցն ունի սկզբունքային սահմանադրաիրավական նշանակություն:

17. Սույն հոդվածի 16-րդ մասում նշված հիմքով գործը քննության ընդունելու վերաբերյալ Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշումն ընդունվում է Սահմանադրական դատարանի դատավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով:

18. Սույն հոդվածի 16-րդ մասում նշված գործերի քննությունը չի կարող մերժվել սույն օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով, եթե առկա են Սահմանադրական դատարանի որոշումը վերանայելու՝ սույն հոդվածի 16-րդ մասով նախատեսված հիմքերը:

19. Եթե Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կամ դրա որևէ դրույթի՝ Սահմանադրական դատարանի որոշման հրապարակման պահին Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելն անխուսափելիորեն կառաջացնի այնպիսի ծանր հետևանքներ պետության կամ հանրության համար, որոնք կխաթարեն այդ պահին տվյալ նորմատիվ իրավական ակտի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, ապա Սահմանադրական դատարանը, տվյալ ակտը ճանաչելով Սահմանադրությանը հակասող, իր որոշմամբ հետաձգում է այդ ակտի իրավական ուժը կորցնելը:

20. Նորմատիվ իրավական ակտի ուժը կորցնելու հետաձգումը պետք է համարժեք լինի այն ժամանակահատվածին, որի ընթացքում հնարավոր և անհրաժեշտ է ձեռնարկել սույն հոդվածի 19-րդ մասում նշված հետևանքները կանխելուն ուղղված միջոցները:

Հոդված 69.Կոնկրետ գործերով վերջնական դատական ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականությունը որոշելու վերաբերյալ գործերի քննությունը ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների հիման վրա

1. Սույն հոդվածում նշված գործերով դիմում (այսուհետ՝ անհատական դիմում) կարող է ներկայացնել ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները, և վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

2. Անհատական դիմումը պետք է հղումներ պարունակի նորմատիվ իրավական ակտի այն դրույթներին, որոնց սահմանադրականությունը վիճարկվում է, և հիմնավորումներ, որ նորմատիվ իրավական ակտի հակասությունը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

3. Անհատական դիմումները կարող է Սահմանադրական դատարան ներկայացնել ֆիզիկական կամ իրավաբանական անձը դատական պաշտպանության բոլոր միջոցները սպառելուց՝ վերջնական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան վեց ամիս հետո:

4. Անհատական դիմումներով գործը քննության ընդունելու կամ գործի քննությունը մերժելու վերաբերյալ որոշումը, բացառությամբ սույն օրենքի 68-րդ հոդվածի 16-րդ մասով նախատեսված դեպքերի, ընդունվում է Սահմանադրական դատարանի երեք դատավորի կազմով՝ Սահմանադրական դատարանի անունից:

5. Անհատական դիմումներով գործի քննությունը, ի լրումն սույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, կամ դիմողը չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները, կամ լրացել է Սահմանադրական դատարան դիմելու համար սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված վեցամսյա ժամկետը:

6. Անհատական դիմումներով գործի քննությունը մերժելու մասին սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված կարգով ընդունված որոշումը պետք է լինի պատճառաբանված: Այն պետք է ընդունվի միաձայն, հակառակ դեպքում գործը քննության ընդունելու հարցը Սահմանադրական դատարանը վերստին քննում և լուծում է ամբողջ կազմով, իսկ այդ հարցով որոշումն ընդունվում է անհատական դիմումը մուտքագրելու օրվանից ոչ ուշ, քան երեք ամիս հետո:

7. Սույն հոդվածում նշված գործերով որպես պատասխանող կողմ դատավարությանը ներգրավվում է համապատասխան նորմատիվ իրավական ակտն ընդունած մարմինը, բացառությամբ սույն օրենքի 68-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքի:

8. Սույն հոդվածում նշված գործերով Սահմանադրական դատարանը որոշում է ընդունում դիմումը մուտքագրելուց ոչ ուշ, քան երեք ամիս հետո: Սահմանադրական դատարանի պատճառաբանված աշխատակարգային որոշմամբ գործի քննության ժամկետը կարող է երկարաձգվել, բայց ոչ ավելի, քան երեք ամսով:

9. Անհատական դիմումների ընդունման և նախնական ուսումնասիրության կարգը սահմանվում է Սահմանադրական դատարանի աշխատակարգով:

10. Սույն հոդվածում նշված գործերով՝ նորմատիվ իրավական ակտի՝ դիմողի նկատմամբ կիրառված դրույթը Սահմանադրությա-

նը հակասող և անվավեր ճանաչվելու դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանը, այդ դրույթն իր մեկնաբանությամբ ճանաչելով Սահմանադրությանը համապատասխանող, միաժամանակ գտել է, որ այն նրա նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ, դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով:

11. Սույն հոդվածի 10-րդ մասը տարածվում է նաև այն անձանց վրա, որոնք Սահմանադրական դատարանում դիմումը մուտքագրվելու օրվա դրությամբ դեռևս պահպանել էին նույն հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրենց իրավունքը, սակայն չէին դիմել Սահմանադրական դատարան[2]:

12. Սահմանադրական դատարան դիմելու իրավունքի պահպանված լինելու հարցը լուծելիս սույն հոդվածի 11-րդ մասում նշված անձանց նկատմամբ սույն օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերը չեն կիրառվում:

13. Սույն հոդվածում նշված գործերին առնչվող բոլոր այլ հանգամանքների քննության և այդ գործերով որոշումներ ընդունելու ժամանակ կիրառվում են սույն օրենքի 68-րդ հոդվածի 7-20-րդ մասերի կանոնները:

---

[2] 69-րդ հոդվածի 11-րդ մասն այն մասով, որ չի նախատեսում այն անձանց նկատմամբ կայացված վերջնական դատական ակտերի՝ նոր հանգամանքի հիմքով վերանայում, որոնք դատական պաշտպանության միջոցներն սպառել են Սահմանադրական դատարանում այլ անձի դիմումը մուտքագրվելուց հետո, սակայն նրանց նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ այլ անձի դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանում գործի դատաքննություն սկսելու օրվա կամ այդ հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշման հրապարակման օրվա դրությամբ լրացած չի եղել նրանց կողմից Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու համար սահմանված վեցամսյա ժամկետը, ճանաչվել է Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներին հակասող և անվավեր (29.03.2022 ՍԴՈ-1645 որոշմամբ):

Հավելված 7. «Սահմանադրական դատարանի աշխատակարգ» որոշում (քաղվածք)[3]

ԳԼՈՒԽ 3

ԴԻՄՈՒՄԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԿԱՐԳԸ

...

27. Դիմումի նախնական ուսումնասիրումը պետք է ավարտվի դիմումը մուտքագրելուց հետո ոչ ուշ, քան հետևյալ ժամկետներում.

... 2) «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, 71-րդ և 72-րդ հոդվածների 1-ին և 2-րդ մասերում, 73-րդ հոդվածի 1-ին մասում, ինչպես նաև 75-րդ հոդվածի 1-ին մասում նշված գործերով դիմումներինը՝ 20-օրյա ժամկետում:

ԳԼՈՒԽ 7

ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԳՈՐԾԵՐԻ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԿԱՆՈՆՆԵՐ

63. Գրավոր ընթացակարգով գործերի դատաքննության դեպքերում կողմերն իրենց բացատրությունները, միջնորդությունները, առաջարկությունները և առարկությունները Սահմանադրական դատարան են ներկայացնում գրավոր՝ Սահմանադրական դատարանի նիստի օրվա և ժամի մասին ծանուցվելուց հետո 30-օրյա ժամկետում, եթե Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշմամբ այլ ժամկետ սահմանված չէ:

---

[3] Քաղվածքում ներկայացված են Սահմանադրական դատարանի աշխատակարգի (2018թ. հուլիսի 9-ի ՍԴԱՈ-1-Ն որոշում)՝ անհատական դիմումին վերաբերելի դրույթները՝ 2022թ. նոյեմբերի 30-ի դրությամբ:

66. Գրավոր ընթացակարգով գործի դատաքննության ցանկացած փուլում Սահմանադրական դատարանը՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում, կարող է աշխատակարգային որոշում ընդունել բանավոր դատաքննության անցնելու մասին, բացառությամբ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 71-րդ և 86-րդ հոդվածներով սահմանված դեպքերի:

67. Բանավոր դատաքննության անցնելու վերաբերյալ Սահմանադրական դատարանին միջնորդություն ներկայացնելու իրավունք ունեն Սահմանադրական դատարանի դատավորները և դատավարության կողմերը:

69. Բանավոր դատաքննության անցնելու վերաբերյալ կողմերը պետք է ծանուցվեն Սահմանադրական դատարանի նիստից առնվազն 5 օր առաջ, իսկ հրատապ դեպքերում՝ անհապաղ:

ԳԼՈՒԽ 8

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ, ՆԱԽՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ, ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

72. Սահմանադրական դատարան ներկայացված անհատական դիմումները գրանցվում են աշխատակազմի իրավասու ստորաբաժանման անհատական դիմումների գրանցման մատյանում:

74. Էլեկտրոնային եղանակով ներկայացված անհատական դիմումները գրանցվում են աշխատակազմի իրավասու ստորաբաժանման անհատական դիմումների գրանցման էլեկտրոնային մատյանում:

75. Գրանցված անհատական դիմումները ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում ներկայացվում են աշխատակազմի ղեկավարին:

76. Աշխատակազմի իրավասու ստորաբաժանումը «Սահմա-

նադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված եռօրյա ժամկետը լրանալուց առնվազն 1 օր առաջ աշխատակազմի ղեկավարին տեղեկանք է ներկայացնում անհատական դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ և 25-րդ հոդվածների պահանջներին համապատասխանության վերաբերյալ:

77. Տեղեկանքն ստանալուց ոչ ուշ, քան 1 օր հետո աշխատակազմի ղեկավարը լուծում է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ և 25-րդ հոդվածների պահանջներին անհատական դիմումի համապատասխանեցման մասին դիմողին տեղեկացնելու հարցը:

78. Աշխատակազմի ղեկավարի հանձնարարությամբ աշխատակազմի իրավասու ստորաբաժանումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված եռօրյա ժամկետում դիմողին տեղեկացնում է դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ և 25-րդ հոդվածների պահանջներին համապատասխանեցնելու անհրաժեշտության մասին՝ նշելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ և 25-րդ հոդվածների այն պահանջները, որոնք պետք է ապահովի դիմողը:

79. Անհատական դիմումը՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ և 25-րդ հոդվածների պահանջներին համապատասխանեցնելն ապահովում է դիմողը՝ այդ մասին տեղեկացվելուց հետո՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում:

80. Դիմումում թույլ տրված սխալները վերացնելու և այն սահմանված ժամկետում վերստին ներկայացվելու դեպքում դիմումն ընդունված է համարվում սկզբնական ներկայացման օրը:

81. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետի խախտմամբ ներկայացված անհատական դիմումն աշխատակազմի իրավա-

սու ստորաբաժանման կողմից հետ է ուղարկվում դիմողին՝ աշխատակազմի ղեկավարի գրությամբ:

82. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետի պահպանմամբ վերստին ներկայացված դիմումը գրանցվում է աշխատակազմի իրավասու ստորաբաժանման անհատական դիմումների գրանցման մատյանում:

83. Դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ և 25-րդ հոդվածների պահանջներին համապատասխանեցնելու անհրաժեշտության կամ այն վերադարձնելու մասին դիմողը տեղեկացվում է էլեկտրոնային (հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե) կամ փոստային կապի միջոցներով:

84. Դիմողը համարվում է դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ և 25-րդ հոդվածների պահանջներին համապատասխանեցման անհրաժեշտության կամ այն վերադարձնելու մասին տեղեկացված՝ էլեկտրոնային կամ փոստային կապի համապատասխան միջոցով ծանուցվելու պահից:

85. Անհատական դի մումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ և 25-րդ հոդվածների պահանջներին համապատասխանեցնելու անհրաժեշտության բացակայության կամ համապատասխանեցման ուղարկված անհատական դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ և 25-րդ հոդվածների պահանջներին համապատասխանեցման կամ վերադարձված անհատական դիմումի վերաբերյալ բողոքարկման արդյունքում դատական կազմի կողմից դիմումն ընդունելու մասին որոշում ընդունվելու դեպքում անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունն իրականացնում է սույն գլխով սահմանված կարգով ձևավորված դատական կազմը:

86. Սույն գլխով սահմանված կարգով ձևավորված դատական կազմերը քննում են նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով ներկայացված բողոքները:

88. Անհատական դիմումներով դատական կազմը ձևավորվում է վիճակահանությամբ:

96. Դատական կազմի նախագահողի բացակայության դեպքում նրան փոխարինում է դատական կազմի տարիքով ավագ դատավորը:

97. Սահմանադրական դատարանի նախագահը սահմանում է դատական կազմի փոփոխության և դատական կազմը նախագահելու ժամանակացույց:

98. Մինչև դատական կազմի նիստը աշխատակազմի իրավասու ստորաբաժանումը դիմումը քննության ընդունելու հարցի վերաբերյալ իր եզրակացությունը ներկայացնում է դատական կազմին:

(98-րդ կետը փոփ. 28.02.20 ՍԴԱՈ-47)

99. Դատական կազմի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում են դատական կազմի բոլոր երեք դատավորները: Դատական կազմի նիստում քվորումի բացակայության դեպքում դատական կազմի նախագահողը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ նրան փոխարինող դատավորն այդ մասին անհապաղ տեղեկացնում է Սահմանադրական դատարանի նախագահին, որը կա՛մ համապատասխան դատավորին հետ է կանչում արձակուրդից (եթե բացակայությունը կապված է արձակուրդում գտնվելու հետ), կա՛մ տեղեկացվելուց հետո դատական կազմում չընդգրկված դատավորներից նշանակում է փոխարինող:

(99-րդ կետը փոփ. 28.02.20 ՍԴԱՈ-47)

100. Դատական կազմի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության՝ դատական կազմի նախագահողի կողմից՝ առնվազն երկու օր առաջ տեղյակ պահելով դատական կազմի դատավորներին:

101. Դատական կազմի նախագահողը նախապատրաստում, հրավիրում և նախագահում է դատական կազմի նիստերը, դատական կազմին է ներկայացնում դատական կազմի նիստում քննարկման ենթակա հարցերը, Սահմանադրական դատարանի նախագահին անհապաղ տեղեկացնում է դատական կազմում ընդգրկված դատավորներից որևէ մեկի՝ դատական կազմի նիստից բացակայության մասին՝ նրան փոխարինողի հարցը լուծելու նպատակով:

102. Անհրաժեշտության դեպքում դատական կազմի նիստերին նախագահողը կարող է հրավիրել դիմողին (վերջինիս ներկայացուցչին), աշխատակազմի աշխատակիցներին:

103. Եթե դատական կազմի նախագահողը գտնում է, որ դատական կազմի նիստում կոնկրետ անհատական դիմումի նախնական ուսումնասիրության անհրաժեշտություն չկա, ապա տվյալ անհատական դիմումի վերաբերյալ կազմակերպվում է գրավոր քվեարկություն, եթե դատական կազմի դատավորներից որևէ մեկը չի առարկում գրավոր քվեարկության դեմ:

104. Գրավոր քվեարկությունն իրականացվում է ընդհանուր էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության միջոցով:

105. Գրավոր քվեարկություն անցկացնելու նպատակով դատական կազմի նախագահողը դատական կազմի դատավորներին տրամադրում է քվեարկության դրվող որոշման նախագիծը:

106. Գրավոր քվեարկությանը դատական կազմի դատավորների մասնակցությունը պարտադիր է:

107. Գրավոր քվեարկության վերաբերյալ դատական կազմի դատավորներն իրենց դիրքորոշումը ներկայացնում են նախագահողի կողմից նշված ժամկետում: Սահմանված ժամկետում դատական կազմի դատավորի կողմից դիրքորոշում չներկայացվելու դեպքում համարվում է, որ նա քվեարկել է կողմ:

(107-րդ կետը փոփ. 28.02.20 ՍԴԱՈ-47)

108. Դատական կազմի նախագահողն ամփոփում է քվեարկության արդյունքները և ընդունված որոշումը ներկայացնում աշխատակազմի ղեկավարին՝ դիմողին ընդունված որոշման մասին ծանուցելու նպատակով:

109. Անհատական դիմումով գործը քննության ընդունելու կամ գործի քննությունը մերժելու վերաբերյալ որոշումը դատական կազմն ընդունում է Սահմանադրական դատարանի անունից՝ միաձայն:

110. Դատական կազմը կարող է ընդունել հետևյալ որոշումներից որևէ մեկը.

1) անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին,

2) անհատական դիմումով գործի քննությունը մերժելու մասին,

3) անհատական դիմումով գործը մասամբ քննության ընդունելու և գործի քննությունը մասամբ մերժելու մասին:

112. Անհատական դիմումով գործը քննության ընդունելու կամ գործի քննությունը մերժելու հարցով դատական կազմում միաձայնության բացակայության դեպքում դատական կազմի նախագահողը քվեարկության արդյունքները ներկայացնում է Սահմանադրական դատարանի նախագահին, որը քվեարկության արդյունքները ներկայացնելու օրվանից հետո՝ ողջամիտ ժամկետում, հրավիրում է Սահմանադրական դատարանի աշխատակարգային նիստ՝ անհատական դիմումով գործը քննության ընդունելու կամ գործի քննությունը մերժելու հարցը վերստին քննարկելու և լուծելու համար:

(112-րդ կետը փոփ. 28.02.20 ՍԴԱՈ-47)

113. Դատական կազմի կամ Սահմանադրական դատարանի կողմից անհատական դիմումով գործի քննությունը մերժելու մասին որոշում ընդունելուց հետո դիմողի՝ նույն հարցով Սահմանադրական դատարան վերստին դիմելու դեպքում, եթե չեն վերացվել «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքերը, ապա նրան աշխատակազմի ղեկավարի գրությամբ վերստին ուղարկվում է համապատասխանաբար դատական կազմի կամ Սահմանադրական դատարանի՝ նույն հարցով ընդունված որոշման պատճենը:

ԳԼՈՒԽ 9

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

125. Քվեարկության արդյունքում ձայների հավասարության դեպքում աշխատակարգային որոշումը համարվում է չընդունված:

Վարդան Պողոսյան
Նորա Սարգսյան
Հովհաննես Օդաբաշյան

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԳԱՆԳԱՏ

(գիտագործնական ձեռնարկ)

Սրբագրիչ՝
Արտակ Վարդանյան

Տպաքանակը՝ 300 օրինակ
Հրատարակիչ «Պրոֆիլ Մեդիա» ՍՊԸ
Հասցե՝ Երևան, Խաղաղ Դոնի 1-196
Հեռախոս՝ (+374) 55 49 64 04, 95 49 64 04
Էլփոստ՝ infoprofil.am@gmail.com

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԳԱՆԳԱՏ
(գիտագործնական ձեռնարկ)

© «ԼՈՒՅՍ»
Մշակութային, գիտական, կրթական հիմնադրամ, 2023

ՀՀ, Երևան, Փ. Բուզանդի 3
(+374) 12 40 00 04
www.luys.am

ISBN 978-9939-1-1609-9